


ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԿ ԱՅԼ ԴԱՐԱԲԱԴ...



Երևան
«Անտարես»
2009

ՀՏԳ- 325
ԳՄԴ- 66.3(2Հ)
Հ 422

Հարությունյան Վլադիմիր:
Հ 422 Սեկ այլ Ղարաբաղ... (Վ. Հարությունյան): -Եր.: «Անտարես»,
2009 - 88 էջ

Հեղինակը ներկայացնում է Ղարաբաղն ու նրա ազատագրմանը
միտված դեպքերն ու իրադարձությունները, ինչպես որ ընկալվել են
դրանք իր կողմից:

ԳՄԴ- 66.3(2Հ)

ISBN 978-9939-51-109-2



© «Անտարես», 2009թ.

**Նվիրվում է ազատ Արցախի առաջին դեկավար,
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Գերագույն խորհրդի առաջին նախագահ՝**

*Արթուր Ասլանի Սկրտչյանի
50-ամյակին*

Գուցե սուտ է Նահիրին, Նահիրին չկա...

Գուցե-հուշ է միայն...

Գուցե ճիշտ է, որ միրաժ է Նահիրին.

Ֆիկցիա, մի.ֆ... ուղեղային մորմոք.

սրտի հիվանդություն....

Եղիշե Չարենց «Երկիր Նահրի»

ԿԱՐՍԸ ՏԵՄՆԵԼ ՈՒ Ե՞Տ ԴԱՌՆԱԼ...

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով...

Եղիշե Չարենց «Տաղ անձնական», 1919թ.

...Մազմանովը լսեց Դարսի վտանգը, տեսավ կքայքայվի
ամբողջ բանակը:

Իր կողքից քաշեց ատրճանակը, իզուր գոհ տվեց իր ջահել կյանքը:

Մազմանովի դիակը բերին ըստանցին, էս անիրավ հայերը
թողին գնացին:

Տո անաստված հայեր, բոլորդ կոտորվեք, Մազմանովի դիակը
գերի մի՛ թողեք:

Հայեր խառնված լցվին վագոնը՝ Մազմանովի դիակը թողին բալկոնը...

**Շողովրդական երգ, ծնվել է Կարսի անկումից հետո:
1960-ականներին կատարում էր նաև Աշուղ Արտաշը**

...Ուստա Օնե՛ս, ֆայտոնդ բե՛ր, քշե՛ էրթանք հասնինք Դարս,
Խռովել եմ ես էս քաղքեն՝ Դարսե՛ն պտի բերեմ հարս:

«Կայարանի Օնիկի» երգը, Լեւինական, 1960-70-ականներ

...Ղա՛րս, Ղա՛րս, Ղա՛րս, Հայաստանի հա՛րս,
Ե՞րբ պիտի դու է՛լի նորից տու՛ն վերադառնաս:

**Ծագումն անհայտ է: 1970-80-ականներին կարելի էր լսել
ռեստորաններում, հարսանիքներում և ավտոկայաններում**

Ի՞նչ բան է պատմությունը, անցյալը, անցյալի դասերն ու պատմական
հիշողությունը... Ինչպե՞ս են ազդում դրանք ազգի ներկայի և ապագայի
վրա... «Դասական» այս հարցերին փորձել են պատասխանել բոլոր ժա-
նանակներում և բոլոր ազգերը՝ ինչպես դիպուկ աֆորիզմներով, այնպես
էլ՝ բազմահատոր ու հաստատվոր ուսումնասիրություններով: Մեզանում,
երևի թե, սույն հարցին անդրադարձել են ավելի հաճախ, քան որևէ մեկ
այլ ազգի միջավայրում: Բայց և այնպես...

Կեթանք Ղարսը տենանք կզանք

...Մոսկովյան հեռուստաալիքներից մեկով ցուցադրում էին Ֆրանսիայի դեսպանատան կողմից տրամադրված մի նյութ՝ նվիրված այսօրվա ֆրանսիական բանակի առօրյային: Ի զարմանս մեզ պարզվեց, որ առաջատար եվրոպական այդ երկրի բանակում, նրա մարտունակության ապահովման համար չափազանց կարևոր և առաջնային դեր է հատկացվում անձնակազմի հետ տարվող ռազմահայրենասիրական դաստիարակչական աշխատանքներին: Կամ, մեզ համար ավելի պարզ (մաս՝ «հարազատ») լեզվով ասած՝ «քաղաքապամունքներին»: Ռեպորտաժը վարում էին սովորական մի գորամասից, որի անցած մարտական ուղին գրեթե նույնքան երկար էր, որքան մեր՝ հայերիս, պետականությունից զուրկ պայմաններում, դարերով ձգված գոյատևման ժամանակահատվածը: Նորակոչիկների ծառայությունն այստեղ սկսվում էր գորամասում գործող նրա մարտական փառքի թանգարանն այցելելու պարտադիր և հանդիսավոր արարողությունից: Խումբն ուղեկցող հաղորդավարուհին հարցով դիմեց թանգարանի տնօրենին՝ նույն գորամասի սպային, թե այս ամենն այսօր՝ բաց սահմանների, Եվրոպայում ընթացող բազմաբնույթ ինտեգրացիոն գործընթացների ֆոնի վրա մի տեսակ ավելորդություն և, նույնիսկ, անախրոնիզմ չէ՞ արդյոք: Երիտասարդ սպան խիստ զարմացավ, հետո նաև զայրացավ և, որքան որ այդ պահին թույլ էր տալիս նրա ֆրանսիական նրբանկատությունը կնոջ հանդեպ, պատասխանեց մոտավորապես հետևյալը. «Ցանկացած ազգ, ցանկացած ժողովուրդ՝ իր պատմության ընթացքի ո՞ր փուլում էլ որ գտնվի, պարտավոր է իմանալ և հիշել իր անցյալը: Հակառակ դեպքում նա այն նորից կվերասպրի: Իսկ անցյալը, հարզելիներս, դա միայն հաղթանակներ չեն: Եվ կարող եմ վստահեցնել Ձեզ, մահամ, որ հենց անցյալի իմացության և անցյալից ճիշտ դասեր քաղելու շնորհիվ է, որ մենք՝ ֆրանսիացիներս, այսօրվա աշխարհում գտնվում ենք բավականին առաջատար դիրքերում»: Եթե անգամ զինվորականի ամբողջ ասածի մեջ առկա էին վիճելի որոշ «դրույթներ», համենայնդեպս՝ ոչ մեզ համար:

Հրաժեշտ տալով ֆրանսիական գորամիավորմանը՝ տեղափոխվեցինք Հայաստան, ուր «Հ1»-ը մայրաքաղաքի փողոցներում կազմակերպել էր բավականին հետաքրքիր մի հեռուստահարցում. «Ինպե՞ս եք Ղուբ վերաբերվում հայ-թուրքական սահմանի բացմանը»: Պատասխանները, ինչպես և լինում է նման դեպքերում, տարաբնույթ էին. մի մասը՝ կտրուկ մերժողական, նրա տրամագծորեն հակառակ հատվածը՝ մեղմ ու հանդուրժող և, կարելի է ասել, նույնիսկ պատրաստակամության ու սիրահոժարության երանգներով: Իսկ այդ ոչ այնքան էլ հասարակ հարցի պատասխանների հիմնական մասը պարզորոշ հուշում էր, որ այո, մեզանում իրոք առկա է ցանկությունը՝ առանց թշնամանքի դրսևորման հարաբերություններ կառուցել մեր ոչ այնքան էլ բարյացակամ հարևանի հետ: Բայց միաժամա-

նակ շեշտվում էր, որ այդ ամենին հասնելու համար ամենևին էլ որպես «պատմական անհրաժեշտություն» և «ճակատագրական անխուսափելիություն» չպետք է ամրագրվեն ինչ-ինչ, մեզ համար բացարձակապես անընդունելի զիջումներ: Բայց մի պատասխան, որն հնչեցրեց ժամանակից շուտ ու շատ գիրացած, ցանկացած պահին ուտելու պատրաստ մի երիտասարդ, չափազանց ուշագրավ էր և կասեինք՝ նաև խորհրդանշական:

Հարց. «Ինչպե՞ս եք Դուք վերաբերվում հայ-թուրքական սահմանի բացմանը»:

Պատասխան. «Ի՛նչո՞ւ վատ կըլնի՞, որ: Կեթանք Ղարսը տենանք կզանք: Համ էլ հենց Ղա՛րսում մի հատ Ղա՛րսի խորոված կուտենք»:

Կարելի էր, իհարկե, ասածը ընդունել որպես սրամտելու անհաջող մի փորձ, կամ էլ, պարզապես՝ «ջահելական մի հիմարություն», և այդքանով էլ եզրափակվել: Նժամ մի՛ իրոք որ հիմարության, հիշում եմ, հանդիպեցի մայրաքաղաքային «հեղափոխական» բռնեմայի հավաքներից մեկում: Երկրաշարժից անցած կլիներ ամիս, ամիս ու կես: Հավաքին ներկա Գյումրու իրավիճակից «լավատեղյակ» և այդ քաղաքի «գիտակներից» մեկը ճամարտակում էր. «Ի՛նչ ուզում եք ասեք, հալալ ա դրանց թասիբին, հա՛լալ ա: Ժաշքից տասը օր հետո խաշխանեն արդեն աշխատում էր»: Երբ հավաքվածները հարցական հայացքներով նայեցին դեպի ինձ, ես սկսեցի ծիծաղել և հռռռոցը շուտով բռնեց ողջ դահլիճը, ինչից հետո չհաջողված «էթնոհոգեբանը» գերադասեց լքել հավաքը: Բայց այս թմբլիկ ռեսպոնդենտի պարագայում իրականությունն այլ էր: Հեռուստաէկրանից նրա կողմից հնչեցրածը դա նույնիսկ գուտ անձնական կարծիք էլ չէր, այլ մեզանում գոյություն ունեցող որոշակի մտածելակերպի և նաև աշխարհընկալման ու դիրքորոշման շատ հստակ արտահայտում ու դրսևորում:

...90-ականների սկիզբն էր: «Ձիպագգի» ինքնաշարժերը դեռ նոր-նոր էին մուտք գործում Հայաստան: Դրանց երկուսի տերերը՝ իրենց կառուցվածքով իրենց մեքենաների «դիզայնին» լրիվ համապատասխան՝ փորձերը դեկտերին «փռած», մեքենաներն էլ երթևեկության մի բանուկ հատվածում կողք կողքի կանգնեցրած, գրուցում են՝ ոչինչ չտեսնելով ու չլսելով: «Լուսից» ու «Դուբայից» հետո գրույցն հետզհետե «արդիականանում է»:

- Արա ախպեր, էդ Լաչին ա, ինչ ա, ասում են բացել են, հա՞: Չեթա՞նք մի հատ էդ Շուշի ասածը տենանք:

- Ախպեր, ըստե գործերով հմիկ խեղդված եմ, էլի: Մի քիչ թեթևանամ, անպայման կեթանք: Հըր էթանք տենանք էդ ի՞նչ ա, որ էսքան շուխուռ են դրել, թե «վեկալել ենք, վեկալել ենք»:

«Այն» օրերին մենք միանաբար կարծում էինք, թե որքան ծավալվեն և խորանան մեր հաջողությունները, այնքան շուտ և արագ մեզանում կվերանա մեր ազգին խորթ (շատ շուտ պարզվեց, որ իրականում՝ իբր, թե խորթ) այդ

մտածելակերպը: Որ շատ արագ «դրանք» պարզապես «կլուծվեն» մեր բոլորի մեջ, կչքանան ու մեզանում վերջապես կդադարեն որպես կերպ ի հայտ գալ, ասենք, անձինք, ովքեր ժամանակին կենդանական խրիսիանոզով համեմված «բուժումներ» էին առաջարկում. «Արա ախխալե՛ր, դրանց ուզածն ի՞նչ ա, հող ա՞: Գե մի վեղոր հող տվեք ձենները կտրեն, էլի»: Պարզվեց, որ դա մոլորություն էր: Չմայած արձանագրած որոշակի ռազմական հաղթանակներին, բարոյականի և ճշմարիտի որևիցե հաղթանակ այս ժամանակահատվածում մեզ համար մենք չարձանագրեցինք: Պարզվեց, որ սխալվում էինք, և սխալվում էինք արմատապես. նման մարդկանց թիվը մեզանում տարեցտարի ոչ միայն չնվազեց, այլ հակառակը՝ կտրուկ աճեց և շարունակում է աճել: Կոտորածներ ու պարտություններ, կորուստներ ու զրկանքներ՝ այս ամենը այդ մարդկանց երբևիցե չի վերաբերել և չի կալել: Նման «տհաճ իրադարձությունների» ժամանակ նրանք միշտ էլ շատ ու շատ հեռու են հայտնվում՝ Լոս-երում ու Դուբայներում: Հաղթանակների դեպքում առաջին տեր կանգնողներն են՝ «օբյեկտները» ձեռք գցած, մեղալագարող ու փրված, իրենց անցած «փառավոր ուղիով» էլ տեղ չբողնելով «հաղթական շքերթի» մասնակիցների շարքերում հաղթանակը իրական կռողների համար, փոխարենը՝ որակելով նրանց քրեաբարո-արհամարհական՝ «կռված տղա» պիտակով: Իսկ վերջիններիս կողմից՝ նույնիսկ չնչին չափով ընդդիմանալու դեպքում էլ լաչառավարի գցում դժոժոցը. «Արդյա՛, կարո՞ղ ա գիտես դեմինը թուրք ա: Ըստե քեզնից վախցող չկա՛: Որ տվվե եմ էլի քու էդ Վարաբաղում կհայտնվես»: Ա՛յ, սա է մեր այսօրվա իրական նվաճումը՝ «բարոյական ֆրոնտում», հենց սա՛ է մեր այսօրվա հայ իրականության մեջ կայացած «МОМЕНТ ИСТИНЫ»-ն:

Եվ այսօր էլ, պատերազմից տասնամյակ անց, Վարսի խորովածի այդ սիրահարի կողմից հեռուստաեթերով հնչեցրածը, իրոք որ, ոչ թե մի տափալություն էր, կամ էլ անհեթեթություն, այլ «նրանցից» մեկի կողմից՝ մեզ բոլորիս ավետած իրենց բոլորի հավաքական «credo»-ն է: Առ այն, որ Հայրենիք կոչվածը իրենց համար հետաքրքիր է ընդամենը այնքանով, որքանով որ տվյալ պահին այն կարող է հանդես գալ որպես որոշակի մի «օբյեկտ»: Ասենք, Գյումրին դիտվում է որպես հավաքական մի խաչարան, կամ քյալլայանոց, Գավառը՝ որպես քյուֆթայանոց, Սևանը՝ ձկնանոց և այդպես շարունակ: Իսկ մսապահանջ երևակայության մեկ այլ թռիչքով էլ կարելի է իրականացնել խիստ էկզոտիկ մի «օբյեկտի» կառուցում՝ մենավոր մի խաչարան Արագածի գագաթին: Չի հենց դա է այսօր մեր ազգային գերխնդիրն ու գերնպատակը՝ ի հեճուկս բնության, հնարավորություն ստեղծել ամառվա տապալն նույնպես «մի հատ խաչչ ուտել»: Համաձայնենք՝ իրոք որ յուրահատուկ է: Եվ ամենակարևորը՝ չափազանց հայեցի: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ համահայկական որկրամոլության այս կենտրոնը կառուցված է Արտեմ Ալիսանյանի կողմից հիմնադրած գիտական կենտրոնի դեմ-դիմաց: Այն կենտրոնի, որը երկրորդ աշխարհամարտի անհավանական պայմաններում կարողա-

ցավ ստեղծել կրտսեր Ալիխանյանը և, որը այսօր շարունակում է գոյատևել զուտ նրա գիտական հետևորդների նույնպես անհավանական ճիգերի շնորհիվ, որոնց ամբողջ տարեկան աշխատավարձը երևի թե չհերիքի այդ «օբյեկտի» մեկ մուտքի համար: Պատկերը լիովին ամբողջանում է, երբ այս ամենին գումարվում է նաև մերօրյա «երգարվեստի» արձագանքը: Իսահակյանի հայտնի կերտվածքին հաջորդած տասնամյակների լուռությունից հետո լույս աշխարհ եկան, հյուսվեցին «Ալագյազի մանիկներ-2»-ը.

- Եվ հուլիսի է՛ն շոգին, խա՛շը կերանք Արագածի գագա՛թին...

Կիրակի մի օր թողեք երևանյան շոգն ու տոթը և ուղևորվեք դեպի «յառն Արագած»՝ հեշ որ ջնի մի լավ կիովանաք: Այցելեք Ամբերդ, իսկ հետո՝ Լեռնան հարավային գագաթի տակ ծվարած խաշային այդ արծվաբույնը: Համենատեք Ամբերդում և այստեղ կայանված մեքենաների քանակը, մակնիշները, ինչպես նաև՝ համարանիշերն ու եկածների բարբառները և դուք միանգամայն սպառիչ պատկերացում կկազմեք «բազմաչարչար, աշխատասեր, տաղանդավոր հայ ժողովրդի» այսօրվա հզոր ներաշխարհի մասին:

Համազգային ալախինիստական այս խաշակերությունն ու նրա հետ կապված ամբողջ իրողությունը հանգեցնում են այն բանին, որ ներքուստ սկսում ես փառք տալ Բարձրյալին, թե լավ է, որ գոնե Մասիսն այսօր մեր ձեռքում չէ...

Կա կորցված Հայրենիք: Բայց ո՞վ է այն մոռանում, կամ չի հիշատակում այն:

- Ախպեր, Վանում էլանք, լճում լողանք, հենց ըստեղ էլ, ափին լավ հավետով էդ վանա տառեխից կերանք: Լավ էլ սարքել էին, պիվով ընտիր էթում էր: Դե պիվեն մեր հետ էինք տարել:

Եվ էդ ամբողջը է՛ն տոնով ու «ենթատեքստով» է ներկայացվում, ոնց որ թե էդ տառեխ ուտելու միջոցով ջախջախվել է Թուրքիայի ամբողջ բանակը, Վանն էլ «ձեռի հետ» ինքն ազատագրել է ու եկել այն հիմա բաշխում է մեզ՝ նվաստներիս: Ինչպես հասկանում ենք, հաջորդ գրաված քաղաքը լինելու է Կարսը՝ բայց այս անգամ «հենց Ղարսում Ղարսի խորոված» ճաշակելու միջոցով: Ոչ ոքի համար էլ նորություն չէ, որ ցանկացած մաքուր և վեհ գաղափար, և նույնիսկ բացարձակ հանդիսացող հայրենասիրության գաղափարը, միշտ էլ հնարավոր է խեղել և այլասերել՝ դարձնելով այն առօրյա սպեկուլյացիաների մաշված մի պարագա: Պատահական հո չի ասված, որ հայրենասիրությունը կարող է տակակնքների համար վերջին հանգրվան դառնալ:

Դա էլ ասենք, որ մնան անձանց զուտ գոյության առումով մենք ինչ որ հատուկ մի բացառություն չենք: Նման մարդիկ եղել են և կլինեն բոլոր ազգերի մեջ և բոլոր ժամանակներում: Օրինակներ՝ որքան ուզես: Հարցն այն է, թե ինչպիսի՞նք է արդյոք մնան տեսակի «մասնաբաժինը» տվյալ ազգի, տվյալ հասարակության մեջ: Իսկ այդ մասնաբաժնի չափը և հետագա «դինամիկան»՝ նվազման կամ աճման միտումների առումով, պայմանավորված է արդեն միայն ու միայն տվյալ ազգի, կամ էլ հասարակության կողմից ստեղծած «միջավայրային» պայմաններով: Առանց խիստ բարենպաստ հասարակական պայմաններ

րի առկայության, այդ տեսակի ծլարձակումն ու բարգավաճումը չի կարող իրականանալ: Իսկ եթե հասարակության կողմից այդ ամենի «դեմը չի առնվում», ապա շատ շուտ դրանց աճը դուրս է գալիս որևիցե հսկողությունից և հենց նրանք էլ դառնում են երկրի տեր-տիրակալը՝ ղեկավարելով այն իրենց ուզածով և իրենց պատկերացումներով: Նման պարագայում էլ գալիս է վճռորոշ մի պահ, որից սկսած, նույն ժողովուրդը, որ երեկ կամովին կանգնեց և իր արյան գնով պաշտպանեց իր իրական Հայրենիքը, այսօր արդեն հրաժարվում է կռվել ու պաշտպանել երկրի այդ տերերի կողմից քյաբաբնոցների և այլ «օբյեկտների» տեղադրման տարածքի վերածված և ժողովրդից օտարված այդ հողակտորը: Չգիտես ինչու, մոռանալով, որ հենց ինքը, այդ ժողովուրդը ստեղծեց ու հետո էլ իր գլխին տեր կարգեց մարդկային այդ կերպն ու տեսակը: Հայրենիքից հրաժարվելը, իր հողին տեր չկանգնելը սկսում է կրել զանգվածային բնույթ, ստանում «համաժողովրդական» թափ, դառնում նորմ ու ընդունված կենսակերպ: Եվ այդժամ ազգի և պետության գլխին պայթում է մի աղետ, որի անունը հայերիս համար խորհրդանշվում է որպես «1920 թվականի աշուն, Կարս»: Երբ, ըստ էության, առանց մի կրակոցի, կամովին և կարելի է ասել՝ նույնիսկ սիրահոժար, մեր «հերոս պապերի» կողմից թշնամուն է հանձնվում հզոր մի բերդաքաղաք՝ իր հսկայական զինապաշարով, ամբողջ կայագործով և սպայակույտով, բացառությամբ՝ սեփական քունքին պատվո կրակոցն արձակած գնդապետ Հովհաննես Մազմանյանի: Նույնիսկ թշնամու համար անսպասելի և զարմանալի հեշտությամբ անձնատուր է լինում ա՛յն բանակը, որ ընդամենը երկու տարի առաջ, իրոք, հերոսաբար կռվել և կանգնեցրել էր նույն թշնամու առաջխաղացումը: Ի՞նչ կատարվեց այդ ժողովրդի և նրա բանակի հետ համեմատաբար խաղաղության այդ երկու տարիների ընթացքում: Եթե չհաշվենք օտարների կողմից բռնի կերպով մեզ «մուրճի ու սալի» արանքը խցկելու մասին բալլադները, ապա մինչ օրս ոչ ոք չի ցանկանում տալ այդ հարցի՝ փոքրիշատե հիմնավորված, տարրական տրամաբանության շրջանակների մեջ տեղավորվող մի պատասխան: Իսկ «Կարսին» էլ տրամաբանորեն հաջորդեց արդեն «Ալեքսանդրապոլը», երբ նույնպես, ցայսօր «չբացահայտված պատճառներից» դրո՞ված և «չբացահայտված պարագաներում», գյուրեցիները գնացին ու աղ ու հացով դիմավորեցին քաղաքի վրա արշավող Քյազիմ Կարաբեքիրին: Հիմա՞ ինչ պատահեց մեր «հերոս պապերի» այդ խմբաբանակի հետ: Բա ասում էին, թե «իդոնք ով են, փափխով զարկենք կփախնին»: Եվ այդ ամենի կատաստրոֆիկ, բայց լրիվ սպասելի ու կանխատեսելի վերջաբան. «1921 թվականի աշուն, Կարսի պայմանագիր»:

Այնպես որ, Կարսում եփած մեկ այլ «ճաշի» դառնությունը դեռ անսպասելի երկար ժամանակ է հետապնդելու մեզ ազգովին, անկախ այն բանից, թե այսօրվա մի նոր «20 թվական» մոտեցնողները ինչ հաճախությամբ թուրքի ինատուն՝ «կեթան Ղարսը տենան կգան», և նույնիսկ՝ «հենց Ղարսում էլ մի հատ Ղարսի խորոված կուտեն»: Եվ դրանով էլ կհամարեն Կարսը «տուն վերադարձած»: Ավելի ճիշտ՝ իրենց կողմից «վերադարձրած»...

Հայոց պատմությունն ըստ դարսեցի Գրիգորի

...Իմ սերնդի մանկությունն ու դպրոցական տարիները ճիշտ ու ճիշտ համընկան ԽՍՀՄ-ում Նիկիտա Խրուշչովի կառավարման, կամ, ինչպես հետո բնութագրվեց պատմական կարևոր այդ ժամանակահատվածը՝ «խրուշչովյան ձնհալի» տարիների հետ: Մտովի վերադառնալով այն օրերին, անկեղծորեն կարելի է ասել, որ կոմունիստական գաղափարախոսությամբ ժողովրդին այնքան էլ չէին «բթում» ու ճնշում: Պաշտոնական հաղորդագրություններում, օրինակ, բացառությամբ, ասենք, կուսակցական համագումարների կամ պլենումների, երկրի առաջին դեմքի կուսակցական պաշտոնը չէր շեշտվում, այլ միայն՝ «ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախագահ Ն.Ս. Խրուշչովը»: Դիսիդենտ-այլախոհները դեռ նոր պետք է ի հայտ գային՝ հանդիսանալով հենց այդ «վաթսուականների ծնունդը»: Կուսակցության ու կուսակցականների հասցեին, մեղմ ասած, ոչ այնքան հարգալից ձևով, այդ թվերին արտահայտվում էին «է՛ն» սերնդի մարդիկ, որոնք դեռ «է՛ն գլխից» երբևիցե չէին էլ ընդունել բուշկիզմը և համարվում էին «հակա»: Հիմա էլ, օգտվելով ազատ խոսելու և արտահայտվելու որոշակի հնարավորությունից, չէին թաքցնում իրենց վերաբերմունքը: Առավել համարձակները կուսակցական տոմսը որակում էին նույնիսկ որպես «հացի քարտ»: Պաշտոնական-քաղաքական կուռքեր, կամ այդ բնույթի այլ անհերքելի «առաջնորդներ» ասպարեզում կարծես թե չկային: Ստալինը որպես խորհրդային տոտեմ, այլևս գոյություն չունեի և մեկ-մեկ էլ, ինչպես ցանկացած «տորովող» անձ, կարծես թե, նույնիսկ ինչ-որ տեղ կարեկցանքի կարիք ունենար: Իսկ հսկա և հզոր երկրի այդ ժամանակվա առաջին դեմքը, մեծերի բնորոշմամբ՝ «թեթևտիկ» մի անձնավորություն էր, որն «այ ու ձախ ընկած աշխարհին է չրխում» ու տարբեր «խուժան» պետությունների հետ ընկերություն անում: «Խուժաններ» ասելով ենթադրվում էին հատկապես այդ թվերին անկախություն ստացող Ասիայում և Աֆրիկայում գտնվող մեծաթիվ նախկին գաղութները՝ հաճախակի չափազանց էկզոտիկ տեսքով ու անվամբ, իրենց ղեկավարներով հանդերձ: Լենինը, ճիշտ է, դեռ «օրակարգում» մնում էր, բայց մեզ համար շա՛տ հեռու էր և անհասկանալի: Լինեի դա աղջնակատես երկարավարս մանուկը՝ «հոկտեմբերիկի» նշանի վրայից, թե արձանը՝ «կեպկեն» ձեռքին, կամ վերարկուն թևի տակ: Քարոզչական մեքենան, իհարկե, քնած չէր, գործում էր, բայց, նշենք կրկին, անտանելիության աստիճանի հասնող ճնշում և ձանձրույթ կարծես թե չկար: Իսկ «կենդանի ազիտացիան» մեկ-մեկ նույնիսկ հետաքրքիր էլ էր լինում: Հիշում եմ, թե ինչպես քաղաքի մուտքից մինչև հրապարակ, Մուրադենց Գրիշի ֆայտոնը նստած, մեզ հյուր եկավ Նիկոլաս-Տերեշկովա «տիեզերական նորապսակների» զույգը, իսկ մի անգամ էլ դպրոցականների հետ հանդիպման էր եկել Լենինի նախկին թիկնապահներից մեկը՝ Կելլեր ազգանունով: Ոչինչ, հետաքրքիր էր: Պարզվեց, որ Լենինն էլ ոչ միայն մեր մասին է մտածել, այլ

նաև խոսել է, քայլել, վախեցել ու տխրել: Առավել հետաքրքրական էր այդ «կենդանի ազիտացիայի» ազգային՝ «հայկական բաղադրիչը»: Օրինակ, մի անգամ մեր դպրոց եկավ այն օրերի համար բառացի կենդանի լեզունը հանդիսացող ողջ մնացած «երիտզավարդիական» Ժորա Հարությունյանը՝ զննապետի ուսադիրներով, իսկ մի անգամ էլ՝ Հովհաննես Բաղրամյանը՝ Արտեմ Միկոյանի հետ: Ամբողջ քաղաքը այդ օրերին կրկնում էր մարշալի արած կատակը՝ իր ելույթի ժամանակ. «Լենինականցիք, ես ձեզի դուրբան՝ դոք ինձի՝ հե՛շ»:

Գիտությունն ու արվեստը շատ «հարգի» էին և խորհրդահայ գորավարների հետ մեկտեղ, ժողովրդի մեջ մեծագույն համբավ ունեին Վիկտոր Համբարձումյանն ու Մերգեյ Մերգելյանը, Ալիխանյան և Օրբելի եղբայրների աստղաբույլը, Արամ Խաչատրյանն ու Տիգրան Պետրոսյանը: Բայց նրանք, իրենց չափազանց հաճելի գոյությանը հանդերձ, մեզ համար, համենայնդեպս, մի տեսակ սիմվոլ էին՝ թեև չափազանց հզոր, բայց և չափազանց հեռու և անհասանելի: Այսօրվա տեսանկյունից ելնելով՝ որոշակի կուռքեր, ի դեմս՝ ասենք, կինոյի կամ էլ էստրադայի աստղերի, մենք նույնպես չունեինք: Նրանց լույսը մեզ չէր էլ հասնում: Չուտ իրատեսական, գոնե մտովի մեզ համար հասանելի լինելու առումով, այդ թվերին մեր պաշտելի անձինք էին, ասենք, Ալբերտ Ազարյանն ու Իգոր Նովիկովը, Վլադիմիր Ենգիբարյանն ու Սարգիս Հովիվյանը: Հրաշալի էր, իհարկե, որ նման անձինք կային, որ սիրելի և ընդօրինակելի էին մեզ համար, բայց անմիջական շփման անհնարին լինելը նաև անհնարին էր դարձնում, որ այդ մարդիկ գուտ իրենց գոյությամբ՝ «տարածության վրա» կարողանային իրական կայծ գցել մեր հոգիներում:

Մեզ համար տեսանելի և, ամենակարևորը, հասանելի հեղինակություն, այդ թվերին մենք փնտրում ու փորձում էինք գտնել մեր անմիջական մեծերի՝ հայրերի ու պապերի շրջանում: Եվ հարցն ամենևին էլ կարծրացած-կաղապարակաված պրիմիտիվ ավանդապաշտության մեջ չէր: Այդ փնտրտուքի իրական հիմքերն ու պատճառները բոլորովին այլ էին: Հարցն այն էր, որ գրեթե բոլորիս հայրերը անցել էին Երկրորդ աշխարհամարտի բովով, իսկ պապերից շատերն էլ՝ ոչ միայն հասցրել էին մասնակցել երկու աշխարհամարտերին, այլ ժամանակին նույնիսկ «կռվել էին թուրքի դեմ»: Գրեթե բոլորս էլ ունեինք բարեկամներ, որ ընդամենը վերջերս էին վերադարձել «Միբիբից»: Այնպես որ, թե՛ բուն հերոսների, թե՛ այլ բնույթի պերսոնաժների նմանակները, այդ թվերին բոլ-բոլ տպագրվող ու լավ կարդացվող պատերազմական և «ժակապաշտամունքային» գրքերից, իրենք իրենց էին հայտնվում:

Մեծերի այդ շրջանում, մեզ՝ անցած դարի 50-60-ականների Լենինականի թաղերից մեկի երեխեքիս համար, կար անհերքելի և անսասան մի հեղինակություն, որը մեզ համար բավականին հասանելի էր և բավականին «քաց»՝ անմիջական շփման համար: Դա հյուսն և փայտագործ, կամ ինչպես այն ժամանակ էին ասում՝ «դուրգյար» Գրիգորն էր: Մեր պատկերացումներում վարպետ Գրիգորը այն անձնավորությունն էր, որ գիտեր ամեն

բան այս աշխարհում՝ ամեն ինչի և ամեն մեկի մասին: Մեզ համար նա «Գրիգոր պապ» էր, իսկ մեծերը, նրա մասին իրար մեջ խոսելիս, ասում էին «ղարսեցի Գրիգորը»: Ի դեպ, այդ թվերին դեռ գործածման մեջ էր «գաղթական» բառը, որով «միասնաբար», և պետք է ասել, ոչ այնքան հարգալից, բնութագրվում էին Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր վայրերից եկածները: Չհավան լեւինականցիները «արտոնություն էին վերապահում» միայն Պոլսից և Կարսից եկածների համար, հատուկ նշելով. «պոլիսեցի էս-ինչը», «ղարսեցի էն-ինչը»: Կարսից գաղթածների մասին Լեւինականում կար նաև կայուն և տարածված կարծիք, որ «ղարսեցիք լավ մարդիկ են»: Այնպես որ, զուտ անձնական հատկանիշների հետ մեկտեղ, սոսկ պաշտոնական տեսանկյունից նույնպես, վարպետ Գրիգորի կարգավիճակն ու վարկանիշը չափազանց բարձր էին: Ծնունդով, բնականաբար, «ղարսեցի Գրիգորը» Կարսից էր, 1908 թվի ծնված: Երբ նրան հարցնում էին տարիքի մասին, նա նշում էր իր ծննդյան տարեթիվը և պարտադիր ավելացնում. «Վիկտոր Համբարձումյանի հետ նույն թիվն ենք»: Մեզ համար այդ հանգամանքը վարպետ Գրիգորի և մեծ գիտնականի միջև ինչ-որ անտեսանելի, բայց հաստատ գոյություն ունեցող ինչ-որ կապի վկայություն էր: Վարպետ Գրիգորի ցածրիկ, հաստ պատերը կոպտատաշ քարերով շարված, մի քանի «աչքի բաժնած» երկար արհեստանոցը, որը նախկինում զինապահեստ էր եղել, մեզ համար նույնքան առեղծվածային էր և նույնքան դող առաջացնող, որքան մոտակայքում գտնվող հիվանդանոցի հերձարանը: Արտաքուստ, մի մեծ գաղտնիք կարծես թե չկար: Մենք տեսնում էինք, որ արհեստանոց են բերում գերաններ ու տախտակներ, հետ են տանում՝ դուռ-լուսամուտ, նստարան ու թախտ: Բայց միևնույն է, մեզ միշտ ձգում էր արտաքինից անհրապույր այդ շինության ներսը՝ խզարների միապաղաղ երգով, ուրագների թրխկոցով, թարմ տաշեղի ու թեփի հաճելի հոտով, փայտի փոշու նստելուց սպիտակած բեղ ու հոնքով վարպետներով: Այս ամենն իրոք որ չափազանց գրավիչ էր ու հետաքրքիր, սակայն ամենակարևորը չէր: Ամենակարևորն ու ամենագրավիչը մեզ համար արհեստանոցի ներսում, ինքը՝ ղարսեցի Գրիգորն էր, իրեն մշտապես այցելության եկող իր ընկերներով՝ «տղեքով», ինչպես ինքն էր ասում: Իսկ ավելի ճշգրիտ՝ «տղեքի» անվերջանալի զրույցներն ու վեճերը «փախե-փախի», «թուրքի կռիվների», «հողերը տալու» և նման հազարավոր հարցերի վերաբերյալ, որոնց մասին ուրիշ ո՛չ մի տեղ և ո՛չ մի բան չես կարող իմանալ: Եթե չհաշվենք արհեստանոցի աշխատողներին, իր արհեստանոցում վարպետ Գրիգորը երբեք մենակ չէր լինում: Իր ընկերներին՝ «տղեքին», մենք գիտեինք արդեն «անգիր»՝ թե՛ դեմքով, թե՛ իրենց «ոսյեներով»: Ահա եկավ Արամը Բուլանուղից, իսկ ներսում վաղուց արդեն Խնուսա Շահենն է՝ դերջանցի «ջուխտ» Սարգիսների հետ, ծիծաղելով ներս մտան Վաղրն ու «որոշոր» Օնեսը Էրզրումից, իսկ «ընտելից՝ Կարսից» մոտիկ ընկերներ Մուշեղն ու Մնն... Ամբողջ Արևմտյան Հայաստանը՝ պարզ-

վում է այդպիսի Հայաստան էլ կա, իր բարբառով, սովորույթներով, տեղանքներով և ամենի մասին ամենամանրամասն հիշատակումներով: Իսկ օրվա վերջում՝ «շաբաշից» հետո, հայտնվում էր մահ ԽՍՀՄ տարածքում միակ «քացահայտված» և լեզավ գործելու իրավունք ունեցող դաշնակցականը՝ պոլսեցի քարտաշ Գևորգ Գևալանյանը, կամ, ամբողջ Լենինականով մեկ հայտնի, նույն ինքը՝ «դաշնակ Գևորգ»: Բողոքն էլ «թիք ու ձիգ», «ճիլ ու դվան», մի քիչ էլ «հերտոտ ու ջղային» 60-65 տարեկան բիճեք: Նրանք ինչոր բաներ են պատմում, ծիծաղում, հետո նեղվում, վիճում գոռգոռալով, մեկմեկ էլ թունդ ու կծու հայիոյում: Հայիոյում են ու՛մ ասես, անգամ... ռուսին, Սովետին: Եվ նույնիսկ...Լենինին: Էլ չհաշված Ստալինին, ինչն այդ թվերին այլևս վտանգավոր չէր: Իսկ մենք՝ մուտքի «աբոնեմենտ» ունեցող ընտրյալներս, չամի ու քյոքնառի հաճելի բույրով թարմ թեփակույտի վրա տեղավորված, բերաններս բաց՝ սուս-փուս լսում ենք: Ինչի՞ մասին է թեժացող բանավեճը, ո՞րն է հերթական «ֆակուլտատիվի» թեման, որի ունկնդիրն ենք մենք: Նույնը, ինչը որ գրեթե ամեն օր. «ինչպես կորցրինք մեր հողերը»: Սկզբից խոսակցությունը կարծես թե հանդարտ է ընթանում, բայց ինչքան մոտենում են է՛ն «անիծյալ» հարցերին, թե ինչու՞ կորցրինք, ի՞նչ պատճառով կորցրինք, ու՞մ մեղքով կորցրինք, այնքան բանավեճը թեժանում է: Սկսում են բախվել «տարբեր քաղաքական կողմնորոշումներն ու հայացքները», ինչը, որպես կանոն,սկսում է գուգազգվել գոռգոռոցներով ու հայիոյանքներով: Մեկը ինչ-որ բան մոռացել է, մյուսը՝ դեպքերն ու թվերն է շփոթել-խառնել, է՛ն մեկը փորձում է վիճողներին բերել «ելման դիրքի»...

- Տո դե հե՛րիք է գլխեդ դուս խոսաս: Որ չիդես, գոնե սուս մնա:

- Ի՛, չե՞ս հավատա, տիյա, արի Գրիգորին հարցնենք:

Վարպետ Գրիգորը այն վերջինն ատյանն էր, որի ասածը բեկման և, առհասարակ, գանգատարկման կամ բողոքարկման որևէ ձևի այլևս ենթակա չէր: Մի քիչ հանդարտվելուց հետո նորից շարունակում են.

- Տո հե՛նչ մարդ էլ մեղավոր չէ: Մեղավորը հենց քու դաշնակներդ են: Հողերը բիրադի տվին, փողերն էլ առան ու փախան:

- Դաշնակներուն բան մի՛ք ըսե, Գևորգ կընեղենա:

Վարպետ Գրիգորն ու «դաշնակ» Գևորգը հակադարձում են.

- Տո, խելքի պուտուկ, դաշնակներն որ չէղներն, էսօր է՛ս թիզմ հողի կտորն էլ մեր ձեռը չէր էղնի, էս էլ կիսկսած կեղներն Ադրբեջանի ու Վրաստանի մեջ: Չ...խ Ստալինը հենց ըղպես էլ պլանավորել էր: Հունաստանից եկած ախպար Նշանը փորձում է հաշտեցնել կողմերին.

- Խեղճ թաշնակ ի՞նչ գրմար էներ, երբ հենց Ջյամալ-փաշան Լենինին խաբեց, թե է՛ս ալ պոլշեկի են ու գարմիր թրոշներով կուգար հայերուն վրա:

Թե՛ն Նշանը կրկնակի տուժած է. փախեփախից հետո հայտնվել է Հունաստանում, Հայրենիք ներգաղթելուց հետո էլ՝ «Ալտայսկի կրայ» և նոր-նոր է ուշքի գալիս, միևնույն է, նրան էլ չեն խնայում.

- Տո դու՞ էդ ի՞նչ ստրվոցըրած բաներ կես: Ի՞նչ խաբել, ի՞նչ բան: Էդ Լենինը չէ՞ր, որ վագոններով օսկին ու գենքը տվավ Զյամալին, թե դու էդ կողմից ջարդելով արի, մենք էլ է՛ս կողմից կմտնինք:

- Մխալ եք, տղեք: Ռուսն որ չէղնիր, էսօր գետնի երեսին մեկ հաստ հայ էլ սաղ մնացած չէր էղնի: Համ էլ Լենինը էդ հողերը քսան տարով էր տվել:

- Տո վե՛րջ տուր, դուն էլ մարդ գտար. ռուս, Լենին, բոլշևիկ: Ըշտը ռուսները սկսին մեր գործերուն խառնվել, որ էդ օրն ընկանք: Ռուսը չէ՞ր, որ քառսուն տարվա պրիպասն ու գենքը թողեց թուրքին, փեշերը թափ տվեց ու ելավ գնաց: Էն ձևի հավատարիմ, որ մենք ռուսին ծառայեցինք, որ թուրքին ծառայեցինք, մեր գլխից մազմ էլ չէր ընկնի:

- Հըլը մե կրնա՞ք ընձի հասկըցընեք, էդ ընչի՞՞ պտի պարտադիր մեկիմ ծառայենք որ: Ա՛գգ ես, մա՛րդ ես, կրցի դու՛ էլ քու՛ գլուխդ պահել: Թե չէ՛ «քսան տարով տվին, հարյուր տարով տվին, հիմի էլ ե՛տ չբերին...»: Երեկ մեկի տակը մտնելով, էգուց՝ մյուսի տակը մտնելով, ի՞նչ դուրս կուգա, ու՞ր կհասնինք: Գիտեմ՝չիտեմ, հա՛՛ հող կուտանք ու ճանճի պես կջա՛րդվինք...

Ամեն ինչ խառնվում ու խճճվում է գլխիդ մեջ. կոտորած, փախուստ, վրեժ, հաղթանակ, խաբեություն, պարտություն, դավաճանություն... Թուրք, ռուս, ֆրանսիացի, ամերիկացի... Ու ամենի վերջում՝ կորուստներ, կորուստներ, կորուստներ... Աշխարհագրական բոլոր ուղղություններով: Հյուսիսը հայկոյանքներով «շուլուլված» ինչ-որ վրացիների անուններ են տալիս. Չխենկելի, Ռամիշվիլի, Ժորդանիա... Այս վերջինը հատկապես լավ է տպավորվել՝ այդ թվերին այդպիսի ազգանունով հայտնի մի ֆուտբոլիստ կար: Վրացիներին մեղադրում են մեր հողերի հաշվին թուրքի հետ լավանալու մեջ, հետո էլ սկսում պատմել, թե ինչպես են վրացական «պոստերը» դուրս քշել մեր երկաթուղու Լոռվա հատվածից:

- Ի՞նչ «քոյ», ի՞նչ կրակոց: Դոնդաղով, քացով, մռթներին մուշտի տալով վռնդինք: Իրանց «կամանդիրսկի բռանեպոյեզոն» էլ՝ երկու քարերը գլորինք, ճամփեն փակինք, ձեռներից առանք: Էդոնց քշելով հասանք համարյա Թիֆլիս: Դրոն «պուշկեքը» դրել էր արդեն Կոջոռի վերևները: Վրացիք ոտներն էին ընկել, ֆրանսիացիք խառնվան... Բայց Թիֆլիս մեր քեֆին մե օրն լաա՛վ ման եկանք:

Ու նորից գլխիդ մեջ մի նոր քառս, նոր խառնաշփոթ. ռուսի պասկազերծումը քիչ էր, հիմա էլ պարզվում է, մեր եղբայր վրացիք հարմար պահին մեզ լավ էլ «տք են պահել»: Վերջը «էս ամենը» մի օր պարզվելու՞ է, թե ոչ...

...Էս անգամ էլ խոսքն ու գրույցը ծավալվում է գորահրամանատարների շուրջ, նրանց տարած հաղթանակների և ավաղ... Ի վերջո՛ կրած պարտությունների մասին: Նազարբեկով, Արարատով, Արեշով... Միայն այդպես՝ խիստ ընդգծված ռուսականացված տարբերակով. Միլիկով, Բեկ-Փիրումով, Կորգանով, Դուլխանով... Լուսմ ենք շնչներս պահած ու մեջներս փոթորկող ու խելագար մի այլք է բարձրանում. «Էս ի՞նչ բան է: Ուրեմն հնարավոր է, որ բացի Սովետական բանակից, բացի ռուսական բանակից հայերը ունեցած լի-

նեն նաև «սեփական»՝ առանց ռուսների «գուտ հայկական» բանակ՝ ոչ միայն գուտ հայ զինվորներով, այլ նաև գուտ հայ սպաներով և, ինչն արդեն չափազանց անպատկերացելի է, գուտ հայ զեներալներով: Ու էս «տղեքն» էլ, այդ թվում նաև իրենց հասակակից մարշալ Բաղրամյանը, «է՛ր» բանակի զինվորներն են եղել, ծառայել հա՛յ զեներալների հրամանատարության տակ»:

Հետո անցնում են այլ մարդկանց, որոնց մենք մտովի նմանացնում ենք գրքերից մեզ հայտնի խորհրդային վրիժառու պարտիզանների հերոս հրամանատարներին: Նրանց հիշատակում են արդեն միայն անուններով. Սմբատ, Համազասպ, Անդրանիկ, Սեպուհ, Նժդեհ... Հատուկ շեշտվում է անխտիր նրանց բոլորին հատուկ քաջությունը, բնավորության կարծրությունը, անձնուրացությունը: Բայց, չնայած այդ ամենին, միևնույն է, արդյունքում՝ կրկին ու կրկին պարտություն ու կորուստ...

Հատուկ դասը՝ Կարս

Բայց կորուստների տխուր ու ցավազին ծավալուն ցուցակի մեջ, ուր ցանկացած մի տողն էլ արդեն համազգային ողբերգություն էր, միևնույն է, Կարսը զբաղեցնում էր առանձնակի ցավեցնող մի տեղ: Առավել թեժ և առավել ծավալուն վեճերը դարսեցի Գրիգորի արհեստանոցում սկսվում էին հենց այն դեպքերում, երբ սկսվում էր շոշափվել «Ղարսի հարցը»: Ստացվում էր, որ այս դեպքում մեղավոր էին բոլորը. ռուսները, վրացիք, դաշնակները, մեր զեներալները, ամբողջ բանակը, հայ բոլշևիկները, Լեւնին-Ստալինը և էլ ո՛վ ասես: Վարպետ Գրիգորին այդ պահերին մենք ընկալում էինք որպես մի անձի, որը ժամանակին հողին է հանձնել իրեն շատ թանկ մի մարդու, այսօր այդ վիշտը նրան հիշեցրել են և չգիտես, թե ո՞նց ամոքես նրան: Այդպիսին էին և այդքանն էին «խնդրո առարկա» հարցի վերաբերյալ մեր հոգևոր պաշարն ու կարողությունը այդ ժամանակ:

- Ա՛յ մարդ, խո՛ւմ գոռով չէ, էդ խեղճ քաղաքի չարխըր հենց էն գլխից, հըլը տասնութ թվից դառավ ու դառավ: Վրացին, էն գ...ան Չխենկելեյին, մեր թիկունքի ետևից քաղաքը թեզունց տվել էր թուրքերին:

- Է՛հ, վրացին խո՛ւմ քու հորոխսպերդ չէ, հըբբը ի՞նչ կուզեիր, որ: Իրա շահի համար ամեն ինչ էլ պտի էներ: Հայի հերն էլ անիծած, իմ երկիրս ու ազգս ապահով էղնին:

- Վրացին տվեց, թող դու չտայիր: Հողը քուկդ էր, խո՛ւմ վրացունը չէր:

- Լա՛...ավ, ըսենք թե տասնութ թվին վրացիք մեզի խաբին, քաղաքը տվին, խո՛ւմ քսան թվին էլ Չխենկելի չկա՞ր, Էդ վախտ ընչի՞ տվինք:

- Էդ վախտ էլ Լեւնինն ու բոլշևիկները համը հանեցին: Թուրքի հետ ախպերցան ու երկուսով հայի դատաստանն էրեցին:

- Տո էդոնք սաղ վերասյա խորաթեք են: Զու բանակդ ինչի՞ չկռվավ, կըրնա՞ս մե ըսես, ի՞նչդ էր պակաս: Էն էլ Ղարսում: Բերդի երեք հարյուր թնդանոթներից

քանի՞սը կրակեց: Խոն էդ էլ Լենին-Ստալինը չէի՞ն էնողը: Կհիշեմ, երկու հոգու՝ «կոմնի ռազվեդկից» էին, կոխին «պող տրիբունալ»: Քանի անգամ էսոնց «ռազվեդկա» կորկեն, կերթան կուգան, կանն՝ «ամեն ինչ լավ է, թուրքը չի երևա»:

Մեկ էլ թուրքը միամիտ բերդի դեմը բուսնավ: Գու մի ըսա, էսոնք կերթան, թուրքը կանցնին էն թարավ, ձիերին կկապեն արծալու, իրանք էլ կուշտըմ քնին, իրկուուն էլ հետ կդառնան, «դալաժիտ» կենեն, թե ամեն ինչ լավ է: Վայթեմ դատն էլ չհասցրին էնել, թուրքը մտավ քաղաք: Էդ բաներն ո՞վ էր էնողը:

Թե՞ Լենինի մատը խառն էր:

- Խաբվանք էլի: Էդ վախտ թուրքերը գլխարկներին կարմիր աստղերով, թեերին կարմիր շոր կապած կուգային:

Վարպետ Գրիգորը չի դիմանում.

- Տո կարմիր շորով կուգային, դեղի՛ն շորով կուգային, էդ ի՞նչ խորաթա է: Թուրքը թուրք չէ՞, դեմիդ գորքը, բանակը, հակառակորդ չէ՞, թշնամի չէ՞: Հըբը Եժդեն, մարդը ի՞նչըդ էրավ: Մարդը քաշվավ Ջանգեգուր ու կայնավ: Չորք էլ թամամ չունիր, տեղի մարդկանցով պահեց: Է՛ս թուրքն էլ էկավ, է՛ն թուրքն էլ էկավ, բոշկիկն էլ էկավ, էն մարդը կայնավ ու պահեց: Պահեց էնքա՛ն, մինչև համոզվավ, որ Մյասնիկյանը էդ հողերը թուրքերին չի տա: Մարդը հողը հանձնեց Մյասնիկյանին, իրա աբուրը քաշեց գնաց: Իսկ ըստեղ... Չկովանք էլի, չկովանք, չուզեցինք կովել: Փոխարենը չոքանք, ադ ու հաց տարանք: Թե ինչի՞, արի ու հասկըցի:

Ու ավարտում էր սրտնեղած.

- Էդպես անաստված բան կեղնիր, որ մենք մեր ձեռով էրինք: Խոսալու տեղ չունինք, էլի, խոն գոռով չէ՞:

...Կարսը միշտ էլ էն հատուկ և առանձնակի թեման էր, որը ոչ թե ավարտվում էր վեճով-գոռոռոցով, մեկ-մեկ էլ՝ նույնիսկ իրարից նեղանալով, այլ հակառակը: Խոսակցության սկզբում շիկացած մթնոլորտը աստիճանաբար իջնում էր, մարում և փոխարենը առաջ էր գալիս ցավի չավի ճնշող, մտախոհ ու ներքուստ լարված մի իրավիճակ: Սկսում էր տիրել «անբավարար», ճչացող մի լռություն, որը մեր՝ երեխեքիս մոտ, մի կողմից առաջացնում էր անհանգստություն ու թեթև տագնապ, որ տեղյակ ու հաղորդակից ենք դարձել կատարված մի շատ վատ բանի, մյուս կողմից՝ խղճահարության ու կարեկցանքի նման մի զգացում ներկաների նկատմամբ: «Տղեքը» այդ պահերին աշխատում էին հայացքներով չհանդիպել միմյանց, սևեռելով այն, մեկը՝ հատակին, մյուսը՝ դագաակին, կամ անորոշ դեպի դուրս, իսկ ոմանք էլ ուղղում էին հայացքները դեպի մեզ ու անճարակությունից նույնիսկ մեզ էլ «մարդատեղ դնում».- հըբը՛, էրեխեք ջան, ըդպես բաներ: Թվում էր, թե այդ մարդիկ բոլորը միասին, նաև շատ ուրիշների հետ, ժամանակին կատարել են անթույլատրելի, ամոթալի և անընդունելի մի արարք և այսօր այդ ամենը «ջրի երես է ելնում» ու այդ ամեն արածի համար պետք է պատասխան տան: Բայց այսօր, այդ արածի համար, նրանց ոչ դատող կա, ոչ էլ մեղքերը քակե-

լու հնարավորություն տվող: Եվ հիմա նրանք մնացել են մեն-մենակ ու դեմ առ դեմ՝ իրենց խղճի և խղճի վրա ծանրացած այդ ամոթանքի հետ...

Իսկ մենք այդ պահերին կենտրոնանում էինք դրսում ճողացող թրածի-ծեռների վրա և մտածում, թե այ, նրանց համար, բացարձակապես միևնույն է, բույնը կոնեն Կարսի բերդի վրա, թե՛ դարսեցի Գրիգորի արհեստանոցի կտուրին: Հետո մտովին հատում էինք Արփաչայը և, Ախուրիկի «գաստավի» մոտ սահմանն «աննկատ» անցնելով, հասնում Կարս ու վերևից նայում նրան: Բերդաքաղաքը մեզ ներկայանում էր լուռ ու շատ տխուր՝ սև քարով շարված, բայց շնչավոր ու բանական, հսկա մի կառույց: Եվ «նա»՝ հայտնված այսօր օտարի ձեռքում, նեղացած ու խռոված բոլորիցս՝ մեծից փոքր, ժամանակին իր հանդեպ կատարած անասելի դավաճանության համար, մերժում ու ետ էր վանում նաև մեզ, կարծես ասելով, թե՛ ձեզ պահեք ձեր կարեկցանքը: Եվ միայն սև-սև թրածիծեռներն էին նրան հարազատ, որ անարգել և ազատ սուրում էին մատնված բերդի վրայով...

Իրավիճակը սովորաբար «վիցքաթափում էր» էլի վարպետ Գրիգորը՝ կամ գոռալով աշխատողների վրա. «հիլը մե գործի անցեք, ի՞նչ եք մոռնել-կայնեք», կամ էլ, եթե ժամն արդեն ուշ էր. «դե լավ, ելնինք էրթանք մեր տները, ի՞նչ ենք փաշա-դոնախ նստել»: Ու ամեն անգամ, Կարսի հերթական «դասի» տխուր ավարտից հետո, երբ նայում էինք մի քանի ժամ առաջ առույզ ու ձիգ, իսկ հիմա՝ գլուխները կախ ու մի տեսակ մեկից ծերացած, իրենց հնամաշ, տեղ-տեղ էլ կարկատած շորերով, արհեստանոցից լուռ դուրս գնացող այդ մարդկանց, նրանց նկատմամբ լցվում էինք արտասուքի հասցնող կարեկից մի ջերմությամբ: Եվ ուզում էինք մեզ համոզել, հավատալ, որ գալու է, անպայման գալու է մի օր, երբ ժամանակին թուրքի դեմ բազմաթիվ «կավալերիսկի» ու «շտիկավոյ ատակաների» ելած, բայց ի վերջո շատ դաժան պարտված ու Հայրենիք կորցրած այս մարդիկ, նորից կհագնեն հայկական բանակի իրենց համազգեստները և հայ գեներալների հրամանատարությամբ կարշավեն ու կգրավեն բազում-բազում քաղաքներ: Ու կբերեն, Կարսի բերդի պարիսպների տակ կնետեն այդ քաղաքների դրոշներն ու բանալիները: Եվ այդժամ, վերջապես կստանան Կարսից իրենց կողմից վաստակած ներումը և բոլորիս ճակատից վերջապես կսրբվի այն խարանը, որի անունն է «Կարս»: Ու հետո՝ հենց հաջորդ օրը, անպայման բոլորը կհավաքվեն դարսեցի Գրիգորի արհեստանոցում, կխոսեն մի քիչ դեսից-դենից և, երբ խոսքը հասնի Կարսին, էլ ոչինչ չեն խոսի, այլ բազմիմաստ իրար երես կնայեն խորամանկ մի ժպիտով և, բեղերները սրած, կոլիմեն մեզ՝ լրիվ այլ երանգով արտաբերելով. «Իբրը՛, էրեխեք ջան, ըղպե՛ս բաներ...»: Ու մեզ էլ «մարդատեղ դնելով» կավելացնեն անպատճառ. «մենք մերն էրեցինք, դե հիմի ձեզի տեսնինք...»:

Կարսը տեսնել ու ե՞տ դառնալ

...1988-ի փետրվարը վարպետ Գրիգորը դիմավորեց և ընդունեց մտավորապես այնպես, ինչպես ընդհատակում տարիներ անցկացրած գործիչը կդիմավորեր հեղափոխությունը: Չնայած իր ութ տասնամյակներին, նա պարտաճանաչ, միշտ սափրված, հագած-կապած ներկայանում էր բոլոր հանրահավաքներին: Հանդիպելիս պարտադիր հարցնում էր. «Լարսի մասին հըը խոսք չկա՞, Լարսը չե՞ն ուզե ետ առնին»: Հետո մեծահոգաբար «համաձայնվում էր» սպասել. «Հա՛, դե Լարսբաղն ու Նախիջևանը Սովետի կազմի մեջ են: Հլա թող էդոնք ետ բերեն: Լարսի հարցը ավելի դժվար է, էնիկ ուրիշ պետության մեջ է»: Հետո, կարծես արդարանալով, սկսում էր բացատրել իր անհամբերության պատճառները. «Էրեխեք ջա՛ն, իմ ըսելիքս, դարդս գիտե՞ք որն է. էս անտեր առողջությունս էլ էն չէ, իսկ Լարս մտնել մեր գորքերի հետ շա՛...ստ կուզեմ: Մեր տան բանալիքը մենք մեր հարևան թուրքի մոտն ենք թողել: Լավ մարդ էր: Թե ինքը հիմի չկա էլ, իրա տղեքը ինձի հաստատ կհիշեն: Բան էլ չեն ըսե, բանալիքը կուտան: Համ էլ գորքին կարամ ահագին օգուտ տամ, քաղաքը հինգ մատիս պես գիտեմ»: Իսկ Շուշին վերցնելուց հետո ռազմագետի կեցվածքով մեզ բացատրում էր. «Շուշին, ինչ խոսք, վերցնելը շատ դժվար է եղել, բայց Լարսը վերցնելն ավելի դժվար կեղնի: Էնտեղի բերդը շատ ավելի մեծ է ու հզոր: Բայց ես բոլոր ծակն ու ծուկը լավ կհիշեմ: Պետք էդնի մեր գորքին էնպե՛ս տանիմ որ, մե գինվորմ էլ չկորցնենք: Ու՞ր է, հըըը թե զարկեն»:

Այնհայտ էր, որ վարպետ Գրիգորը շտապում է: Շտապում է օր առաջ, ժամ առաջ նորից ոտք դնել Կարս: Վախենում էր դարսեցի Գրիգորը, շատ էր վախենում, որ կարող է հանկարծ չհասցնի: Եվ մենք, նրա «պատմության ֆակուլտատիվի» նախկին ունկնդիրներս որոշեցինք մեր վարպետին մի հաճելի անակնկալ մատուցել: Խիստ գաղտնիության պայմաններում տանեցիներից վերցրեցինք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և պապի ու իր 24-ամյա թոռան համար Կարս գնալու երկու ուղեգիր «դասավորեցինք»: Բերեցինք, հանձնեցինք, ծերուկին հաճելի զարմացրինք և պայմանավորվեցինք մեկնելու օրը՝ վաղ առավոտյան կրկին հանդիպել: Ուզում էինք դարսեցի Գրիգորին իր թոռան հետ հնարավորինս հանդիսավոր ճանապարհել դեպի Կարս:

Մեկնելու օրը պայմանավորված ժամին եկանք իրենց տուն և, ինչպես գյումրեցին կասեր՝ «մնացինք պլըշած»: Վարպետ Գրիգորը՝ իր «տան միջի շորերով», դեմը «թեթև սեղանը զգած», իրենց թախտի վրա նստած էր: Ամեն ինչից երևում էր, որ էդ մարդը այսօր հաստատ «ճամփա գնացող չէ»: Մենք, առանց բառ ասելու, համենայնդեպս, փորձում էինք հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել, կամ տեղի է ունենում: Լարսեցի Գրիգորը,

չգիտես դառը, թե մեղավոր մի կիսաժպիտով, աչքերը շուտ-շուտ թարթելով նայեց մեզ և հրավիրեց նստել.

- Նստեք հլա, էրեխեք ջան, նստեք:

Լցրեց բաժակները:

- Վայթեմ կմտածեք, թե կա-չկա էս բիձեն խելքը թոցրել է, ո՛չ հարգանք ու վերաբերմունք կհասկընա, ո՛չ էլ քովը շնորհքի կտոր է մնացել: Տնեցիք էլ ահագին ամոթանք տվին, թե՛ ա՛յ տնաշեն, քու էրածդ էնելու բան է՞, տղեքը գեշ կնեղենան: Չէ՛..է, տղեք ջան: Ես ձեր էրածից, վերաբերմունքից ու մեծարանքից շատ ու շատ գոհ եմ ու զգացված: Դուք էրել եք էն բանը, ինչը որ միայն հարագատ մարդը կուզենար հարագատի համար էնել: Բայց էն օրվանից, որ էս պասպորտը բերել եք, ես հա՛ կմտածեմ ու կմտածեմ. «ես ո՞ր կերթամ, ընչի՞ կերթամ, որպես ի՞նչ կերթամ»: Էրթամ Վարսը տեսնիմ ու ետ դառնամ, հա՞: Տո էդպես բան ի՞նչը կեղնի: Աշխարհի վրա էնքա՛ն սիրուն քաղաք կա, թեկուզ նույն Թուրքիայում: Կարելի է էդոնք էրթալ տեսնել ու ետ գալ: Բայց ես, Վարսի ծնունդ, Վարսի վաստակ՝ էսօր էրթամ «տուրիստի պես» Վարսը տեսնիմ ու ետ գա՞մ:

Հետո շուտ եկավ տանեցիներին, թոռանը. «Ահան, ես իրանց էլ իմ մտածածս բացատրեցի: Փառք աստծո, հասկըցան»:

Մի պահ լռեց ու շարունակեց.

- Վարսը իմ տունն է, իմ ընտանիքս է, իմ հողս է ու իմ ծնողս է: Ու էդ ամեն ինչը իմ ձեռից էսօր գոռով խլած է, ինձ էլ վտարած: Էսօր իմ Վարս էրթալը, էդ քաղաքը տեսնելը ու ետ դառնալը նույն բանն է, ոնց որ թե ես գաղթագողի էրթամ, մտնիմ էն տունը, որտեղ որ կպահեն ինձնից գոռով խլած-տարած իմ կնոջս ու էրեխեքիս: Տեսնիմ իմ կնոջս ուրիշի ծոցը,- թող ների ինձի իմ լուսահոգի Գոհարս,- տեսնիմ իմ էրեխեքիս ուրիշին նոքյար ու ետ գամ պատմեմ բոլորին. «տեսա, լավ էին, շա՛տ լավ էին»: Դուք ըսեք, տղեք ջան, ո՞վ եմ ես էդորից հետո, ի՞նչ մարդ եմ ես:

- Դուն էլ խոսմ օրինակ չբերեցիր, տնաշեն,- փորձեց հորը «կարգի հրավիրել» ավագ որդին: Կռռեկտության շրջանակներում մնալու այդ կոչից վարպետ Գրիգորը, որն իրականում չափազանց մաքրալեզու անձնավորություն էր, ասես մի տեսակ ամաչեց, և դրանից՝ էլ ավելի հուզվեց ու վրդովվեց:

- Տո, խելքի պուտու՛կ, - դիմեց նա որդուն: Տարիների շփումից մենք լավ գիտեինք, որ վարպետ Գրիգորի «խելքի պուտուկը» մեր ժամանակակից հայերենով թարգմանած նշանակում է «ա՛յ դեբի լ»:

- Դուն խոսքերիս վրա կուգաս, կուզես ըսել, թե էրածս համեմատումը հաջող չէ: Բայց ուրիշ ի՞նչ օրինակ բերեմ: Իսկական իրողությունը իմ ըսածիցս հազար անգամ բեթար ու բեթար է: Ի՞նչ կնշանակե, թե թուրքն էսօր հոժարակամ ու սիրով կսե թե. «Վա՞րսը կուզեք տեսնիք: Խնդրե՛մ, բարով, հագա՛ր բարի: Արեք տեսեք ու գնացեք»: Էդ կնշանակե, որ էս կող-

մից էլ վախ բոլորովի՛ն չունի, որ էդ հողերը արդեն վերջնական իրանով էրած կհամարեն, հիմի էլ մեր վրա կխնդա. «Քե՛ շատ կուզեք, արեք ձեր երկիրը տեսեք ու հետ դարձեք, մենք թույլ կուտանք»:

- Եթե ես կերթամ Ղարս, ուրեմն էդ ամենը կամ պտի ետ բերեմ, կամ էլ գոնե գոհվիմ ետ բերելու քայլմ էնելուց: Թե չէ, հակառակ դեպքում, ո՞վ եմ ես: Ի՞նչ հայացքով կնայեն ընձի թուրքերը, երբ որ էրթամ, էս բոյովս մեկ կայնիմ մեր դռան առաջ ու հպարտ-հպարտ հայտարարեմ. «ա՛յ, ժողովուրդ, տեսե՛ք, էսիկ առաջ մեր տունն է էղել»: Հետո էլ «կրուգոմ մառշ» էնեմ ու թիք-թիք ետ գամ: Չե, տղեք ջան, չէ՛: Իմացել եմ, շատերը հիմի կերթան-կուզան, իրանց տները գտնող էլ է էղել: Ես կրնա կարոտից էստեղ ցամքիմ, բայց չեմ կրնա տուրիստի պես էրթալ, Ղարսը տեսնել ու ետ դառնալ: Չէ՛. «էդ քաղաքը ես մեկ էլ կըրնամ ոտք դնեմ մենակ ու մենակ տան տիրոջ պես՝ տեսնիմ ու մնամ, ետ չդառնամ»:

Սա վարպետ Գրիգորի վերջին ու ամենակարևոր դասն էր...

Որպես հետգրություն.

Երեք տարի անց, երբ հողին էինք հանձնում վարպետ Գրիգորին, տղաներից մեկը, արձագանքելով դագաղի վրա թափվող կոշտերի դրխկոցներին և, կարծես վերջնականորեն փակելով դարսեցի Գրիգորի պատմության «դասընթացները», ժպտալով ասաց.

- Մեկ անգամ ևս կորցրինք Կարսը...

Փետրվար, 2000թ. - հուլիս, 2007թ.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԸ

Չոհվել էր մեր ջոկատի հրամանատարը՝ներ Արտոն: Գլուխը վա թերզյանների թարգմանց տոհմի շառավիղ, Սկրտիչ Ալիխանյանի՝ վարպետ Մուկուչի կրտսեր որդին: Էդ հետո, ավելի ուշ, տեղի ՀՅԳ կոմիտեն կանվանակոչվի իր անունով՝ «Արտավազդ Ալիխանյան», իսկ իրեն՝ Արտոյին, հետմահու կախարակատրեն «Մարտական Խաչով»:

Իսկ հիմա... Հիմա 92-ի հունիսի վերջն է, և մենք, Արտոյի շիրիմին հերթական անգամ «Քանդիպելուց» հետո, էլի խմում ենք՝ գերեզմանատան հարևանությամբ տնակների մեջ հարմարեցված ռեստորանում: Ազատականացման հայկական տարբերակը ենթադրում է նաև նման հաստատությունների գոյությունը՝ «ու՞մ ինչ գործն է, խոսմ օրենք չեմ խախտել»: Դե որքանով, որ այդ պանդոկատերն էր առաջնորդվել էթիկայի կանոններով, նման վայրում ռեստորան բացելով, լրիվ նույնքանով էլ գլուխըցիք էին պահպանել այդ նույն նորմերը, տարբեր «Հացատունների», «Վերնատունների» և «Գինետունների» օրինակով՝ այս հաստատությանը կպցնելով սզազարդ ու սևի-մ-ռայլ՝ ռեստորան «Մեռելտուն» անունը: Հետո «Մեռելտունը» փակվեց, իսկ Ստեփանակերտում, օրինակ, մինչ օրս էլ լավ «օրոռոտ» ունի նույնպես գերեզմանատան հարևանությամբ գտնվող՝ ժողովրդի մեջ որպես «Ժիվիյե ի մյոթսովիե» անունով հայտնի մի ռեստորան:

... Իսկ հիմա, ընկճված ու մի տեսակ ինքներս մեզ կորցրած, լուռ խմում ենք Արտոյի հոգու հանգստյան համար: Այդ շիրիմաձուլության ու ընկճվածության պատճառը զուտ հարազատ ու լավ մարդու կորուստը չէր: Մեր մեջ Արտոն միակն էր, ով որոշակիորեն տիրապետում էր ռազմական գործին, կամ ինչպես ինքն էր կատակում՝ պատերազմում, բացի գոհվելուց, ուրիշ ինչ-որ բաներ էլ ի վիճակի էր անել:

... Երբ մեր մոտ սկսվեցին 88-ի իրադարձությունները, Արտոն իր ընտանիքով՝ կնոջ ու երկու երեխաների հետ Ռուսաստանում էր, բավականին «հարմար» մի աշխատանքի: Հայաստան վերադարձավ երկրաշարժից անմիջապես հետո՝ 88-ի դեկտեմբերի կեսերին: Չնայած, որ աղետը զգալի հարված էր հասցրել հայրական տանն ու հարազատությանը, Արտոն միանգամից և անբողջովին սուզվեց արցախյան պայքարի մեջ: Ունենալով իր «զինանցում» ծառայությունը խորհրդային բանակում և հրետանու ուսումնարանում սովորելու երկու տարիները, Արտոն, կարծես շտապելով լրացնել բացթողածը, ձգտում էր հնարավորինս արագ ներգրավվել «խսկական գործի» մեջ: Սկզբից փոքրաթիվ խմբով նա ուղարկվեց Հաղուրթ, մասնակցեց Տոհի ազատագրմանը: Հետո՝ Քարինտակ, Խոջալու, ևս մի քանի «դեսանտ» Հաղուրթի ենթաշրջան: Եվ հենց «խսկական գործի» մեջ էլ Արտոն շատ շուտ դրսևորեց իրեն: Նրա կարծիքը գնահատում և հաշվի էին առնում, հրամանատարությունն ու

զինակիցները վստահում էին Արտոյին, ի դեմս նրա՝ տեսնում հուսալի և սառնասիրտ մարտիկի, որի վրա միշտ կարելի է հենվել: Իսկ պատերազմում, ինչպես հայտնի է, «դատարկ տեղը» կարելի է թերևս ձեռք բերել մեղավներ ու շքանշաններ, կոչումներ ու մի քանի «մարտական ուղի», բայց երբեք՝ իրական հեղինակություն և կայուն հարգանք մարտիկների շրջանում:

Եվ ահա 92-ի մայիսի վերջն է: Մայիսյան հաջողություններից արբեցած էին բառացիորեն բոլորը՝ թե՛ ուղղակի, թե՛ փոխաբերական իմաստով: Լ.Ղ.Հ հռչակումից հետո անցած ընդամենը մի քանի ամիսների ընթացքում նոր-նոր ձևավորվող բանակի կողմից իրականացրած հաջող մարտական գործողությունների շնորհիվ ապաշրջափակվել էր Ստեփանակերտը, ազատագրվել Շուշին՝ «բացվել» Լաչինը: Դեռ մեր ձեռքում էր Շահումյանը: Ռազմաճակատում ակտիվ գործողություններ չէին ձեռնարկվում, ինչպես ասում են՝ «ճակատային զիծը կայուն էր»: Բայց բոլորն էլ հասկանում էին, որ դա պարզապես կարճատև մի հանգիստ է, ժամանակավոր մի ընդմիջում-դադար: Չկար մեկը, որ համոզված չլիներ. «շուտով կսկսենք նորից առաջ գնալ՝ այն էլ բոլոր ուղղություններով»:

Արտոն վազքի, եռուզեռի մեջ է: Մի քանի օրով Հաղորդից եկել էր, որպեսզի հասցներ ցանել Ամասիայում վարձակալած իր հողակտորը՝ դե ընտանիքին բառացիորեն «հաց ապահովել» գոնե պետք է, չէ՞: Ինքը շտապում է ու շտապեցնում բոլորիս. «ե՞րբ ենք դուրս գալիս»:

Մայիսի 25-ի առավոտյան դագանչեցի Սամվելի (Ֆռանկի) «Ուրալով» ջուկատը մեծ չէր, մոտ մի դասակ, ճանապարհվեցինք դեպի Ղարաբաղ: Ինչպես և պայմանավորվել էինք, տնեցիների հետ «մնաս բարով» արել էինք տանը և հավաքատեղում՝ ավերված «Ամենափրկիչի» դիմաց, ճանապարհողներ չկային: Միայն վարպետ Մուկուչն էր «խախտել» պայմանը և վեր կացել, առավոտ վեցին եկել ջուկատը ճանապարհելու: Արտոն բռնկվում է. «Է՛ս ինչ բան է, է՛նչ թուլություն է, խոս հնդկական կինո չէ՞»: Վարպետ Մուկուչը համբերատար լսում է, ժպտում «մեծավարի» ներողամտորեն. «Մի հերտտի, Արտո ջան: Էդքան անգամ դրկել եմ, չեմ էկել: Է՛ս մե թաք անգամն էլ գամ: Ի՞նչ կեղնի, որ: Մեկել էրթալուտ էլ չեմ գա, լա՞վ»: Է՛հ, վարպետ Մուկուչ: Հա՛յր դու ու ծնող: Գիշերն էլ, երբ Արտոյի հետ վերադարձանք կատարած «ստուգայցից», որպեսզի համոզվեինք, որ բոլորը պատրաստ են առավոտյան մեկնելուն, և Արտոն սկսեց հավաքել ուսապարկը ու հետո էլ անցավ իր «պողովորոտնիչոկը» կարելուն, դու համառորեն ընդդիմացար Արտոյի հորդորների՝ «Պա՛, գնա պառկի, ինչի՞ ես մտել», թե՛ «չէ՛, Արտո ջան, հետներդ կմտտիմ»: Երևի հայրական սիրտդ ինչ-որ մի բան կանխագզում ու վկայում էր: Իրոք որ, ամեն անգամ ճանապարհել էիր շատ զուսպ ու վստահ՝ իլս մի բան էլ սաստեղով կնոջդ ու հարսիդ. «Արցունք չտեսնի՛մ: Խոսմ խոսպան, կամ Աֆղանստան չի՞ էրթա: Իրա երկրի համար կերթա, մեզի համա՛ր կերթա: Ու համ էլ՝ կամավո՛ր կերթա: Հե՛ջ մեկի գոռելով չի էրթա»: Իսկ էս անգամ «թթուրդ չտարավ»,

վեր կացար, եկար հրապարակ... Էդ հետո, Արտոյի գոհվելուց ամիսներ անց, դու, տեսնելով, որ էլ ապրելու հնար չկա, կսկսես ավել վերավաճառել շուկայի դռանը և արևդեր ու այլ ապրանքներ կրել մոտակա խանութում: Եվ խիստ «հայրենասեր» խանութպանը ամեն պատեհ-անպատեհ առիթով, որպես մի այցեքարտ, կշահարկի քո կարգավիճակը՝ իր դուքյանը գովազդելու համար. «Գիտե՞ք ով է: Կոված տղու հեր է: Տղեն Ղարաբաղ խփվել է»: Իսկ ավելի «հայրենասեր» իր այցելուն «աղավարի» կառաջարկի. «Գե՛ր ըսեք թող գա, բաժակըմ բան խմե՛ք»: Եվ դու, բնականաբար կմերժես, իսկ երբ շատ «վրա մնան», գրեթե գոռալով «կըբացատրես». «հասկըցի՛, չե՛մ ուզե, ես չե՛մ կըռնա խմե՛ք»: Եվ նա էլ «կհասկանա՝ «Ի՞նչ կըռնանք ըսել: Մարդու առողջականը չի ներե»: Իսկ այսօր դու՝ որդուդ հոժարական պատերազմ ուղարկող հայր ես...

Գիշերեցիկը Գորիսում և հաջորդ օրը կեսօրին հասանք Շուշի, որտեղ այդ ժամանակ տեղակայված էր լիբանանահայ դաշնակցական Ժիրայր Սեֆիլյանի՝ բոլորին հայտնի, պարզապես՝ Ժիրոյի գումարտակը: Մեր եկած ջուկատն էլ համարված էր բացառապես դաշնակցականներով և տեղում ցուցակը «ձեռքից ձեռք» հանձնեցիկը Հրանտ Մարգարյանին, ինքն էլ ուղարկեց Ժիրոյի գումարտակ: Իսկ «փրկվա կողմ» համոզվեցիկը, որ մեր գոբանչները բոլորիս չափազանց շատ են սիրում, կամ էլ սիրելու են: Նշվում էր ութերորդ վաշտի հրամանատար Վազիֆի ծննդյան օրը: Չնայած Արթուր Սկրտչյանի գոհվելուն, Լեռնային Ղարաբաղի այդ օրերի ղեկավարությունը դեռ հիմնականում դաշնակցական էր և այդ փաստին համապատասխան էլ ներկայացված էր քեֆի նախագահությունը: «Գլխավոր սեղանին» նստած էին ԼՂՀ ԳԻ նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը, ԼՂՀ մշտական ներկայացուցիչը Հայաստանում՝ Մանվել Մարգարյանը, Հրանտ Մարգարյանը և «այլ պետական և կուսակցական գործիչներ»: Իսկ կենտրոնում ինքը՝ հրամանատարը, գեղեցկադեմ ու ժամանակից շուտ ճերմակած, ինչն ավելի էր ընդգծում նրա տղամարդկային հմայքը: Ականջիդ էին հասնում, երևի թե, ներկայումս «գործող» հայկական բոլոր բարբառները՝ դարաբաղցիների և հայաստանցիների հետ խառնվել էին նաև սփյուռքահայեր՝ աշխարհի տարբեր ծայրերից. դե էդ մի բանը, ինչպես ասում են, հայերիս աստված տվել չի խնայել: Հնչում էր «կենդանի» երաժշտություն, երգում էր «կենդանի» դիպլոմավորված բարիտոն, Կոմսերվատորիայի շրջանավարտ, ազատամարտիկ Տիգրանը՝ իր նրբագեղ արվեստին խիստ անհամապատասխան «Բետոն» մականունով: Երգ, պար, ծիծաղ, ցնծություն, խրախճանք՝ հայերը քե՛ֆ են անում ազատագրված Շուշիում...

Իսկ տասը-տասնիինգ օր անց սկսվեց այն, ինչը հնարավոր չէր ենթադրել նույնիսկ ամենամռայլ կամխատեսումներում. գույժը գույժի ետևից... Մեկ-երկու օրում ընկավ Շահումյանը, հակառակորդը արագորեն առաջ էր շարժվում, անցել է արդեն Թարթարը, գրավված են արդեն Մարտակերտի մի շարք աջափնյա գյուղեր: Նորից ինչքն ու հարազատներին կորցրած մարդիկ, նորից փախստականների զանգվածներ:

Նախկին հաջողություններից բոլորին պատած գլխապտույտն ու էյֆորիկ ցնծությունը միանգամից վերածվեցին անճարակության ու տագնապի՝ նույնիսկ խուճապի վերածվող խառնաշփոթի: Մեկ-մեկ արդեն այստեղ-այնտեղ սկսեցին հնչել «հայկական իմաստությունները»՝ «մենք ո՞վ ենք, որ հող գրավենք, քաղաք վերցնենք: Ամենաճիշտը կլիներ, որ խելոք տեղներս նստեինք»: Բայց բոլորը իրոք շփոթության ու սոսկումի մեջ են և չեն կարողանում հասկանալ, թե էդ ի՞նչ հրաշք տեղի ունեցավ, որ դեռ երեկ խայտառակ փախուստի դիմած աղբբեջանական բանակը, այսօր արդեն ի վիճակի դարձավ անցնել այդքան հաջող հակահարձակման: Շահումյանից եկած ականատեսների վկայությունները ամեն ինչ «փրենց տեղը դրեցին»:

Գուլիստանը, ինչպես և մեկ տարի առաջ Գետաշենը, մենք հանձնել ենք՝ ոչ թե նահանջելով աղբբեջանական բանակի հարվածների տակ, այլ, պարզապես, չդիմանալով Կիրովաբադից բերված ռուսական դիվիզիայի տանկերի հարձակմանը...

... Հունիսի տասին Արտոն, իր ենթակայությանը հանձնած վաշտով, դիրքավորվեց Սրխավենդի մոտ: Խնդիր էր դրված՝ համագործակցելով մյուս գորաջոկատների հետ ցանկացած գնով մեր ձեռքում պահել Ադդամ-Մարտակերտ ավտոճանապարհի և Խաչենագետի վրայի կամրջի հսկողությունը: Որպեսզի մի կողմից Շահումյանի և Մարտակերտի գյուղերից եկող փախստականների հոսքին հնարավորություն տրվի առանց կորստի անցնել-հասնել երկրի խորքը, մյուս կողմից՝ հնարավորություն չտրվի հակառակորդին լրացուցիչ օժանդակ ուժեր տեղափոխել Ադդամից դեպի հյուսիս: Չնայած թշնամին արդեն Չլդրանի մատույցներում է, արդեն գրավված է և մեր աչքի առաջ հրկիզվում է Կիչանը, սակայն՝ ճանապարհը դեռ մնում է մեր հսկողության տակ: Հունիսի տասնհինգին մի լայնածավալ ու կատաղի մարտ սկսվեց Սրխավենդի մոտ: Ինչպես վկայել է Բաքվում կայացած մի դատավարության ժամանակ այդ մարտի մասնակից՝ Ջալիլաբադի գումարտակի զինվոր Ի. Հուլիևը. «...Այդ մարտում մեր գումարտակից 46 հոգի ընկան շրջապատման մեջ և շատերը զոհվեցին: Թշնամին խփեց երեք տանկ և մեկ հետևակի մարտական մեքենա...»: Բայց միևնույն է, հաշվի չառնելով շոշափելի կորուստները, աղբբեջանցիները ամեն գնով ձգտում են հաջողության հասնել: Որպես այդ հատվածում դրա կասեցման գործողություն, մեր հրամանատարությունը որոշում կայացրեց գրավել Ադդամի մոտակայքում գտնվող Ալի-Ադալի բնակավայրը: Արտոն, ստանալով հրամանը, իշխող բարձունքի վրա թողնելով ծայրահեղ անհրաժեշտության դեպքում մեր նահանջն ապահովող մի ջոկ, իր հետ վերցնելով առավել փորձված մարտիկներին, շարժվեց դեպի գյուղ: Համաձայն մեր հետախուզության ունեցած տվյալների՝ գյուղում հակառակորդի փոքրիշատե զգալի ուժերի կուտակում, առավել ևս զինտեխնիկա, չպետք է լիներ: Բայց ծայրամասի տների մոտ, վերջին հատվածն անցնելու պահին, գրոհողներին դիմավորեց աղբբեջանցիների կրակահերթերի տարափը, թաքստոցից սկսեց «աշխատել» նաև տանկը:

Մեր գրոհը կասեցվեց և ի վերջո «խեղդվեց»: Մարտի դաշտից շտապ սկսեցին դուրս բերել սպանվածներին և վիրավորներին: Մնացածը, անցնելով գետակը, աննկատ, մեկ-մեկ ցրված, վերադարձան մեր դիրքերը: Այդ պահին չկարողացան գտնել երկու հոգու՝ մեր Արտոյին և մի զինվորի՝ Ստեփանակերտից: Ինչպես պատմեց բուժքույր Ադունիկը, գետակն անցնելուց հետո ուղղակի կրակոցով նրանց «ծածկել էր» թշնամու տանկի արկը:

Ընդամենը մի քանի ժամ անց Ալի-Ադալի գյուղը մեր ձեռքում էր: Բայց դա իրականացրեց արդեն մեկ այլ ջոկատ: Եվ առանց մեծ ջանքերի ու կորուստների. մեր առաջին գրոհից հետո, աղբբեջանցիները սկսել էին ետ քաշվել գյուղից: Այդ մարտը, ինչ խոսք, երբևիցե չի կարող հայտնվել նույն շարքում, ասենք Աուստերլիցի կամ Ստալինգրադի հետ: Բայց, ինչպես ասված է. Աստծուն՝ Աստծունը, Կեսարին՝...

Եվ ահա մենք նստած ենք «գերեզմանամերձ» տնակային ռեստորանում և որերորդ անգամ խմում ենք Արտոյի կենդանի կենացը: Հարևան տնակ-ճաշարահից լսվում է դուդուկի մեղեդին: Հրավիրում ենք «կվարտետը» մեր մոտ: Բոլորի դեմքերն էլ ծանոթ են՝ մեր քաղաքի «Ռաբիսի» նվագողներն են: Հարսանիքներին և նույնիսկ թաղումներին նրանց հրավիրելը խիստ պակասել է. 92 թվականն է: Ինչպես ասում են «սպրեյ-մեռնելու» տարի է: Դե էս մարդիկ էլ այսօր էս եղանակով են իրենց օրվա հացը վաստակում: Նվագեցին մեզ համար մի քանի տխուր «մեռելի դայրա»: Խնդրում ենք նրանց, որ նվագեն մի ինչ-որ խորոխտ, մարտական մի բան: Ոչ թե ի հիշատակ, այլ ի փառս մեր հրամանատարի: Մրանք՝ կիսասափրված ու կիսահարբած, ճմրթված ու հոգնած, մի պահ լռեցին, խորը շունչ քաշեցին, լրջացան «ըռքեցին» իրենց գործիքները... և հեղձուցիչ, մեռելապաշտության թանձր օդով լցված տնակային այդ պանդոկում, անհավանական, ֆանտաստիկ մի գործիքավորմամբ, հանկարծ հնչեց մեր երկրի օրհներգը. Հայաստանի Հանրապետության օրհներգը՝ «Մեր Հայրենիքը»: Բոլորս կանգնեցինք՝ ինչպես շարքում: Վերջին հնչյուններից հետո լուռ կանգնեցինք ևս մեկ-երկու րոպե և դուրս եկանք: Առանց իրար մի խոսք ասելու, բոլորս հասկացանք, որ ա՛յ, հենց ա՛յս պահին վերջը դրվեց մեր անճարակության, մեր հուսահատության, ուստիև՝ «արդարացված հարբեցողության»:

... Երկու օր անց ջոկատը գրեթե լրիվ կազմով՝ Մամվելի «Ուրալով» դուրս եկավ դեպի Ղարաբաղ: Նոր հրամանատարի ընտրություն այլևս չանցկացվեց. ջոկատը պարզապես ներառվեց արդեն պատրաստի՝ նույն Ժիրոյի գումարտակի կազմում:

Ամեն տարի, մեր հրամանատարի զոհվելու օրը, մենք վերցնում ենք այն հռչակավոր «քվարտետը» և ուղևորվում քաղաքային գերեզմանատուն: Եվ մեր Արտոյի ու գյումրեցի մյուս ազատամարտիկների շիրիմների վրա, այն պարզունակ գործիքավորմամբ ու պարզահունչ կատարմամբ, թևածում է Հայաստանի Հանրապետության օրհներգը՝ «Մեր Հայրենիքը»:

Հունիս, 2002թ.

«ՊՈՍԵԸ»

...92-ի մայիս: Համազգային գինարբուք, ցնծություն ու բերկրանք, հպարտություն, մեծախոսություն ու պարծենկոտություն: Շուշին վերցված է, Լաչինի «միջանցքը» բացված՝ էլ մեզ բռնե՞լ կլինի: Արդեն խոսում են Բաքուն ու Կիրովաբադը վերցնելու մասին: Շատերը, որ նախորդ երկու-երեք տարիներին «ծակերն էին մտել», կամ էլ, լավագույն դեպքում, «պատի հետևից ծկլատելով» էին հետևում կատարվող իրադարձություններին, հատկապես ճակատային գիծ մեկնողներին, այսօր լույս աշխարհ են եկել: Նրանք խիստ մտահոգված են և հիասթափված՝ ուշացել են հաղթական պատերազմից և այդքան մատչելի ու մոտ թվացող փառքը կարող է հանկարծ շրջանցի և մոռանա իրենց: Բա դա ո՞նց կլինի: Բա իրենք էլ են չե՞ հայ, ապրել են այս երկրի վրա՝ այդ նույն թվերին, այդ նույն օրերին, բոլորի հետ նույն օղը շնչել... Եվ հիմա, միմյանց «արա-սրա» չտալով, տղաները շտապում են հնարավորինս արագ լրացնել բաց թողածը:

Նոր, արդուկած «կամուֆլյաժները» հագած, ոտքներին թանկանոց «աֆիցերսկի բատինկեքը» քաշած, մի պարկ այլուր, մի կողով ծխախոտ, կամ մի տակառ բենզին շալակած՝ «արագ արձագանքման ուժերի» այս «զինվորները» պատեհ-անպատեհ առիթով, ամեն գնով «քցվում են» Ղարաբաղ: Ձգտում են ամեն գնով, շուտափույթ վավերացնել, հավաստիացնել Ղարաբաղում երբևէ իրենց գտնվելու փաստը: Ասենք՝ լուսանկարվել խփված-այրված աղբբեջանական տանկի մոտ, կամ մեր զինվորների հետ՝ մեր տանկի վրա, կամ էլ, եթե երեսները պնդեն՝ հայտնի մի հրամանատարի և նույնիսկ՝ ԼՂՀ ղեկավարներից մեկի հետ: Էլ չենք խոսում տեսախցիկի, բնական է՝ թանկանոց, անսպառ հնարավորությունների մասին: Դե՞ ինչ: Առանց նման մարդկանց երևի թե պատերազմն էլ պատերազմի նման չի լինի: Նրանք ցանկացած պատերազմի անխուսափելի ու պարտադիր «ուղեկիցներն» են: Պատերազմում նվազագույն կորուստ տվողները և պատերազմից առավելագույնս շահողները: Հենց նրանց համար է ռուսն ասել, թե՝ «кому война, кому мать родна»:

Իսկ բուն Շուշիում այդ երեկո նշվում էր Նարեշտարից վերադարձած ջոկատի հաջողությունը: Սովորական զինվորական մի քեֆ՝ անասհման խմիչքով ու ուտելիքով, երգով ու ծիծաղով, իրար ետևից օդ արձակվող կրակոցներով ու հայիոյանքներով, ուր «ողջն» ու «օղորմին» միահյուսված են, ուր չկան հրավիրվածներ ու չկան հրավիրողներ, ուր հարբածը օյաղից չի ջոկվում, կատակողն էլ՝ վիճաբանողից ...

Չինվորներից մեկի հետ որոշեցինք մի քիչ զբոսնել, թարմանալ: Քաղաքը վերցնելուց հետո մեզ համար գորանոց ծառայող նախկին զբոսաշրջու-

թյան կենտրոնի մուտքի մոտ կանգնած էր ժամապահը: Ոչ շարային կեց-վածքով, կախ ուսերով, ծանրամարմին, հիսունը հաստատ անցած մի մարդ: Փողը դեպի ներքև ուղղած «Կալաշնիկովը» նրա ուսին դիտվում էր ավելի շուտ որպես ինքնաձիգի ինչ-որ ուսումնական մի նմանակ, քան որպես անեղ մարտական զենք: Դեմքն էլ խիստ այլակերպված, ինչը սովորա-բար լինում է ուժեղ նյարդային ցնցումների պատճառով: Մենք մոտեցանք նրան և շատ «հայավարի» հորդորեցինք գնալ ներս՝ «մի կտոր հաց ուտել»: Նա, մի տեսակ խուսափողական, թե՛ «չէ, չեմ ուզում»: Հետո էլ, թե՛ «պոստի եմ»: Դե ի՞նչ անլուծելի հարց կարող է լինել զինովցած հայերի համար.

«Ա՛յ ցավդ տանեմ, արի հրամանատարիդ ասենք, մե՛նք քեզ փոխարի-նենք: Դու գնա մի քիչ քեֆ արա»:

Մոտ կանգնած, իրեն ճանաչող զինվորներից մեկը մոտեցավ մեզ. «Հանգիստ թողեք էս մարդուն, միևնույն է, չի՛ գնա: Ուխտ է արել՝ պոստից չհեռանալ»:

Մենք լռեցինք և, գիտակցելով, որ տարիքն առած այդ ժամապահը հենց այնպես, առանց մի պատճառի չէ, որ հրաժարվում է խնջույքին մաս-նակցելուց, այլևս չչարունակեցինք: Թողնել գնալը մի տեսակ տգեղ էր, հենց էնպես կանգնել մնալն էլ՝ անհեթեթ: Եվ ինչպես միշտ է լինում նման իրավիճակներում, դիմեցինք ամենահուսալի «փրկության օղակին»՝ բո-լորս կպցրեցինք ծխախոտները: Սի որոշ ժամանակ լռելուց հետո, խո-սակցականը խիստ խախտված, հազալով, ցածր խռպոտ ձայնով ժամա-պահ-պահակը դիմեց մեզ.

- Տղերք ջան: Իմ միակ տղեն զոհվել է էստեղ՝ Շուշիի գրավման ժամա-նակ: Ուրիշ երեխա չունեմ: Տղիս թաղումից հետո կնոջս ասացի, որ տանը մնալ չեմ կարող: Վեր կացա եկա էստեղ՝ տղայիս գորամասը: «Բոյ» ինձ չեն վերցնում՝ հիսունյոթ տարեկան եմ: Ահա՛ն, տեսնում եք՝ ծառայում եմ, «պոստն» եմ վստահել: Ես էլ ուխտել եմ՝ «պոստից» չհեռանալ:

Հոկտեմբեր, 1994թ.

ԵՐԿՈՒ ՄՈՍԿՎԱՅԻ՝ ԵՐԿՈՒ ԲԱՆԱԿ

...92-ի աշունն էր: Բեռներ էինք տանում Հաղորոթի պաշտպանական շրջան: Վաղ առավոտյան, երբ Ստեփանակերտում դուրս էինք գալիս բանակի շտաբից, դեպի մեր մեքենան վազեց սլավոնական դիմագծերով «Քարտյաշ մի պատանի» և «ռուսաստանյան» ռուսերենով հարցրեց.

- Կարող է՞ Կարմիր Շուկայի միջով եք անցնելու:

- Հա, հենց այդ ճանապարհով էլ գնալու ենք: Իսկ քեզ ի՞նչ է պետք:

- Եթե հնարավոր է, ինձ էլ ձեր հետ մինչև Կարմիր Շուկա վերցրեք:

- Իսկ ու՞մ ջոկատն ես գնում, ո՞ր գորամասից ես:

- Ոչ մի ջոկատ: Գիշերը մեզ տեղափոխելու են դեպի «վերև», հլա մի տասը-տասներկու ժամ ժամանակ կա, ուզում եմ տատիս հանդիպել:

Ու ծիծաղում է.

- Բարուլյայիս շաքար եմ տանում: Երբ թեյի հետ շաքար չի լինում, շատ է նեղվում:

- Ի՞նչ տատ, ա՛յ տղա: Ի՞նչ է, ժամանակին տատդ հայ ամուսի՞ն է առել: Հո պապդ նախորդ պատերազմից հետը չի՞ բերել:

- Ո՞նց թե «հայ ամուսին է առել»: Ամուսինը՝ պապս էլ է հայ, հենց ինքը՝ տատս էլ է հայ. տեղացի է՝ Գրախտիկից:

- Բայց դու ռուս չե՞ս:

Ծիծաղում է.

- Կիտով չափ: Մոսկվացի եմ: Մայրս է ռուս: Հայրս հայ է: Էստեղից է, Ղարաբաղից:

Բանակում Մոսկվայում է ծառայել: Մորս հետ ծանոթացել է, ծառայությունից հետո ամուսնացել են և մնացել է այնտեղ:

- Էդ հասկացանք, բա դու էստեղ ո՞նց ես հայտնվել: Հո Ստեփանակերտի գնդում չէի՞ր ծառայում:

- Չէ՛...է: Ես Բելառուսիայում եմ ծառայել: Երկու-երեք տարի մենք հեռուստատեսությամբ ուշադիր հետևում էինք, թե էս կողմերում ինչ է կատարվում: Երբ հասկացանք, որ հայերի և թուրքերի միջև պատերազմն արդեն սկսվում է, մեր բակից չորս ամենամոտ ընկերներով հավաքվեցինք և եկանք Ղարաբաղ: Երկուսն իմ նման խառնածին են, իսկ մեկը՝ մաքուր ռուս: Ասեց ես էլ կգամ, քրիստոնյա եմ: Մեր շանն էլ ենք մեզ հետ բերել: Մեզ էստեղ հետևակի մարտական մեքենայի վրա նստացրին: Վաշտում մեզ այդպես էլ կոչում են՝ «չորս տանկիստ և շունը»:

- Իսկ տանը հեշտությամբ համաձայնեցին, որ գաք:

- «Հեշտությամբ համաձայնեցին»: Ի՛նչ համաձայնել, ի՛նչ թույլ տալ: Փախել-եկել ենք: Երևանից զանգեցինք, հետո էլ նամակ գրեցինք, թե

ամեն ինչ լավ է, «ողջ ենք և առողջ»: Մի երկու ամիս հետո հայրս եկավ, գտավ ինձ ախտեղ ու թե «հավաքվի, տուն ենք գնում»: Ես էլ իրեն, թե՛ շատ լավ է, որ եկել ես, տեսնվեցինք, խոսեցինք, բայց ես տուն չեմ գա: Ես մնում եմ ախտեղ՝ Ղարաբաղում: Սկսեց վրաս գոռոռալ, ես էլ իրեն հիշեցրեցի. «թե դու չէի՞ր, որ բացատրում էիր, որ այդ բոլորը մեր հողերն են»: Մի տեսակ անակնկալի եկավ ու լռեց: Այդ պահին շարք կանգնելու հրաման հնչեց: Ես իրեն թողեցի ու շարք կանգնեցի: Հայրս մնաց մեն-մենակ կանգնած: Մի տեսակ մոլորված ու շփոթված: Նայեց ինձ, ինչ-որ բան ասաց, չլսեցի, մեկ էլ եկավ ու ինքն էլ զգաստ կողքիս շարք կանգնեց: Նույն դասակում ենք: Վերջերս վիրավորվել էր, հիմա հոսպիտալում է: Գնում եմ տատիս գգուշացնեմ, որ ինձ տեղափոխում են, իսկ հորս էլ, հավանաբար, հոսպիտալից հետո մի տասնհինգ-քսան օրով տուն թողնեմ...

...93-ի ամառն էր: Աղդամը վերցնելուց մոտ մեկ շաբաթ առաջ: Արդեն քանի օր է դիրքերում մի տեսակ անսովոր, ծույլ-ալարկոտ դադար էր: Պատահում էր, որ թե՛ մեր կողմում, թե՛ նրանց կողմում, ամբողջ հասակով մեկ անցնում էին դիրքից-դիրք և ոչ մի պատահար: Լինում էին անկանոն, «հենց էնպես» մեկ-երկու կրակոց, ու վերջ: Այնպիսի համընդհանուր մի թմբիր էր պատել բոլորին և ամեն ինչին, որ թվում էր, թե նույնիսկ գնդակը ալարում է թռչել այդ մածուցիկ տաք օդով և շտապում է վայրկյան առաջ գետնին ընկնել:

Հանկարծ էն կողմից մեր խրամատներին են մոտենում երկուսը: Առջևից գալիս է բարձրահասակ, թիկնեղ մի զինվորական՝ նռնականետը ուսին, հետն էլ մի քանի ինքնաձիգ և փամփուշտներով լի ժապավեններ: Հետևից, կարծես ձեռքի փայտով առաջ քշելով զինվորականին, տարեց մի գյուղացի: Մենք իսկույն ճանաչեցինք նրան: Դա մեր մոտակա գյուղերից մեկի հովիվն էր, որը հաճախակի էր այցելում մեզ և տեղանքը մանրամասն իմանալու շնորհիվ մեծ օժանդակություն ցուցաբերում, հատկապես մեր հետախույզներին:

- Ահա՛ն, մարդը խնդրալ ա, ես էլ պերալ եմ: Ընդունեցեք: Օ՛գու՛մ եք որպես դոճաղ, օ՛գու՛մ եք՝ որպես գերի:

«Դոճաղը» մաքուր ռուսերենով, բայց աղբրեջանցուն հատուկ առոգանությամբ ողջունում է մեզ.

- Օրը բարի՛: Հյուրեր ընդունո՞ւմ եք: Առավել ևս, որ նա էլ դատարկածեռն չի ժամանել:

Եվ հերթով սկսում է գետնին դնել իր հետ բերած գնք-զինամթերքը: Պահվածքը բավականին հանգիստ է ու նույնիսկ վատահ, առանց վախի և ավելորդ նյարդայնացման: Տպավորությունն այնպիսին է, թե աղբրեջանական բանակի այս զինվորը բոլոր այս իրադարձությունների հետ բացարձակապես որևէ առնչություն չունի, այդ ամենի կենտրոնում հայտնվել է լրիվ պատահական և նրան այս պահին իրականում հուզում է ընդամենը մեկ հարց՝ հնարավորինս արագ դուրս գալ իր համար չափազանց օտար ու տհաճ այս ամբողջ իրավիճակից:

Շտաբում տարած հարցաքննությունը հաստատեց, որ առաջին տպավորությունը, իրոք որ, հեռու չէր իրականությունից: Պարզվեց, որ մեր հյուրը վաղուց արդեն բնակվում է Մոսկվայում՝ մոտ տասը տարուց ավելի: Մի քանի ամիս առաջ եկել է Բաքու՝ այցելելու հարազատներին: Փողոցում նրան «ոբսացել է» զինատիկանությունը և ժամերի ընթացքում ուղարկել ռազմաճակատ: Բոլոր բացատրություններն ու բողոքները, որ ինքը Ռուսաստանի քաղաքացի է, ոչ մի նշանակություն չեն ունեցել: Ասել են. «դա կարևոր չէ, կարևորն այն է, որ դու աղբբեջանցի ես և պարտավոր ես պաշտպանել քո հայրենիքը»:

- Բայց էդ ո՞ր հայրենիքը ես պետք է պաշտպանեմ: Ղարաբա՞ղը: Ի՞նչ կապ ունեմ ես, կամ էն բոլորը, որ էստեղ գոհվում են: Ինչի՞ համար են կռվում և ու՞մ ումի՞ց են պաշտպանում: Ես չեմ հասկանում: Սպաներն ասում են, թե՝ «պաշտպանում եք ձեր հողը, ձեր տունը»: Ո՞ր հողը, որ՞ տունը: Ղարաբա՞ղը: Ես պատմությունից ուժեղ չեմ, քաղաքականությունից էլ շատ հեռու եմ, բայց եթե Ղարաբաղում միշտ էլ հայերն են ապրել ու հիմա էլ ապրում են, ուրեմն դա իրենց ապրելու տեղն է, իրենց հողն է: Ապրել են ու թող էլի ապրեն: Իսկ մարտնչել այստեղ և գոհվել՝ չգիտես ինչի համար, ես չեմ ցանկանում ու չեմ էլ պատրաստվում: Կարճ ասած, ես ոչ «փողոտ» հարազատներ ունեմ, ոչ էլ պաշտոնավոր բարեկամներ և «խոշոր» փոխանակման համար հարմար թեկնածու չեմ: Եկեք մարդավարի, խաղաղ ձևով բաժանվենք: Օգնեք ինձ Մոսկվա հասնել:

Պահելով նրան ևս մի քանի օր, մեր հրամանատարությունը հենց այդպես էլ վարվեց:

Բացառված չէ, որ այս երկու զինվորները երբևիցե, Մոսկվայում, կարող է և հանդիպեն: Կարող է, նույնիսկ, ընկերություն էլ անեն: Որպես երկու մոսկվացի...

Հոկտեմբեր, 1997թ.

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՉԱՆ» ԼԱՍՏԱՆԱՎԸ

Կան մարդիկ, որոնց հետ մեկ անգամ հանդիպելուց հետո ուզում ես կրկին հանդիպել, առնչվել ու շփվել հետները էլի՛ ու էլի՛: Ադալիսին էր մեր հանդիպումն ու ծանոթությունը Ադիկի հետ՝ բաքվեցի այն հայերից մեկի, ովքեր, կոտորածներից մազապուրծ եղած, 1990-ի փետրվարին հայտնվել էին Երևանում:

Ադիկը՝ նույն ինքը Ադուֆ Խաչիյանը՝ արմատներով դեռ ցարական ժամանակները հասնող բաքվեցի հայ մտավորականների ընտանիքի միակ, բայց ավաղ՝ ակնհայտ անառակ զավակն էր:

Ադիկի մորական պապը փիլիսոփայություն էր ուսանել Սորբոնում, հայրը՝ ոչ միայն Ադրբեջանում, այլև ամբողջ ԽՍՀՄ-ի տեխնիկական շրջաններում հայտնի ու գնահատված ճարտարագետ-գյուտարար էր: Նրանցից մեկն էր, ովքեր նախագծեցին և հիմնադրեցին բաց ծովում Նեֆտյանիյե Կամնի քաղաքը: Մայրն էլ՝ մոսկովյան կրթությամբ, ճանաչված տնտեսագետ էր Բաքվում: Իսկ ինքը՝ Ադիկը, լավ դաշնամուր էր նվագում՝ տատն ու մայրն էին սովորեցրել, ազատ խոսում էր ֆրանսերեն՝ անձանք «սորբոնյան» պապն էր դասեր տվել և այդ ամենի հետ մեկտեղ տիրապետում էր նաև մեր օրերի համար խիստ հազվագյուտ և արդեն որպես «հնարժեքային» համարվող մի մասնագիտության: Նա շատ բարձրորակ՝ գրեթե անգերագանցելի, մի քանի «սրոկ ձգած» գրպանահատ գող էր:

... Ադիկը փնտրում էր մորը, ում հետքը կորցրել էր կոտորածների ու տեղահանման օրերի զանգվածային խուճապի ժամանակ: Չնայած այն բանին, որ Ադիկի մորը՝ Արփենիկ Խաչիյանին, կամ Բաքվի հայերենով՝ տյոտյա Արֆենիային Սոլնցևի-8 բակից ճանաչում էին շատերը, սակայն փախստականներից և ոչ մեկը նրա մասին որևէ տեղեկություն չունեին: Ադիկը բառացիորեն կոտորվում էր, ինչպես ասում են՝ «իրեն պատեպատ տալիս»: Բացի շատ բնական և շատ հասկանալի զգացմունքներից, որ նման դեպքերում պատում են ցանկացած մարդու, հանրահայտ փաստ է նաև, թե որչափ բարձր ու առանձնակի է դասված քրեական միջավայրում մոր պաշտամունքը:

Մոր մասին տեղեկություն ստանալն այդ պահին Ադիկի համար ոչ միայն կյանքի միակ խնդիրն ու նպատակն էր, այլև պատվի ու «կլասը» պահելու հարց: Ակնհայտ էր, որ ինչ-որ ակնկալիքներ ունենալ պաշտոնական «խողովակներով» հաջողության հասնելու, բացարձակապես անհիմաստ էր: Բայց քրեական աշխարհում գործում են «իրենց» կանոններն ու օրենքները, «իրենց» ձևավորված ավանդույթները, որոնք նման՝ գերեքսքրենալ պայմաններում շատ ավելի արդյունավետ են գործում, քան պետական լծակները: Ուստիև, ռուս և վրացի «բրատվայի» միջնորդությամբ, Բաքու «քսիվ» ուղարկվեց, որ պետք է հնարավորություն ու պայմաններ ստեղծել, որպեսզի

«այստեղից» «այնտեղ» մարդ գնա և զբաղվի այդ հարցով: Համաձայնությունը՝ անվտանգության «Ժելեզնի» երաշխիքների հետ մեկտեղ, երկար սպասել չտվեց: Սակայն առաջին երկու այցերը որևէ շոշափելի արդյունք չունեցան: Չնայած այն բանին, որ «բանագնացի» համար ապահովվել էին աշխատանքային, կարելի է ասել, արտակարգ պայմաններ: Հնարավորություն էր տրվել «աչքի տակով անցկացնել» նույնիսկ տեղի դատախազության ու միլիցիայի որոշ փաստաթղթեր: Բայց ինչ-որ տեղաշարժ, զրոյի հետ համեմատած, կարծես թե կար: Շուտով Բաքվից եկավ հերթական կանչը և երրորդ այցի ընթացքում, վերջապես, ամեն ինչ պարզ դարձավ: «Բանագնացին» ուղղակիորեն «դուրս էին բերել» ադրբեջանցի այն միլիցիոների հետքի վրա, ով դեպքերի բերումով տյոտյա Արֆենիայի վերջին ժամերի ականատեսն էր եղել:

...Հայ փախստականների հերթական խմբաքանակը «Խորհրդային Ադրբեջան» լաստանավով Բաքվից տեղափոխում էին Կրասնովոդսկ հայերի համար քաջ հայտնի ճակատագրական երթուղով: Լաստանավում հայերին ուղեկցում-հսկում էր ադրբեջանական միլիցիայի կարգախումբը: Երբ նավը դուրս է գալիս բաց ծով, միլիցիոներները քարշ տալով դեպի իրենց նավախցիկն են տանում 12-13 տարեկան մի հայ աղջկա: Մի քանի տղամարդ աղջկան փրկելու փորձեր են անում, սակայն նույն պահին նրանց ուղղության հնչում են սաստող կրակոցները: Անգորությունից նրանք նավախցի դռանն են շարտում ձեռքի տակ ընկածը: Իսկ նավախցից շարունակվում են լսվել աղջնակի աղիողորմ ճիչն ու կականը և բռնացողների հռռռոցը:

Բայց ահա, նավախցի դուռը բացում է մի տարեց հայուհի՝ ձեռքին մարտական նռնակ:

Ակնթարթորեն քաշում է օղակը և նետվում դեպի բռնացողների ոհմակը... Չոհերի լրիվ ցուցակը «բանագնացն» իր հետ նույնպես բերել էր:

Այսպես, 72-ամյա հայուհին՝ Արֆենիկ Խաչիյանը վերջակետ դրեց իր և Ադրբեջանի միջև եղած հարաբերություններին:

Հոկտեմբեր, 1997թ.

ՄԵԿ ԱՅԼ ՂԱՐԱԲԱՂ...

Երբ մարդը դուրս է գալիս սովորական, գուտ ընկերական, կենցաղային ու առօրեական շրջանակներից և դառնում հասարակայնորեն կարևոր ու նշանակալի անձնավորություն, ապա «սովորական» ընկերներին կամ էլ հարազատներին՝ գրելը կամ խոսելը նրա մասին դառնում է բավականին ոչ դյուրին խնդիր: Մի կողմից, երբ մտերիմ մարդը խոսում է քաղաքական, կամ մեկ այլ բնագավառի ճանաչված որևէ գործչի մասին, շատ դեպքերում դա ընկալվում է որպես այդ անձի գովերգմանը միտված յուրատեսակ մի գովազդ, կանխակալ քարոզչություն: Մյուս կողմից՝ մտերիմի անկեղծացումները մի տեսակ, կարծես, իջեցնում են այդ գործչին ընտրյալների Օլիմպոսից և դարձնում, ինչպես այսօր կասեին, ընտրագանգվածի աչքերում հասարակ ու սովորական մի մահկանացու՝ մյուսներից կարծես ոչնչով չառանձնացող, ընդամենը՝ իրենցից մեկը: Մակայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին գուժարման Գերագույն Խորհրդի առաջին ընտրված նախագահ, անձ և գործիչ Արթուր Սկրտչյանի պարագայում վերը նշվածը, հաստատապես, կիրարկվելի չէ: Եվ ամենևին էլ ոչ այն պատճառով, որ «մեռածների մասին՝ կամ ոչինչ, կամ՝ միայն լավը»: Ոչ: Պարզապես Արթուր Սկրտչյանը այն անձնավորությունն էր, ով մարդկային հարաբերությունների մեջ երբևէ «քաղաքականություն չէր խաղում», այլ դրսևորում էր հենց նման գործչին հատուկ իմաստություն ու լայնախոհություն, իսկ քաղաքականության մեջ էլ չէր դավաճանում մարդկային իր սկզբունքներին, պահպանում էր բնատուր մարդկային վեհ ու բարձր հատկությունները: Եվ ամենևին պատահական չէ, գուցե և խիստ օրինաչափ է, որ Արամ Մանուկյանի նման, հենց Արթուր Սկրտչյանին ճակատագրով վիճակվեց արցախահայության, նաև ամբողջ հայության համար բախտորոշ այն պահին՝ կանգնել նորաստեղծ արցախյան պետության կառավարման ղեկի մոտ և առաջնորդել իր ժողովրդի զինված պայքարը: Եվ գուցահեռները մեծն Արամ Մանուկյանի հետ ամենևին պայմանավորված չեն, ասեմք, երկուսի էլ դարաբաղյան ծագումով, երկուսի էլ՝ պետության ղեկավարումն ստանձնելուց մինչև մահն ընկած շատ կարճ ճամապարհով, կամ էլ, մեզանում բավականին տարածված, մեծերի միջոցով ժամանակակցին ֆետիշացնելու ամենթեթ միտումով: Եթե սեղանին ենք դնում այդ երկու ժամանակաշրջանների քաղաքական-իրավիճակային իրողությունները, ապա զուգահեռները տրամաբանորեն այդ նույն սեղանին են հայտնվում ինքնրստինքյան: Եվ առհասարակ, ցանկացած ազգի մոտ, ցանկացած երկրում, նման իրավիճակներում որպես առաջնորդ ի հայտ են գալիս անձինք, որոնց համար ճշմարիտ է, և իրոք որ, միայն եզակի ընտրյալների դեպքում է գործում՝ «իշխանությունը՝ որպես խաչ» բանաձևը, այլ ոչ թե ոմանց կողմից սկզբունք համարվող՝ «իշխանություն՝ ամեն գնով» անսկզբունքային համոզմունքը: Որպես

կանոն, այդ «ոմանք» ասպարեզում են հայտնվում հետո, երբ հաղթանակը արդեն կորզված է, արյունը՝ թափված, գոհերն էլ՝ մատուցված: Իսկ վճռական պահերին, դա էլ ասենք, որ բարեբախտաբար, նրանք սովորաբար խաղադաշտում չեն երևում և գոնե, «ոտաց տակ» չընկնելով, գործին չեն խանգարում: Գոհ լինենք, որ գոնե այդպես է:

Ի՞նչ ունեինք մենք կոնկրետ Արցախյան խնդրի պարագայում: Հայաստանը աջակցում էր Արցախին թե՛ նյութապես, թե՛ բարոյապես, թե՛ մարդկային ռեսուրսներով: Սփյուռքի աջակցությունը նույնպես կար, բայց բավականին համեստ էր և նույնիսկ խորհրդանշական: Համաձայն քանիցս հնչեցված տվյալների՝ բուն պատերազմական-մարտական գործողություններին սփյուռքից մասնակցել են տասնչորս մարդ. տասը ԱՄԱԼԱ-ից, երկուսը դաշնակցական, երկուսն էլ անկուսակցական: Այն օրերին բոլորի համար արդեն անհերքելի ճշմարտություն էր, որ առանց զինված պայքարի որևէ դրական տեղաշարժ, առավել ևս արդյունք, ակնկալելն անիմաստ է և ամենակարևորը, զինված պայքարը միայն այն դեպքում կպսակվի հաջողությամբ, եթե հենց այդ հողի վրա, հենց այդ մարդիկ ուղքի ելնեն և զենք վերցնեն: 91-92 ձմռան օրերը հենց այդ օրերն էին: Եվ պետք էր մեկը, ով կարողանար կազմակերպել ու առաջնորդել այդ ամենը: Եվ ճակատագրի բերումով ու ժամանակի թելադրանքով այդ պարտավորությունը ստանձնեց դեռ 33-ը չբոլորած Արթուր Ասլանի Մկրտչյանը: Մեկը նրանցից, որ ժամանակին Արցախյան պայքարի կարևոր հիմնաքարերից մեկն էր դրել: Այն պայքարի, որ պսակվեց մեզ համար շոշափելի հաղթանակներով, բայց արդեն՝ առանց իրեն:

Թեյ, լոլիկ և դատախազ

Արթուրի հետ մենք ծանոթացանք 1986-ի օգոստոսին, Հաղորթում: Ինչպիսի՞ն ներկայացավ մեր առջև Հաղորթը՝ 86-ի այն շոգ ու փոշոտ ամռանը: Նույնիսկ քարտեզին մի թռուցիկ հայացք նետելուց պարզ էր դառնում, թե ինչպիսի զգալի հաջողությունների է հասել այստեղ «եղբայրական» Խորհրդային Ադրբեջանի կողմից վարվող, այսպես կոչված, «ազգային քաղաքականությունը»: Երջանի վարչական սահմանը, հատկապես բուն ադրբեջանական շրջանների հետ սահմանագծով, ասես քայքայված լինե՞ր աղաթթվով, բզկտված ու ծվատված հրեշավոր մի մեքենայով: Ոլոր-մոլոր անհասկանալի սահմաններ, տարեցտարի ավելացող ադրբեջանական անկլավներ, հայկական անուններով բնակավայրերի նվազում ու ադրբեջանականների ավելացում... Երջանի բնակչության մոտ երկու հազարն արդեն կազմում են ադրբեջանցիները: Տարածքի վրա աղվանական-ադրբեջանական է հայտարարվում ամեն ինչ: Նույնիսկ Ազոխի քարանձավում հայտնաբերած նախամարդու գանգ-հատվածը մեկնաբանվում է որպես իսկական աղվանացու ծնոտ: Մենք գալիս էինք Մարտակերտից և Հաղորթ հասնելու համար պարտադիր պետք է կանգ

առնեինք Ֆիզուլիում: Տարսու հայ վարորդը, ով հանձն առավ մեզ հասցնել այդտեղից Հաղութ, ծաղրատեանգով ու դառը հեզմանքով «զցեց» ճանապարհին:

- Էս եկել եք Գարաբաղը Հայաստանին միացնե՞ք: Գատարկ բան է: Անհնար բան է: Շատերն ուզեցան: Ու՞ր են էսօր: Կամ վտարված, կամ աքսորված, կամ վերացված: Շուշիքենդի Հերկուլեսի մասին լսած կա՞ք: Էդ ձևի տղին վերացրին: Չէ՛, Գարաբաղը վերացած-կորած է հավերժ: Թուրքերը էստեղ արդեն ամենուր են: Մի քանի տարի հետո շրջանում արդեն մի հայ էլ երևի չմնա: Հենց էսօր արդեն ձեր գալու մասին կտեղեկացվի ԿԳԲ-ն, վաղը ձեզ քսանչորս ժամ կտան ինքնավար մարզի տարածքը թողնելու համար, իսկ եթե շատ «բոժոժ» արեցիք՝ կնստացնեն:

Անկեղծ ասած, մեր «շուփեր ախար» այդ դատողությունները մեզ այնքան էլ չոգևորեցին: Հիշեցինք, թե 83-ին մեզ ոնց մի քանի ժամ պահեցին Շուշիի դատախազությունում և վերջում պարզապես ասացին, թե՛ շուտ թողեք ու գնացեք էստեղից, իսկ մյուս անգամ էլ՝ Միր-Բաշիրից, երկու բեռնատարների պատվավոր ուղեկցությամբ մեզ դուրս վռնդեցին ԼՂԽՄ-ի տարածքից և խորհուրդ տվին՝ հանկարծ «այս կողմերում մեկ էլ չհայտնվեք»: Ժամը 2-3-ի կողմը կլինեք, երբ հասանք Հաղութ: Որոշեցինք «մի բան զցել բերաններս» և մտանք թեյարան: Տեսականին, պետք է խոստովանել, այնքան էլ մեծ չէր: Սեզ համար սկսեցին պոմիդոր կտրատել, իսկ երբ հասկացրինք, որ իրոք սոված ենք, առաջարկվեց մնա «մոսկովսկի պեչենի», որի փաթեթավորման թուղթը տարիների ընթացքում ներծծվել էր թխվածքի սակավ ճարպով, իսկ վրայի տառերն էլ՝ արևից գունաթափվել էին: Մատուցող-մաքրողը իր տան համար գնած հացից մեզ բաժին հանեց և չզիտես որտեղից էլ մի քիչ պանիր ճարեց: Բուֆետապանն էլ մեր զարմանալու վրա ինքը արդեն զարմացավ, թե՛ իսկ ի՞նչ զարմանալու բան կա այս ամենի մեջ: Մի գագով ջուր խմելու համար պետք է գնաս հասնես Ֆիզուլի, էլ չենք խոսում պաղպաղակի մասին: Իսկ վերջերս մերոնք գնացել Գորիսից գարեջուր էին բերել տեղի ռեստորանի համար: Վարիչին կանչել, շավարը հագից հանել էին, թե էս ի՞նչ նացիոնալիզմի դրսևորում է: Հազիվ արծազ, լավ է գործից չհանեցին: Եվ, տալով մեզ թեյն ու մանրացրած շաքարը, կամաց ավելացրեց. «խմեցեք, անուշ ըլնի, բայց լիշնի պյաներ մի՛ խոտեցեք՝ կրուգոմ ստուկաչնի են»: Թշվառ այն կացարանում, որին հյուրանոց էին անվանում, մեզ ընդունեցին այնպես, կարծես, բուժումն անավարտ թողած, փախել էինք բորոտանոցից: Համենայնդեպս, տեղ տվեցին, սակայն զգուշացնելով, որ ջուրը բաց չթողնենք (ինչպես պարզվեց՝ գոյություն չունեցող ջուրը), ծխախոտը հատակին չցցենք և, ամենակարևորը, մյուս բնակավորների հետ ավելորդ խոսակցություններ չվարենք: Երբ փորձեցինք պարզել, թե դրանք, այդ «ավելորդ խոսակցությունները» հատկապես որոնք են, մատյանում գրանցող աղջիկը մեզ ոտքից գլուխ չափեց ու հետո էլ, թե՛ «ի՞նչ է, որ դուք Հայաստանից եք եկել, կարծում եք, մենք էստեղ, ոչ մի բան չե՞նք հասկանում»:

Իսկ դեղնած տերևներով անխնամ ֆիկուսի կողքին կանգնած երիտասարդը մի տեսակ խորհրդավոր մեզ աչքով արեց, և, երբ անցնում էինք իր կողքով, նետեց դեպի մեր կողմը, ինչպես մեզ թվաց՝ ուրախ ու բավականին հպարտ. «Ձեզ արդեն հետևում են»: Մեր հանդեպ հենց առաջին պահից ցուցաբերվող նման ուշադրությունը, իհարկե, չափազանց հուզիչ էր և ցնցող, ուստի, նման խնամակալությունից խուսափելու համար, որոշեցինք գործի դնել մեր «գաղտնի գեները»: Մեզ մոտ էր մի ընկերական գրություն՝ Մարտակերտի զինկոմ Սերգեյ Հովհաննիսյանից, ուղղված իր ընկերոջը՝ Հաղորթի դատախազին: Նամակում զինկոմն իր ընկերոջը խնդրում էր, որպեսզի նա օգնի մեր փոքր արշավախմբին տեղավորվելու և փոխադրականի հարցերով: «Մնացածը ինքներդ կբացատրեք», - մեզ ճանապարհի գցելիս ասաց մայրորդ:

Գատախազ Ռոբերտ Դավթյանը մեզ ընդունեց բավականին տազնապահույժ, անմիջապես վերցրեց, ընթերցեց ու պահեց նամակը: Հիմքեր կան ենթադրելու, որ մեզանից հետո կերավ այն: Մեզ լսեց համակ ուշադրությամբ և, իմանալով մեր գալու պատճառը, ակնհայտորեն տխրեց: Եվ հետո խոսեց տրտմազին ու թախժոտ.

- Դա շատ լավ է, որ դուք զբաղվում եք Ղարաբաղի հուշարձանների ուսումնասիրությամբ: Շատ լավ է ու գովելի: Բայց, ցավոք սրտի, ոչնչով օգնել չեմ կարող: Դե մեր կողմերում հետաքրքիր բան էլ չկա: Ավելի լավ կլինի, գնացեք ուրիշ տեղերում ուսումնասիրեք: Համ էլ իմ ունեցածը մի հին «Ժիգուլի» է, էս սար ու ձորի մեջ դժվար թե ձեզ օգուտ տա:

Մենք, «մեր արևին», փորձեցինք խաղալ նրա տեղական հայրենասիրության վրա և նշեցինք, որ Հաղորթը հուշարձաններով ամենահարուստ ու խիտ հագեցած շրջաններից մեկն է, և այստեղ գոնե մի երկու շաբաթով մնալով շատ արդյունավետ կլինի: Նա իսկույն հակադարձեց՝ արդեն առանց թախիծի և ավելի վստահ.

- Շատ լավ, տղաներ ջան: Եթե դուք եկել եք և որոշել եք այստեղ մի որոշ ժամանակ մնալ, էս այդ մասին անպայման կգեկուցեմ երկրորդ քարտուղարին: Գաղափարախոսությունը հենց նրա առանձնաշնորհն է: ԿԳԲ-ին էլ տեղյակ կպահենք: Թող մարդիկ իմանան, ի՞նչ կա որ:

Մենք հնարավորինս նրբին ու վայելչակերպ փորձեցինք նրան հասկացնել, որ եթե օգնել չի կարող, դա ոչինչ, բայց կարիք չկա արժանավոր մարդկանց մեր պատճառով անհանգստացնել: Բայց նա մեզ արդեն չէր էլ լսում: Միայն ավելացրեց խիստ մտազբաղ ու անորոշ. «Վաղը կգաք, հլա տեսնենք ինչ կանենք: Անպայման կգաք: Գուցե մի բան կմտածենք»: Հասկանալի է, որ այդ մարդուց որևէ աջակցություն ակնկալելը կլինեք առնվազն միամտություն, բայց չգնալն էլ կնշանակե՛ր՝ հենց մեր ձեռքով սկիզբը դնել անհեթեթ անախորժությունների: Գնացինք: Այդ օրը դատախազը տեսքով շատ ավելի առույժ էր, իսկ կեցվածքով էլ՝ արդեն կողմնորոշված ու ապահով:

- Եկե՛ք, եկե՛ք,- ուրախ մերս հրավիրեց մեզ:- Ամեն ինչ կարգին է: Ձեր գա-

լու մասին արդեն ոչ միայն երկրորդ, նաև առաջին քարտուղարն է տեղյակ: ԿԳԲ-ն էլ արդեն, կարծում եմ տեղեկացված կլինի: Այնպես որ, ամեն ինչը օրենքով կլինի:

Չմայած այդ վերջին միտքը՝ «ամեն ինչը օրենքով լինելու» վերաբերյալ մեզ համար այդպես էլ մնաց առեղծված, մենք մեր սրտանց շնորհակալությունը հայտնեցինք և դուրս եկանք՝ որոշելով մնալ այնքան, որքան որ կստացվի: Ելքի մոտ մեզ մոտեցավ շատ լուրջ տեսքով ևս մեկ անձնավորություն, ինչպես ինքը նեկայացավ՝ «գաղափարական բաժնի աշխատակից»: Գաղափարական սույն այրը ասաց, որ շատ լավ է մեզ հասկանում, խոստովանելով «արանքում».- «դե մենք էլ ենք հայրենասեր, հլա տեղն եկած ժամանակ էլ ձեզանից էլ ավելի նացիոնալիստ ենք»: Որից հետո խոստապահանջ տոնով սկսեց համոզել մեզ հնարավորինս շուտ թողնել Հաղործը:

- Դուք մեզ համար պրոբլեմներ եք ստեղծում հարևան ազգի հետ: Դուք կթողնեք կզնաք, իսկ մեզ համար կսկսվեն անախորժությունները: Ամեն ինչի համար պատասխանը մենք ենք տալու:

Մենք, բնական է, ոչ մի «ավելորդ» ոչ թե միտք, այլ բառ անգամ չասացինք, այլ ընդամենը կեսկատակ նշեցինք, որ հուշարձանների ուսումնասիրման համար քրեական օրենսգրքում հողված չկա նախատեսված, որպեսզի ինքն էլ հանկարծ դիտվի որպես մեզ հանցակից: Դրանից մեր նացիոնալիստ գաղափարախոսն ավելի լրջացավ և զինանոցից հանեց իր վերջին փաստարկը.

- Ձեր մտածածը ես լավ գիտեմ: Իսկ ո՞վ է ասել, որ ճիշտ պատմությունը հենց ձեր ասածն է: Կարող է իրո՞ք մենք ալբանցիների (ասվեց հենց այդպես՝ ալբանցիների) հետնորդներն ենք: Մեզ մնում էր միայն ասել նրան, որ դա իր սեփական ճաշակի հարցն է և հեռանալ:

Գաղափարական այս հանդիպումը վերհիշվեց մի քանի տարի անց, այն օրերին, երբ Գետաշենի «ԿՈԼՅՈ» գործողությանը զուգահեռ հայաթափվում ու վերացման եզրին էին հայտնվել նաև Հաղործի շրջանի մեր տասնչորս գյուղերը: Եվ այդ նույն միտքը՝ արցախահայության աղվանական ծագման մասին, 91-ի դժվարին այդ օրերին, շատ ավելի հստակ ու որոշակի արտաբերում էր արդեն հենց ինքը՝ շրջանի գաղափարախոսության առանձնաշնորհատեր երկրորդ քարտուղարը: Իսկ Խորհրդային Միության տեղացի մի Հերոս էլ, պետք է ենթադրել՝ ոչ վախկոտ մարդ, տքնելով փրկել՝ չգիտես, իրավիճակը, թե՛ իրեն, հեռագրել էր Բաքու, թե՛ «ճանաչում եմ Արրբեջանի Սահմանադրությունը»: Այդպիսին էր այդ օրվա տեղի «նացիոնալիստ» ղեկավարությունն ու, ինչպես այսօր կասեին՝ «էլիտան»:

Տպավորությունն այս ամենից չափազանց ծանր էր ու ճնշող: Մեզ համակել էր այնպիսի մի զգացողություն, որ, ասես, այդ երկու օրերի ընթացքում շփվում էինք մահամերձ մի հիվանդի հետ, ով վաղուց գիտեր իր հիվանդության ու նրա տխուր հետևանքների մասին, բայց, գիտակցելով ցանկացած հակադիր քայլերի ապարդյունությունը, լիովին համակերպվել էր ամեն ինչի

հետ և, հնազանդվելով ու ենթարկվելով ամենագոր պարագաներին, հյությամբ «ձգում էր» իր վերջին օրերը:

Վերքերս հակաակոհոլայ

Շարունակելով ասենք, որ հետագայում վիատեցնող այդ տպավորությունն ավելի հիմնավորվեց ու խորացավ: Արշավախմբի երթուղով մեզ հաճախակի էին հետո հանդիպում կիսաքված, կամ լրիվ քված բնակավայրեր, ժամանակի անողոք ձեռքով ավերված տներ ու վայրենացող այգիներ, «տնավեր» փշով ծածկված բակեր: Էլ չենք խոսում հուշակոթողների մասին: Միշտ ժամանակին էլ վրա հասավ գորբաչովյան հակաակոհոլային կոմպանիան, որը «Վրեմյա»-ով հնչեցվելուց հետո, այստեղ արդեն հաջորդ իսկ առավոտ, հավանաբար, անմիջապես ընդունվել էր «ի կատարումն»: Հաջողություններն ակնհայտ էին: Գրեթե ամենուրեք կարելի էր տեսնել զգետնած ու տապալված չարանենգ այն հարուցիչները հարբեցողության՝ թթնիները: Թութը, առհասարակ, իսկ թթի օղին՝ հատկապես, այդ պահին համարվում էին արդեն ոչ միայն «նացիոնալիստական», այլ նույնիսկ հակատվետական կատեգորիաներ: Տող գյուղի դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչը, հյուրընկալելով մեզ, մի քանի անգամ վշվրջաց, թե՛ «բա էս տեսակ բան կլինի^օ, դարաբաղցու սեղանին թթի օղի չկա»: Հետո ոնց որ թե «վճռեց». կողպեց դուռը, փակեց պատուհանները և կառափնարան բարձրացող դեկաբրիստի կեցվածք ընդունելով, խոստոված ձայնով դիմեց կնոջը. «Ի՛նչ ըլնելու է, թող ըլնի: Հան, բեր էնի»: Պահարանի ետևի թաքստոցից հանվեց կիսատ մի շիշ, շատ արագ խմվեց, բոլոր իրեղեն ապացույցները իսկույն վերացվեցին, դուռ-լուսամուտն էլ բացվեց, որ հոտն անգամ հանկարծ չմատնի: Իբր այդ բոլոր «զկրքերն հակաակոհոլայ» քիչ էին, էդ խեղճ մարդուն մեկ ուրիշ դադող էլ էր պատել: Խորհրդավոր փսփսոցով, խիստ գաղտնի, նա հաղորդեց մեզ, որ իրենցից մի ինչ-որ հայտնի մարդու կին «էս ամառ իր ամուսնուն դավաճանել ա»: Եվ մի քանի բույն մեկ վշտացած կրկնում էր. «Իա՛... ա, իսկ Մ...յանի կինը էս ամառ իրեն դավաճանել ա: Բա թորքերը վոր իմանան, հի՞նչ անըսական ենք»: Իբրք: Դե արի ու էդ դարդին դիմացիր:

Իսկ Բուլոթան գյուղում, ուր կոլխոզի նախագահը, ուշադիր հետևելով մեր եռօրյա չափագրություններին, ոգևորված որոշեց մեզ «մին լյավ քեփով» ճանապարհի դնել, հակաակոհոլային կոնսայիրացիան ավելի ուժեղ էր ու տպավորիչ: Օղի այստեղ առհասարակ չերևաց: Այն «ցորտ-ցորտ» աղբյուրի մոտ, ուր հավաքվել էինք, շարքով մոտեցան մի հինգ-վեց մարդ՝ ձեռքները մեկական հինգ լիտրանոց սև գույնի «ժավելի կանխտոր»: Սեջները՝ կարմիր գինի: Գինին խմում էինք մետաղյա անթափանցիկ բաժակներով, իսկ ամեն մի կանխտորը դատարկվելուց հետո այն իսկույն լցվում էր աղբյուրի ջրով: Երևան վերադառնալիս էլ, ավտոբուսում մի ուսանող երեք լիտրանոցով խնձորի կոմ-

պոտ էր հետը բերում: Բայց մի բանն էր կասկածելի՝ չափազանց ուշադիր էր այդ կոմպոտի նկատմամբ, շատ զգուշավոր ու խնամքով: Երբ մտանք արդեն ՀԽՍՀ տարածքը, չվախենալով նրան «վտանգի ենթարկելուց», հետաքրքրվեցինք, թե էդ ի՞նչ անմահական կոմպոտ է դա, որ այդքան քնքշանքով է վերաբերվում: Կարո՞ղ է դրախտային խնձորի է: «Իսկապես դրախտային է», - պատասխանեց մեր ջահելը, - «արաղի կոմպոտ է»:

Մեկ այլ Ղարաբաղ...

86-ի ամռանը այստեղի մեր ամբողջ տեսածը բավականին ուժեղ ցայտե-րանգում էր այն ամենի հետ, ինչը մենք տեսել էինք նախորդ երկու-երեք տարիների ընթացքում Մարտակերտ և Շահումյան այցելելիս: Այնտեղ կյանքը, համենայնդեպս, չէր ընթանում աղբբեջանական մանրադիտակի զննախողովակի այդչափ հսկող լույսի ներքո: Այնտեղ, հայերի հարսանիքներին, կամ էլ սգո արարողություններին «եղբայրական ազգի» ներկայացուցիչների հայտնվելը պարտադիր «քաղաքական անհրաժեշտություն» չէր: Մինչդեռ այստեղ, Հաղորթում, մենք քանիցս ներկա եղանք, թե ինչպես մեր հարևանները կազմում էին հրավիրվածների պարտադիր մի մասը՝ «դոստի» կամ «քիրվայի» անվանակարգերով: Եվ պետք է ասել, իրենց զգում և պահում էին չափազանց վստահ և անկաշկանդ:

Ամեն ինչից ակնհայտ էր, որ աղբբեջանական էքսպանսիան Հաղորթում արդեն անշրջելի, ավելի ու ավելի խորացող ու թափ հավաքող մի գործընթաց է: Որ մահացու շոշափուկ-բողկուկները փաթաթել ու կաշկանդել են ամբողջ շրջանը, տարածվել նրա մարմնով մեկ: Որ շրջանն էլ այժմ ասես ցնցվում է իր վերջին ջրակծկումների մեջ, իսկ հիվանդությունը հարուցողներն էլ հանգիստ և ապահով սպասում են նրա վերջնական հոգեվարքին:

Բայց այդ ամբողջ ճգնող ու ցավոտ իրականության կողքին Հաղորթում առկա էր, կար նաև մեկ այլ, խիստ առանձնահատուկ մի իրողություն, որն անհնարին էր չտեսնել, անտեսել կամ էլ ժխտել: Դա հաղորթիների մեծ մասին խիստ բնորոշ, ասես նրանց արյան մեջ մտած, մեկից աչքի ընկնող նրանց բնատուր ինտելիգենտությունն էր: Եվ այդ հատկությունը անխուսափելիորեն, անհրաժեշտաբար, ինչ-որ տեղ, ինչ-որ պահի պետք է ի հայտ գար, դրսևորեր իրեն: Շատ շուտով մենք համոզվեցինք, որ մեր «ներքին կանխագագացումները» սխալ չէին, որ կա, իրոք, նաև «մեկ այլ Հաղորթ»...

... Դատախազությանն ու դատախազին «ի խորոց սրտի» հրաժեշտ տալուց հետո, ժամանակավորապես մեր այստեղ գալու բուն նպատակից ու իմաստից վերացած, ցած իջանք փողոցով: Աջ կողմի վրա նկատեցինք մի ցուցանակ. «Հաղորթի շրջանային գավառագիտական թանգարան»: Որոշեցինք ներս մտնել՝ ակնկալելով ունկնդիր դառնալ դատախազի և հայ նացիոնալիստ

- «ալբանացու» գրույցների մեկ այլ՝ արդեն «գիտական» շարունակությանը: Մեզ դիմավորեց միջին հասակի, նիհարակազմ, ակնոցներով մի երիտասարդ: Ներկայացավ Արթուր Սկրոչյան, թանգարանի տնօրեն: Առանց նախերգանքի, ինչպես նաև մեր նկատմամբ առանց ինչ-որ հատուկ ուշադրության, անմիջապես սկսեց ծանոթացնել մեզ Հադրուք-Դիզակ երկրամասի պատմության հետ: Շատ արագ մեզ պարզ դարձավ, որ մենք գտնվում ենք հայկական թանգարանում, որ մեր առջև կանգնած է, մի կողմից՝ ոչ թե սովորական «ռաշոնական» մի դեմագոգ-ամենագետ, այլ խիստ գրագետ, ակադեմիական բարձր որակավորում ունեցող պրոֆեսիոնալ պատմաբան: Իսկ մյուս կողմից՝ ոչ «ալբանցիների հետնորդ», ոչ էլ տեղի-անտեղի կուրծքը ծեծող «հայրենասեր-նացիոնալիստ», այլ, դեպքերին ու ամբողջ իրականությանը սթափ նայող, կշռադատված ու զուսպ, խոսքի ու մտքի տեղն ու պահը լավ գիտակցող լրջմիտ մի անձնավորություն: Կարելի է ասել՝ գործիչ: Մի քիչ էլ ընդարձակվեցինք փոխադարձ ճանաչման ուղղությամբ: Պարզվեց, ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, հետո ընդունվել ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան և ահա, այն ավարտելուց հետո, աշխատելու է վերադարձել իր ծննդավայր: Համաձայնեցրեք, որ բնավ անհրաժեշտություն չկա հատուկ բացատրելու, թե հատկապես ինչ մղումներով ու գաղափարներով, ինչ զգացմունքներով ու ձգտումներով կարող է համակված լինել քսանվեց-քսանյոթ տարեկան անձնավորությունը, ով, պատրաստի թեկնածուական դիսերտացիան ձեռքին, մերժի Մոսկվայում, նաև Երևանում աշխատելու գրավիչ ու բոլոր առումներով ապահով ու հեռանկարային առաջարկները, վերցնի կնոջն ու երկու փոքր որդիներին ու 1986 թվականին նպատակային վերադառնա Հադրուք: Ինքնին հասկանալի է, որ պայմանավորվեցինք աշխատանքից հետո, երեկոյան, կրկին հանդիպել: Արթուրի վարձակալած տանը, ուր ինքն այդ օրերին ապրում էր, մեզ սպասում էին նաև Աբրահամյան Էմիլն ու Սարգսյան Մանվելը: Նրանք երեք-չորս տարով մեծ էին Արթուրից: Մեկը՝ ինժեներ-շինարար էր, մյուսը՝ ճարտարապետ:

Սա արդեն կատարելապես «մեկ այլ Հադրուք» էր, նույնիսկ, բացարձակապես, «մեկ այլ Ղարաբաղ»: Նման հանդիպումներ, նման անձանց հետ նախկինում մենք չէինք ունեցել: Այստեղ հանդիպեցինք ոչ թե զուտ համախոհների, կամ էլ պայքարի պատրաստ զինակիցների այլև մարդկանց, որոնց համար անցնելիք ճանապարհի «սաղմնային», ռոմանտիկ-էմոցիոնալ փուլն արդեն անցած մի ուղի էր, և Ղարաբաղի ազատագրումը նրանց համար պարզապես մի երազանք չէր՝ իրականանալի, կամ՝ ոչ: Մեր առջև անձինք էին, ովքեր արդեն լիովին հասունացած էին քաղաքական բնույթի գործողություններ ծավալելու համար, անձինք, ովքեր ի վիճակի էին առաջ քաշել և լուծումներ փնտրել քաղաքական նպատակներ հետապնդող խնդիրների համար: Այդ և հետագա մի քանի նման հանդիպումների արդյունքում էլ ձևավորվեց անձանց, ճիշտ է փոքրաթիվ, բայց որոշակի ու կայուն մի շրջանակ, որը, պատկերավոր

ասած, գործում էր «Հաղորտի ուղղութեամբ»: Այդ շրջանակում հանգուցային ու գլխավոր անձը, անկասկած, Արթուրն էր: Ե՛վ այդ ժամանակ, և՛ հետագայում նրա մեջ շատ վառ դրսևորվեց առանձնակի մի հատկություն, որն էլ, ի վերջո, անձին դարձնում է քաղաքական գործիչ: Դա՝ դատողություններում և գործողություններում զգացմունքային փրփուրից հիմնովին ձեռքագատվելու, մասնակին և ընդհանուրը իրենց ճշգրիտ հարաբերակցության մեջ տեսնելու կարողությունն էր: Դա՝ լուսնակնակն, պատեհակնակն, լինի դա համընդհանուր էյֆորիա հաջողությունից, կամ էլ համընդհանուր խուճապ անհաջողությունից, պատանտ չդառնալու, գերի չլինելու ունակությունն էր: Իր տրամադրության տակ եղած հնարավորությունները նա կարողանում էր բաշխել և օգտագործել հնարավորինս օպտիմալ, եղած իրողությունից կարողանում էր քսանել հնարավոր առավելագույնը: Հենց նրա հորդորներին անսալով, հաջորդ տարի՝ 87-ի ամռանը մենք մանրագին «սանրեցինք» Քյայբաջարի շրջանը, ուր Արթուրի «գործընկեր»՝ տեղի թանգարանի տնօրեն՝ Շամիլ-մուսլիմը հրաժարվել էր նույնիսկ հայկական հուշակոթողների աղվանացումից և իր «արագ արձագանքման» առանձնախմբի գլուխն անցած աջ ու ձախ կործանում, ջարդում ու փշրում էր տարածքի հայկական լինելը վկայող ցանկացած հուշարձան: Իսկ հենց այդ՝ 86-ի ամռանը, Արթուրը մեր արշավախմբի համար ուրվագծեց Հաղորտի հենց այն հուշարձանները ներառող մի երթուղի, որոնք այդ պահին հատկապես անհրաժեշտ էր ֆիքսել ու գրանցել:

* * *

...Որտեղ էլ որ գործեր Արթուրը, ինչպիսի կառույցում էլ որ ընտրվեր՝ լիներ դա Մոսկվա՝ Դեմիչևի մոտ մեկնող պատվիրակությունը, լիներ դա Ղարաբաղի Ազգային Խորհուրդը, իսկ վերջում էլ՝ ԼՂՀ Գերագույն Խորհուրդը, ընտրությունն ընթանում էր առանց սուր պայքարի: Բոլորը շատ շուտ համոզվում ու ընդունում էին, որ դա հենց նրա տեղն է, հենց նա կարող է և պետք է կատարի այդ ֆունկցիաները: Նա երբեք չէր ներկայանում, կամ ներկայացվում, որպես լայնորեն «գովազդված» ու «սֆիշացված» առաջնորդ-փրկչի մի կերպար: Դա էլ ասենք, որ նման բանի ոչ ինքն էր ունակ, ոչ էլ իր մոտակա շրջապատը՝ նման գործողությունների համար ենթադրվող անհրաժեշտ բոլոր «բաղադրիչների» առումով: Խոսել նրա համեստության մասին, նշանակում է ոչ սովորական այդ մարդուն խցկել պարզունակ ու ծեծված, ոչինչ չստող մի բառակաղապարի շրջանակների մեջ: Նրա հետ առնչվողներին զարմացնում և գրավում էր նախ այն իրողությունը, որ ընդամենը երեք տասնամյակ կյանք ասլորած մարդը կարող է այդ տարիքում արդեն այդքան գերծ լինել հավակնոտությունից, պատվամոլությունից և, առհասարակ, որևէ ամբիցիաներից. այն էլ հեղափոխական պայքարի մթնոլորտում:

Ե՛վ դրա համար էլ նա հենց Արթուր Սկրտչյանն էր՝ ներքին այդ ազատու-

թյունից բխող անհատական իր «հրակայունությամբ» ու անպարտելիությամբ: Գուցե զուտ հոգեբանորեն հենց դա է վճռական դեր խաղացել այն ծանր օրերին, երբ «ինտերնացիոնալիստ» դարձած որոշ մեր «նացիոնալիստների» ուղղակի մատնությունների պահանջներին տեղի տալով, թե իբր այս ամբողջ «խառնակչությունը Սկրտչյանը կազմակերպում է զուտ անձնական շահադիտական նպատակներով», Հաղորթում խորհրդային զինվորական պարետատնից նրան գալիս են ձերբակալելու: Արթուրը ընդառաջ է ելնում պարեկախմբին և հանգիստ ուղեկցում դեպի իր կացարանը: Նրանք ներս են մտնում, մի քանի րոպե լուռ մնում են կանգնած և հետո, հավանաբար, իրական պատկերացում կազմելով թե՛ կացարանի, և թե՛ նրա տիրոջ ու իր ընտանիքի մասին, շուտ են գալիս ու հեռանում՝ իրենց ներդրություն չտալով նաև զսպել «դոնոսչիկներին» հասցեագրված ռուսական հյուրեղ հայհոյանքները: Տեղի դաժան «պրոկուրատորը»՝ Հաղորթի «Պիղատոսը», ինչպես տեսնում ենք, այդ իրավիճակում ավելի շրջահայաց է գտնվել՝ վերջնականորեն տեղի չտալով Արթուրին մատնողների հորդորներին: Իսկ ինչ վերաբերում է «շահամոլությանը», ապա մարդկության մեծ մասին համակած պլոդ և ունայն այն արատից, ինչպիսին արծաթապաշտությունն է, Արթուրի շատ հեռու լինելը առավել քան խորհրդանշական ձևով դրսևորվեց նույնիսկ նրա մահից հետո: Երևանում այդ կապակցությամբ հատուկ պատրաստած շքեղ դագաղը՝ ճակատագրի հեզմանք, թե հենց օրինաչափություն, այդպես էլ տեղ չհասավ: Եղանակը մի քանի օր համառորեն թույլ չէր տալիս օդանավերին օդ բարձրանալ, և Հայաստանի իշխանության վերնախապի կողմից Արթուրի համար նախատեսված պերճասուք այդ իրը մերժվեց, կարծես, հենց ի վերուստ: Նրան հողին հանձնեցին Ղարաբաղում պատրաստած, տեղական համեստ մի մահարկողով: Տարիներ շարունակ նրա վրա չէր դրվում գոնե սովորական մի շիրմաքար և անկախացած երկրի առաջին ղեկավարը համեստորեն «յուլա էր գնում» զուտ իր հողաթմբով:

Եվ ԼՂՀ Գերագույն Խորհրդի նախագահի պաշտոնում նրա ընտրվելն էլ ամենևին նախօրոք պլանավորված և հաջող իրականացրած ընտրաբշավի, կամ էլ ինչ-որ նախնական հետկուլիսային պայմանավորվածության, քաղաքական բարդ կոնսուլտացիաների, առավել ևս՝ քաղաքական առևտուրների արդյունք չէր: Ոչ: Նա մուտք գործեց Գերագույն Խորհուրդ որպես շարքային, սովորական մի պատգամավոր, բայց դուրս եկավ այնտեղից որպես նրա դեկավար: Այն մի քանի օրերի ընթացքում, որ ընթանում էր նստաշրջանը, այն իրականության մեջ, երբ հաջորդ միտին բացակայող պատգամավորը հարգելի բացակա էր ստանում իր գոհվելու պատճառով, հավաքվածների մեծ մասը պարզեցին և համոզվեցին, որ իրենց բոլորի միջից հենց Արթուր Սկրտչյանն էր այն անձնավորությունը, ով պետք է այս պահին դառնար նորահռչակ պետության առաջին ղեմքը և առաջնորդեր Ղարաբաղի զինված պայքարը: Այդպիսին էր պատգամավորների մեծ մասի համոզմունքն ու դրանից բխող որոշ-

ումը: Եվ նրա կառավարման ընդամենը մի քանի ամիսների ընթացքում Ղարաբաղի համար արդեն արձանագրվեցին մի շարք լուրջ հաջողություններ՝ թե՛ ռազմական, թե՛ դիվանագիտական ասպարեզներում: Դա անհերքելի է: Ներպետական իրավիճակն էլ կարծես պարզ էր ու հստակ. կար նորակազմ իշխանություն, որին մարդիկ վստահում ու ենթարկվում էին և կար թշնամու դեմ պայքարի անհրաժեշտության և այդ պայքարին որևէ այլընտրանքի բացակայության համընդհանուր գիտակցում: Ամենակարևորը՝ Արթուր Սկրտչյանի կառավարման օրոք հասարակության մեջ չկար «ինտրիգ» կոչվածը, քանզի հենց ինքը պետության գլուխ էր անցել առանց որևէ «ինտրիգի»:

Նույն գաղափարին նվիրված մարդիկ շուտ թե ուշ գտնում են միմյանց, մերձենում ու միավորվում: Իսկ միավորվելուց հետո, սովորաբար չեն բաժանվում: Սերտորեն կապված այդ շրջանակից հեռանալը նշանակում է հրաժարվել ինչ-ինչ սկզբունքներից, դավաճանել նրանց: Այն շրջանակից, որ ստեղծվել էր Արթուրի շուրջ, մարդիկ հենց այնպես դուրս չէին գալիս: Նրանց թիվը պակասում էր միայն գոհվելու պատճառով: Անձամբ Արթուրին էլ, ավաղ ինչպես ասաց նրա հուղարկավորության ժամանակ Իգոր Մուրադյանը՝ «չկարողացանք պահպանել»:

Չնայած այն թանձր շղարշի առկայությանը, որով պատված են նրա գոհվելու հանգամանքները, այդ կյանքի մասին լիարժեք կարելի է ասել, որ Արթուր Սկրտչյանը Ղարաբաղի ազատագրման պայքարի Գողգոթա բերեց իր կյանքի առաջին երեսուն և երեք տարիները:

Մտերիմ անձանց վերաբերող բազմաթիվ դրվագներից սովորաբար լինում է մեկը, որն առանձնակիորեն է տպավորվում հիշողությանդ մեջ: Միշտ աչքիդ առաջ է գալիս, երբ խոսք է գնում այդ անձի մասին:

...Մեր ծանոթությունից մի քանի օր անց, Արթուրի հետ գնացինք իր հայրենի գյուղը՝ Էդիլու-Ուխտաձոր: Հյուրընկալվեցինք իր հայրական տանը: Երկու օր հետո ուղևորվեցինք դեպի Տոդ: Արթուրը մեզ հետ եկավ գյուղից դուրս, մինչև այն լայն կաճան-ճանապարհը, որ գնում էր դեպի Տոդ տանող խճուղի: Միմյանց հրաժեշտ տվեցինք և ճամփա ընկանք: Անցնելով բավականին ճանապարհ ես ետ նայեցի: Արթուրը, կանգնած բլրակին, բարձր մենավոր տանձենու տակ, մեզ ձեռքով էր անում: Եվ ինչպես հեռվից ինձ թվաց՝ ժպտում էր իր այն գուսպ ժպիտով...

Մայիս, 1997թ.

ՄԵՐ ՎԻՉԵՆ-ՄՈՒԱԼԻՍԸ

Յանկացած լայնածավալ գործընթացներում և իրադարձություններում, որտեղ ներգրավված է լինում մարդկային բազմաքանակ զանգված, միշտ էլ ի հայտ են գալիս, ասպարեզ են մտնում յուրահատուկ անձինք, ընդհանուր զանգվածից էապես տարբերվող ընդգծված անհատականություններ՝ որոշակի առումով առաջնորդներ և առաջատարներ: Լինի դա ընդվզում, խրախճանք, խռովություն, արկածախնդրություն, առավել ևս՝ հեղափոխություն կամ պատերազմ: Այդ անձանց ընդհանուր զանգվածից առանձնացնող, նրանից վեր հանող հատկություններից, թերևս ամենակարևորն ու առանձնակին այն է, որ նրանց՝ անգամ գուտ ներկա լինելը ցանկացած, նույնիսկ ոչ այնքան բարեբաստիկ իրավիճակում մարդկանց վստահություն է ներշնչում, տեղ չի թողնում վարանումների ու կասկածամտության, թերահավատության ու ծուլամտության, վախի ու խուճապի դրսևորման համար: Նրանց բացակայությամբ միշտ զգացվում է վստահության որոշակի պակաս և նույնիսկ՝ մի տեսակ դատարկություն, նույնիսկ հաջողությունը ոչ լրիվ, կիսատալաատ է թվում, իսկ դժվարությունների դեպքում իրավիճակը կարող է բեկվել դեպի ճգնաժամ և նույնիսկ վերաճել աղետի: Եվ որքան էլ պնդեն, թե «անփոխարինելի անձինք չկան», հենց նման անձինք էլ քանիցս ապացուցել են, որ առօրյա գործածության մեջ պտտվող այդ միտքը այնքան էլ ճշմարիտ չէ: Երբ նրանք մեզանից հեռանում են, ապա փոխարինող, իհարկե, միշտ էլ գտնվում է: Բայց բոլորն էլ հրաշալի հասկանում են, որ դա ընդամենը «տեղը մարդ դնել է», այլ ոչ թե լիարժեք փոխարինում: Իսկ նրանց իսկական տեղը այդպես էլ՝ «մինչև վերջ» իրականում մնում է թափուր:

Մտերմիկ մի գրույց մեքենայում

...Վիզենի հետ մեր առաջին հանդիպումն ու ծանոթությունը թվագրվում է 86-ի հուլիս ամսով: Մեզ նրա մոտ ուղարկեց Արթուր Սկրտչյանը, ով այդ ժամանակ Հաղորդի գավառագիտական թանգարանի տնօրենն էր: Արթուրը մեզ առաջարկ-հանձնարարություն էր ներկայացրել՝ մի լավ, մանրամասնորեն «սանրել» Տողի և նրան կից տարածքների հուշարձանները: Երբ մենք գգուշավորությամբ նկատեցինք, թե Տողի բնակչությունը խառն է, մեզ այնտեղ ոչ ոք չի ճանաչում և աղբբեջանցիների կողմից կարող են ստեղծվել ոչ այնքան հյուրընկալ իրավիճակներ, Արթուրը, ակնոցի տակից խորամանկորեն նայելով մեզ, ծիծաղեց.

- Կգնաք, կմոտենաք Վիզենին: Եթե պետք լինի, նա այնպես կանի, որ հենց աղբբեջանցիները ոչ միայն չեն խանգարի, այլ նույնիսկ կօգնեն ձեզ:

- Առանց Վիզենին տեսնելու հանկարծ ոչինչ չձեռնարկեք,- մեկ անգամ էլ

զգուշացրեց Արթուրը՝ իր հայրենի Էդիլուից դեպի Տոդ մեզ ճանապարհ գցելիս:

Խճուղի հասնելով՝ շատ շուտ մի կապույտ «Մոսկվիչ» բռնեցինք, ով համաձայնեց մի հինգանոցով մեզ Տոդ հասցնել: Պարզվեց, որ ինքն էլ հենց այնտեղից է: Ամմիջապես հասկանալով, որ մենք Հայաստանից ենք, տողեցի այդ վարորդը սկսեց պատմել, թե որքան համերաշխ և սիրով են միմյանց հետ Տոդում ապրում հայերն ու աղբրեջանցիները: Երեխաները հաճախում են խառը դպրոց, մեծերը՝ փոխադարձաբար հարսանիքների ու թաղումների են գնում, միասին, ախպերների նման նշում են միմյանց ծնունդ ու մահ, միասին կիսում թե՛ ուրախություն, թե՛ վիշտ:

- Շատ արագ, շատ շուտ այդ ամենը, ձեր այդ եղբայրությունը կավարտվի այն բանով, որ մի քանի տարի անց Տոդում այլևս ոչ մի հայ չի մնա: Տոդն էլ կտանք թուրքերին,- բավականին կտրուկ ընդհատեցի ես վարորդի բարեհոգի շարադրանքը հայ-աղբրեջանական ապրելաճի վերաբերյալ:

Նա խիստ նեղացավ, վրդովվեց, սկսեց ինչ-որ բաներ բացատրել, իսկ վերջում էլ առանց այլևայության հայտարարեց, որ Հայաստանից գալիս են մեր նմանները, ջուրը պղտորում, երկու բարեկամ ժողովուրդ իրար դեմ լարում ու թողնում գնում: Եվ հենց դրա համար էլ շատ ճիշտ է, որ հայկական «տելեվիզորը» Ղարաբաղում արգելված է և, առհասարակ, Հայաստանից Ղարաբաղ մարդ պետք չի թողնել՝ նույնիսկ հարազատ ու բարեկամ: Որ չգան, մարդկանց էլ իրար չեն խառնի:

- Տոդում բնակվող բոլո՞ր հայերն են քո նման մտածում, - հարցրեցի ես, երբ նա մի պահ լռեց:

Չճանճրացնեմ ձեզ մեր երկխոսության հետագա շարադրանքով: Իմ վիճակն ու այդ երկխոսության հետագա բովանդակությունն ու տոնը դժվար չէ կռահել, եթե ես միանգամից ասեմ, որ հայերենի դարաբաղյան բարբառով անթերի խոսացող կապույտ «Մոսկվիչի» այդ վարորդը...աղբրեջանցի դուրս եկավ:

Նա մեզ իջեցրեց գյուղի կենտրոնում՝ աղբյուրի մոտ, հերստտած ու արհամարհական շրխկացրեց դուռը և, բարձրացնելով ծխի ու փոշու ամպ, վրդովված քշեց-գնաց: Բայց տված փողից՝ ի զարմանս մեզ և ի սփոփանք, չիրաժարվեց:

Աղբյուրի մոտ մի քանի մարդ կար կանգնած: Մենք, իհարկե, չէինք էլ փորձում նույնիսկ մտովի «հաշվել», թե ով է նրանցից հայ, իսկ ով՝ աղբրեջանցի: Մեքենայում նման անհեթեթ ձևով «ծակվելուց» հետո մենք հայտնվել էինք բառացիորեն ապուշ մի վիճակում, երբ հիմար այդ իրադրությունից դուրս գալու համար ժամանակ է պետք, իսկ մինչ այդ մնում էր միայն լռել: Եվ մենք լուռ, կանգնել էինք աղբյուրի դիմաց, չհամարձակվելով մոտենալ մեկին և որևէ բան հարցնել: Այդ մարդիկ էլ անշարժ ու լուռ, մի տեսակ ավարա կանգնած էին աղբյուրի մոտ և առանց մի հատուկ հետաքրքրության դիտում էին մեզ, մեր նկարող սարքերն ու արշավախմբա-

յին այլ պիտույքները: Եվ մեզ թվում էր, թե վարորդի դուռ շրխկացնելուց, նրա տեղից վրոդվված պոկվելուց, այս մարդիկ հասկացել էին, որ մենք նեղացրել ենք իրենց համազոտության, որ նրանք քաջատեղյակ էին մեքենայում կայացած այն բարեկամական գրույցի աներեսպաշտ բովանդակությանը և հիմա մեզ էին նայում՝ խոժոռ ու չարակամ:

- Հիմա մեզ ծեծելու են,- կամաց ասաց մեր լուսանկարիչ Սուրենը՝ բնագործն ավելի ապահով փաթաթելով իր սարքերը: Իրավիճակը ցրելու համար փորձեցինք շահարկել հուլիսյան տապը:

- Էս ի՛նչ շոգ է,- դերասանական պաթոսով հայտարարեցինք մենք և հերթով մի քանի րոպե գլուխներս պահեցինք աղբյուրի տակ, պարտադիր նշելով,- Էս ի՛նչ լավ ջուր է: Բայց դա էլ չօգնեց: «Շփումը» չկայացավ: Մարդիկ առաջվա նման անթափանց ու անհաղորդ էին մեր հանդեպ և շարունակում էին լուռ գննել մեզ: Ինչպես մեզ թվաց, այս անգամ արդեն՝ հայացքներում կասկած ու հեզմանք կար: Իսկ այդ նույն պահին դեպի մեզ մոտեցավ միջահասակ, չորուկ-ամրակազմ, հավաք արտաքինով երեսուներեսունհինգին մոտ մի անձնավորություն:

- Է՛հ, գալնե՞րդ բարի,- ողջունեց նա մեզ գրական հայերենով՝ փորձառու դաս վարորդի վստահ ու լավ դրված ձայնով: Մենք իսկույն հասկացանք, որ այս պահին հայտնված այդ «փրկիչը» հենց ինքը՝ Տողի Վիգենն է, ինչպես նրան առանձնացված կոչում էին, որպեսզի տարբերակեն մնացած, մյուս բոլոր Վիգեններից: Այո, դա Տող գյուղի միջնակարգ դպրոցի ուսմասվար, հայոց լեզվի և գրականության դասատու Վիգեն Գրիգորյանն էր:

Բռնի մահմեդականացում

Տողի միջնակարգ դպրոցն այդ ժամանակ արդեն խառն էր՝ հայ-աղբբեջանական: Գպրոցի տնօրեն էր նշանակված աղբբեջանցի՝ Նիյազ-մուալիմը, իսկ ուսմասվար՝ Վիգենը, կամ, ինչպես հենց առաջին օրը մենք «կնքեցինք»՝ մեր Վիգեն-մուալիմը: Գպրոցը կրում էր Բաքվի կոմիսարներից մեկի՝ Ավագյանի անունը: Եվ չնայած այն հանրահայտ իրողությանը, որ ընկեր Ավագյանը՝ մեկը քսանվեցից, համոզված ու երդվյալ ինտերնացիոնալիստ է եղել, հենց սույն անվանակոչումը մշտապես շահարկվում էր աղբբեջանցիների կողմից և առիթ ծառայեցվում հայերին անթաքույց ու բացահայտ նացիոնալիզմի դրսևորման մեջ մեղադրելու համար: Երբ հայերը հակադարձում էին, որ, եթե դպրոցը կոչվեր, ասենք, Ազիզբեկովի անունով, այդ դեպքում ձեններդ դուրս չէր գալու, չէ՞, սրանք ճարակորեն ու շատ արագ կողմնորոշվում էին և ասպարեզ բերում այս դեպքում էլ մեկ այլ դեմագոգիա, թե՛ տեսնում եք, ինքներդ եք խոստովանում, որ դեմ եք աղբբեջանցու անունով կոչելուն, հիմա տեսնում եք, որ իրոք նացիոնալիստ եք: Դա էլ ասենք, որ, որպես այլընտրանք Ավագյանին, մշտապես

հիշատակվում էր միայն Մեշադի Ազիզբեկովի անունը: Դ-ա էլ էր հասկանալի՝ այդ հայտնի «քսանվեցի» կազմում մեկ այլ անձ՝ ազգությամբ ադրբեջանցի, պարզապես չի էլ եղել:

Վիզենի հետ շարժվեցինք դեպի իրենց տուն: Ճանապարհին նա հասցրեց բարևել, գրուցել, հարց ու փորձ անել բոլոր իրեն հանդիպած համագյուղացիներին՝ թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի, հետև էլ հլա բնութագրել ամեն մեկին. սա ծույլ է, սա աշխատող է, սա լուրջ մարդ է, սա աֆերիստ է, և այլն: Եվ դրանք բոլորը՝ անկախ ազգային պատկանելությունից կամ էլ անձնական որակներից, բոլորն անխտիր ակնհայտորեն դրսևորում էին Վիզենի հանդեպ իրենց կողմից տաժած հարգանքն ու համակրանքը:

- Հարգում են, ինչպես և վայել է իսկական մուալիմին,- արձանագրեցինք մենք:

Նա մեզ հետ միասին սրտանց ու հյութեղ ծիծաղեց, բայց խստորեն զգուշացրեց ուրիշների մոտ իրեն հանկարծ այլևս «մուալիմով» չդիմել: Կատակը կարող է, և շատ հավանական է, չհասկանան՝ ոչ մեր, ոչ էլ նրանց կողմից: Էհ, ասողին լսող է պետք: Բա մարդ լենինականցուն կխոստովանի՞ իր թույլ տեղը: Քանի՞ անգամ հետագայում՝ շատ լավ գիտենալով նրա խիստ ու կտրուկ բնավորությունը, միևնույն է, դավադիր ու ստորաբար խեղճի կյանքը կերանք էդ չարաբաստիկ «մուալիմով»: Նորություն չէ, որ ուսուցիչը, պատվելի և հարգամեծար անձնավորություն է ցանկացած գյուղում՝ լինի դա հայկական գյուղ, թե՛ թուրքական, բուրյաթական, թե՛ լիտվական: Բայց այս դեպքում զգացվում էր, որ դա գուտ այն դեպքը չէ, որ դրսևորվում է ուսուցչի հանդեպ առհասարակ, հաճախ՝ ինչ-որ տեղ նաև պարտադիր կերպով: Սա հարգանքի ու մեծարանքի դրսևորում էր նախ Վիզեն Գրիգորյան անձնավորության նկատմամբ, ով միաժամանակ նաև ուսուցիչ էր: Եվ ավելացնենք. նաև մուալիմ: Ներիր, Վիզեն, ինձ՝ սրիկայիս: Նույնիսկ հիմա չկարողացա ինձ զսպել և կրկին անգամ մեջտեղ բերեցի այդ անիծյալ «մուալիմը», որը որքան որ զայրացնում էր քեզ, նույնքան էլ զվարճացնում մեզ՝ անամոթներիս: Հիշու՞մ ես, Վիզեն, թե ինչպես, նենգաբար, անգիր դասի նման սովորեցրել-սաղորել էինք այն ռուս լրագրողուհուն, որ եկավ և քեզ դիմեց. «Կներեք, խնդրեմ, հարգելի ընկեր Վիզեն-մուալիմ»: Իսկ մենք էլ հապճեպ փախուստի դիմեցինք, որպեսզի տեղում հանկարծ չզնդակահարվեինք: Եվ ճիշտ էլ արեցինք: Որովհետև մեր թաքստոցից պարզ տեսնում էինք, թե ոնց ես դու ցրված լսում նրան, իսկ կատաղի հայացքով փնտրում մեզ՝ իրոք պատրաստ բոլորիս տեղում գնդակահարելու: Կամ հիշու՞մ ես 92-ի աշնան այն օրը, երբ Հադրութ էր եկել նոր-նոր պաշտոնանկ եղած Րաֆֆի Հովհաննիսյանը: Եվ դու, միշտ այոքան գուսպ և խիստ չափի մեջ, պատրաստ էիր արդեն ձեռքիդ զավաթի գինին ցփնել ուղիղ անամոթ մեր կերպարանքների, քանի որ մենք, օգտվելով եկածների ներկայությունից, ընդգծված «մեծարում» էինք քեզ այդ բառով: Իսկ հետո ինքդ էլ ընկար անգուսպ ծիծաղի մեջ, երբ նկատեցիր, թե

ինչպես սկսեցին թրթռալ բեղերը էքս-նախարարի թուխ ու թմբլիկ դեմքի վրա, երբ մենք գործածման մեջ դրեցինք այդ բառը: Եվ հետո բոլորս՝ դու էլ մեզ հետ, երկար ժամանակ չէինք կարողանում «հետ գալ» այն զգացումից, որ ընդգծված և չափազանց վառ արտահայտված արևելյան դիմագծեր ունեցող Բա.Ֆ.Ֆին, «մուսլիմ» բառը, հավանաբար, ընդունել էր իր հասցեին: Իսկ երբ տեսար, համոզվեցիր ու պարզեցիր, որ մեր անամոթության դեմ նույնիսկ դու ես անգոր, մեզ ներկայացրիր սոսկալի մի ամբաստանանք առ այն, որ մեր արածը հավասարագոր է մարդուն բռնի մահմեդականացնելուն: Եվ մեզ անվանեցիր մու.ֆթիներ:

Եղբայրական դիմակայություն

Որպեսզի կարողանանք հասկանալ համագյուղացիների՝ թե՛ այս, թե՛ այն կողմից, Վիգենի նկատմամբ դրսևորվող վերը նշված այդ ընդգծված հատուկ վերաբերմունքի ակունքներն ու շարժառիթները, անհրաժեշտ է նախևառաջ հասկանալ, թե ի՞նչ էր ներկայացնում իրենից այն ժամանակվա Տողը և ո՞րն ու ինչպիսի՞ն էին Վիգենի տեղն ու դերը այդ գյուղում և այնտեղ ծավալվող իրադարձություններում: Տողը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի այն գյուղերից էր, որտեղ բնակչությունը խառն էր: Ե՛հիշտ է, Ղարաբաղում, որպես համատեղ բնակչության չափանմուշ և օրինակելի խորհրդանիշ մրցակցությունից դուրս էր Շուշին, բայց այդ թվերին այն իրենից արդեն որևէ յուրք հետաքրքրություն չէր ներկայացնում: Աղոբեջանցիները վաղուց արդեն Շուշին ոչ միայն աղացել, այլև նույնիսկ արդեն մարսել էին: Հայ տարրը այդտեղ ոչ թե հոգեվարքի մեջ էր, այլ, բառացիորեն, վերջին շունչն էր փչում և կարիք չկար թեկուզ չնչին ջանք գործադրել այդ վերջին հոգոցները դադարեցնելու համար: Ամեն ինչ ընթանում էր նախատեսված և փորձված սցենարով, և Շուշին արդեն վաղուց համարվում էր յուրատեսակ մի «Նախիջևան Ղարաբաղում»: Չուգահեռաբար, ոչ մի օր չդադարող խուլ պայքարը Ղարաբաղի համար միշտ էլ ընթացել է նաև Տողում: Բայց դեպքերի բերումով այնպես էր ստացվել, որ այդ ժամանակ հենց Տողը՝ պատմական Դիզակի տիրակալ Մելիք - Եգանյանների նախնիին մելիքանիստ ավանը, դարձել էր այդ պայքարի էպիկենտրոնը: Այստեղով էր անցնում մե՛րթ մարող, մե՛րթ կրկին բռնկվող, սակայն ոչ մի պահ չդադարող՝ Ղարաբաղի համար մղվող գոտեմարտի «ճակատային գիծը»: Այստեղ չէին արձանագրվում ծեծ ու ջարդ, սպանություն: Մահացու դիմակայությունն ու արյունալի ընդհարումները կլինեն հետո: Իսկ այն ժամանակ, 80-ականներին Տողում ընթանում էր մի պայքար՝ գուցե ոչ այնքան տեսանելի և ակներև, բայց ծավալում ու տևական: Մշտաբթուն, դաժան ու հյուծող, թուլացողին չներող ու պատժող անզիջում մի պայքար: Տողը հնարավոր չէր դիտել որպես շատերից մեկը հանդիսա-

ցող, հերթական՝ սովորական մի բնակավայր: Այն ուներ բացառիկ ռազմավարական նշանակություն. սակայն ոչ միայն իր դիրք-տեղանքով, որքան, որ իր գոյության-եղելության հոգևոր ու բարոյական բաղադրիչով, որպես ազգային ինքնության և ոգու պահպանման և նույն չափով էլ՝ դրա կորստյան կարևոր և առանձնակի մի խորհրդանիշ: Տողը բացառիկ և կարևորագույն օղակ էր հարևան ազգի կողմից տարվող ամբողջ Ղարաբաղի հայաթափման-աղբբեջանացման գործընթացում: Հաջողության հասնելու համար անհրաժեշտ էր հենց այստեղ, պատմական Դիզակի նախկին մելիքանիստ կենտրոնում արմատախիլ անել հայկական ամեն ինչ: Հայերն էլ էին դա շատ լավ գիտակցում: Եվ հենց այդ ամենն էր պատճառը, որ դեռ պահպանված իշխանական ապարանքներով, ոչ հեռավոր անցյալի պետականության խորհրդանիշ հանդիսացող գյուղական այդ բնակավայրը դարձել էր հայ-աղբբեջանական դիմակայության ասպարեզ: Այստեղ գոտեմարտի էին բռնվել և չափվում էին ոչ թե ընդամենը զուտ երկու ազգություններ և նույնիսկ՝ ոչ էլ երկու էթնոսներ, այլ, եթե ուզում եք՝ երկու պատմական մշակույթներ: Եվ նույնիսկ կարող ենք ասել՝ երկու քաղաքակրթություններ: Ազերիների կողմից Տողը վերցված էր հզոր արքանների մեջ: Տեղի աղբբեջանական համայնքին վերապահված էր այդ արքանի «ատամների» դերը՝ կտրող, բզկտող ու ծամող-աղացող: Իսկ այդ արքանները սեղմում էին շատ հմուտ ձեռքեր՝ Բաքվում: Հասկանալի է, որ կողմերի ուժերը խիստ անհավասար էին: Մի կողմին տրված էր գործնականորեն ամեն ինչ՝ հանրապետության տիտղոսակիր ազգի համար նախատեսված և հնարած բազմաթիվ հնարավորություններ, արտոնություններ ու առանձնաշնորհներ և այլ հզոր ռեսուրսներ: Եվ այդ ամենով սնվող ու օրեցօր ամրապնդվող մի յուրահատուկ լկտի ու ապահով ինքնավստահություն՝ իրենց ուզած վերջը տեսնելու համոզվածությամբ: Մյուս կողմում չկար, կարելի է ասել, ոչինչ, բացի ճնշված, բավականին խեղված ու աղճատված ազգային ինքնագիտակցությունից, մեկ էլ օրեցօր խորացող այն բանի դառը գիտակցումից, որ աստիճանաբար և անվերադարձորեն քեզնից խլվում է հայրենիքիցդ ևս մեկ բեկոր, որ կոչվում է Ղարաբաղ:

Ոչ էական մանրամասներ, կամ երկրորդական բնույթի քայլեր այս անողորմ դիմակայության մեջ չկային և չէին էլ կարող լինել: Ամեն մի մանրուք արժեր և գնահատվում էր չափազանց բարձր: Օրինակ, Տողը ԼՂԻՄ-ի միակ գյուղն էր, որ ուղղակի ավտորուսային հաղորդակցություն ուներ Բաքվի հետ: Բաքու-Տուղ (աղբբեջանցիք այդպես էլ գրում էին՝ Տուղ) երթուղու նոր ու շքեղ «Իկարուսները» շատ անգամ ավելի հաճախ ու կանոնավոր էին երթնելում, քան Էյիզոդիկ կերպով շրջկենտրոն Հաղղութ ժամանող մեկնող, հնաճ ու հնամաշ կոշիկ հիշեցնող, անսարք ավտորուսները: Հենց Տողի, այսօրվա լեզվով ասած, «գիծն» էր համարվում կենտրոնականն ու առանցքայինը ամբողջ ենթաշրջանում: Եվ դա քաղաքականու-

թյուն էր, հաղթանակ էր: Դպրոցի տնօրենը ոչ թե հայ էր, այլ աղբբեջան-
ցի՝ դա նույնպես քաղաքականություն էր և հաղթանակ: Մելիք-Եզանյան-
ների տոհմական ապարանքում բնակվում էր ոչ թե հայ, այլ աղբբեջանցի
Իսրաֆիլն իր ընտանիքով՝ դա էլ էր քաղաքականություն և հաղթանակ:
Բուժկետի հայ բժիշկը «բարեբախտաբար» մահացավ և տեղն իսկույն
աղբբեջանցի նշանակվեց՝ էլի՝ քաղաքականություն էր և էլի՝ հաղթանակ:

«Այն» կողմից Տոդուն ծավալվող բոլոր իրադարձությունների դիրիժոր էր
և ընդունվում ու ճանաչվում էր որպես այդպիսին՝ դպրոցի տնօրեն Նիյազ-
մուլախիմը, իսկ մեր կողմից, ինքնըստինքյան այնպես էր ստացվել, որ այդ
պարտականությունը բաժին էր ընկել Վիգենին: Այդ «պաշտոնին» նրան ոչ
ոք ոչ առաջադրել էր կամ ընտրել, ոչ էլ, առավել ևս, նշանակել: Պարզապես
ամեն ինչ ինքնաբերաբար էր դասավորվել: Որովհետև Վիգենն էր հենց
այդպիսին՝ ոչ արհեստականորեն ներառված, այլ բնական ձևով ներաճած
ու ամուր կանգնած այդօրվա ազգային մեր խնդրակույտի կենտրոնում:

Անիմաստ է անդրադառնալ մեկ անգամ ևս այն ակնհայտ հանգա-
մանքին, թե որքան անհավասար էին կողմերի դիրքերն ու կարողություն-
ները: Նիյազի թիկունքում ի վերջո կանգնած էր Բաքուն, որն ամեն ինչի
հետ մեկտեղ կարող էր ճգմել ու, առհասարակ, անտեսել տեղի մարզային
ու շրջանային իշխանություններին, չհիշել անգամ նրանց գոյության մա-
սին: Իսկ ի՞նչ և ո՞վ կար կանգնած Վիգենի ետևում: Եթե իրատես լինե՞նք՝
գուտ սեփական մտքի սրությունը և դիվանագետի բնատուր-աստվածա-
տուր օժտվածությունը: Մեկ էլ, կրկնակի՝ հանրապետական ու միութենա-
կան լծի տակ գտնվող, բայց իրենց նախնիների հողի վրա ապրող մարդիկ՝
իրավագուրկ և անճարակ, անկյուն քշված և արդեն իր սեփական շվաքից
նույնիսկ վախեցող տեղական իշխանության առկայությամբ:

Նվերը ետ չեն վերցնում

Քանի որ խոսք գնաց Ղարաբաղի տեղական իշխանության մասին,
կարծում եմ իմաստ ունի փոքր-ինչ շեղվել և որոշ չափով անդրադառնալ
քաղաքական այդ ինստիտուտին: Այդ իշխանությունը՝ հատկապես ի
դեմս մարզկոմի առաջին քարտուղարի, ի վերուստ, ի սկզբանե և իր նա-
խանշմամբ դատապարտված էր չընդունման ու չընկալման: Ընդ որում՝
երկու կողմից էլ: Սա այն դեպքը չէր, երբ գործում էր «օտար՝ յուրայիննե-
րի մեջ, յուրային՝ օտարների մեջ» բանաձևը: Ոչ: Այդ անձը օտար էր և
մնում էր այդպիսին թե՛ յուրայինների, թե՛ օտարների համար: Իսկ այդ
պաշտոնը զբաղեցնող անձնավորությունը մեծ հաշվով ողբերգական մի
կերպար էր, հենց ի սկզբանե կանխորոշված ու վճռված այդպիսին լինելու՝
այդ պաշտոնի բուն իսկ նախանշմամբ ու ներքին տրամաբանությամբ: 88-
ին հայերը Բորիս Կևրոկովին Ղարաբաղից քշեցին-վնդեցին՝ որպես դա-
սական ազգուրաց մի դավաճանի: Իսկ Աղբբեջանում Ժողովրդական Դա-

կատր նրան դատապարտեց ութ տարվա ազատազարկման: Ոչ ավելի, ոչ պակաս՝ ...Ղարաբաղյան Շարժումը կազմակերպելու մեղադրանքով: 92-ի աշնանը, ռազմաճակատի Ֆիզուլիի հատվածում, Խանձաձորի գումարտակի հրամանատար Վահան Բաղասյանի հետ միասին մենք մի քանի անգամ հանդիպեցինք այդ տեղի Ադրբեջանի Ազգային ճակատի ներկայացուցչի հետ և բանակցեցինք գերիների և պատանդների փոխանակման վերաբերյալ: Եվ ահա մի անգամ մեր «գործընկեր» Վազիֆը (համենայնդեպս, նա այդ անվամբ ներկայացավ) մեզ ներկայացրեց իրենց մոտ գտնվող այն հայերի ցուցակը, որոնց փոխանակման շուրջ ադրբեջանական կողմը պատրաստ էր բանակցել: Մեր մյուս հայրենակիցների անունների կողքին սևով սպիտակին գրված էր նաև՝ Կևորկով Բորիս Սարկիսովիչ: Ես հարցական նայեցի Վահանին: Տարիքով երիտասարդ, բայց բազմափորձ մարտական այդ հրամանատարը, ունենալով հենց այդ անձի վերաբերյալ հստակ ցուցումներ և սեփական կարծիք, ինչպես ասում են, հենց շեմքից բացառեց որևէ խոսակցություն այդ ուղղությամբ՝ մեր ինչի՞ն է պետք, հազիվ ենք պրծել: Նույնիսկ կատակեց թուրքի հետ.

- Համ էլ նվերը ետ տալը ընդունված բան չէ:

Վազիֆը, ի նշան հասկանալու, գլխով արեց ու ծիծաղեց.

- Ճիշտը որ ասեմ, մեր ...ին էլ ինքը պետք չի: Ես մերոնց ասացի, թե իզուր մի գրեք դրա անունը, հայերը «կուտը չեն ուտի»: Եթե մեզ պետք չի, բա հայերի ...ի՞ն է պետք այսօր Կևորկովը: Չլսեցին: Դե ի՞նչ ասեմ: Այս տեսակ դժբախտություն էլ է լինում: Երևի աշխարհի երեսին հնարավորներից ամենավատը,- փիլիսոփայորեն եզրափակեց նա:

Եվ իրոք, խոշոր հաշվով, ու՞մ պետք եղավ այս աշխարհում ԼՂԻՄ մարզկոմի վերջին Առաջին քարտուղարը՝ ողջ, թե մեռած: Չնայած այն բանին, որ իշխանության գալուց հետո Հեյդար հոյարը նրան բանտից հանեց և ասում էին, մի որոշ ժամանակ նույնիսկ ծպտյալ խորհրդական կարգեց:

Թմրագերծում

Վերադառնանք, սակայն, դեպի Տոլ դարցած մեր Տողը: Մեզ համար «տիեզերական» այդ դիմակայության մեջ կար առանձնակի մի հարթություն, մի տիրույթ, որտեղ ուժերը նորից խիստ անհավասար էին, սակայն, ինչպես ասում են՝ լրիվ հակառակի ճշտությամբ: Դա իշխանություններից և անձերից բացարձակապես անջատ և վեր կանգնած՝ Իրականության, ճշմարտության հարթությունն էր: Այդ հարթություն տեղափոխվելիս՝ Վիզենի թիկունքում հայտնվում էին նրա իրական Անցյալը, իրական Պատմությունը: Թող անխնա բզկտվող ու ավերվող, ոչ միայն լկտիաբար կեղծվող, այլև ուղղակիորեն այլասերվող, բայց, միևնույն է, այդ ամենից հետո էլ չդադարող լինել այն, ինչը որ իրենք կան՝ իրական Անցյալ, իրական Պատմություն: Իսկ ի՞նչ կար այդ հարթության մեջ Նիյազի թիկունքում. մաքուր հաշվով՝ ոչ

մի բան, բացի գենետիկ առանձնահատկություն դարձած անհագուրդ մի ցանկությունից՝ տեր դառնալ ուրիշի ամեն բանին: Սկսած ուրիշի հողով ու պատմությունով, նրա անցյալով ու նախնիներով, վերջացրած ուրիշի կնոջով ու հավաքնով: Եվ երբ իշխանության ուժը փլուզվեց, ամեն ինչ պարզից էլ պարզ դարձավ՝ աղբբեջանցիները Տոբոմ իրականում անելիք չունենին: Եվ հենց իրենք էլ, ի դեպ, դա շատ շուտ հասկացան: Բայց իրենց արյան մեջ մտած «որտեղ ես ոտք եմ դրել՝ դա իմն է» սկզբունքը և տարիների ընթացքում հայերի համեմատ իրենց ընծայած առավելությունների շնորհիվ ձեռք բերած ինքնավստահությունը իներցիայով դեռ մղում էր ազերիներին ինչ-ինչ քայլերի: Բոլոր տեսակի բողոքն ու շղարշները արդեն պոկված-հանված էին: Դիմակայությունը բացահայտ էր ու անողոք՝ համայնք համայնքի դեմ: Այս ամենից նախկինում էլ հեռու չէր, իսկ հիմա՝ առավել ևս հեռու չի մնում դպրոցը՝ որպես «գաղափարական» կենտրոն: Այստեղ հակակրանքն ու անհանդուրժողականությունը շատ արագ վերաճեցին բացահայտ թշնամանքի: Ուստիև, երբ սկսվեցին ծավալվել հայտնի իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ, Տոբի դպրոցը հապշտապ բաժանաբար միջնապատի միջոցով կիսեցին երկու մասի՝ հայկական և աղբբեջանական: Աղբբեջանցիների համար Վիգենն այլևս «մուլալիմ» չէր, այլ ընդամենը «էրմենի»՝ համապատասխան ածականներով: Այդ վիշտը նա մի կերպ տանում էր և, լարախաղացի, կամ ոսկերիչի պես, մեծագույն ճշգրտությամբ հաշվարկում ու իրականացնում էր իրավիճակով թելադրվող թերևս միակ հնարավոր ճիշտ քայլերը: Մի կողմից նա տրամադրում, նախապատրաստում ու կազմակերպում էր գյուղը, արդեն հասկանալի է, անխուսափելի դարձած ու լրիվ կանխատեսվող զինված պայքարին, մյուս կողմից՝ ձգտում էր նախազգուշացնել ու հետ պահել շատերին ժամանակավրեպ և հապճեպ քայլերից, դրանով իսկ կանխելով հակառակ կողմից սարքվող սադրանքներն ու դրանց պատճառով չարդարացված մեր հնարավոր կորուստները: Վիգենը գործնականորեն Տոբից չէր բացակայում: Նա նույնիսկ հրաժարվեց Մոսկվա մեկնող երկրորդ պատվիրակության կազմում իր համար նախատեսված տեղից՝ զիջելով այն իր համագյուղացի Ռուբիկ Բալայանին՝ հիմնավորելով, թե Ղարաբաղի առաջին կոոպերատորի ներկայությունը Կրեմլում ավելի մեծ տպավորություն կարող է թողնել: Քանի դեռ գործը չէր հասել զինված հակամարտության, Վիգենը հնարավորինս ինտեգրում էր Տոբը մնացած Ղարաբաղի հետ: Լիներ դա բարեգործական «Ամարասի», անձնական շփումների ու կապերի, և թե նույնիսկ՝ ծննդավայրը վաղուց թողած նախկին համագյուղացիներին «դարձի բերելու» միջոցով:

Իսկ Տոբում դեպքերը զարգանում էին իրենց ներքին տրամաբանությամբ նախանշված ուղղությամբ: Իրավիճակը գնալով ավելի ու ավելի էր սրվում ու շիկանում: Չմայած գյուղում տեղակայված խորհրդային ներքին գործերի զգալի ստորաբաժանմանը՝ դպրոցում գործող պարետատան գլ-

խավորությամբ, աղբբեջանցիները օր օրի դրսևորում էին ավելի ու ավելի ագրեսիվ պահվածք, սադրում նորանոր ընդհարումներ հայերի հետ: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Նման քայլերի նրանց դրդում էին ստեղծված նոր քաղաքական իրավիճակում իրենց դրության անհեթեթությունն ու դատապարտվածության զգացումը: Հասկանում էին, որ հողը, առանց մեկի միջամտության, իրեն-իրեն էր գնում ոտքների տակից: Երկու կողմերն էլ քաջ գիտակցում էին, որ այսպես երկար շարունակվել չի կարող և ամեն ինչ տանում է դեպի արմատական հանգուցալուծում:

91-ի աշնանը աղբբեջանցիք, ջանալով ցույց տալ և հաստատել, թե ո՞վ է իսկական տեր-տիրակալը Տոդում, դիմեցին իրենց խիստ բնորոշ մի քայլի՝ որքան քստմնելի, նույնքան էլ հուսահատ: Գիշերը նրանք հարձակվեցին հայերից մեկի տան վրա և ստռնասրտորեն կացնահարեցին ընտանիքի բոլոր հինգ անդամներին քնած վիճակում՝ մեծից փոքր: Մեր հարևանների կողմից իրենց ազգային ավանդույթների նման դրսևորումներին մենք, իհարկե, խամ չէինք: Տարիներ անց՝ այդ խիստ առանձնահատուկ և զուտ ազգային բնութագիր ունեցող ձեռագիրը դրսևորվեց արդեն Տոդից շատ հեռու գտնվող Բուդապեշտում՝ խաղաղելով քարանձավային իր էությամբ ու բնույթով ոչ միայն տեղի հասարակությանը, այլ նաև բազմափորձ եվրոպական դատավորներին:

Գիմազիցին սարսափեցնելու ակնհայտ նպատակ հետապնդող արյունալի այդ ակցիան Տոդի նոր-նոր ձևավորվող պաշտպանական ուժերի կողմից ընկալվեց և գնահատվեց ավելի քան իրատեսորեն: Եթե չձեռնարկվեն, ինչպես այսօր են ասում, համարժեք քայլեր, ապա բոլորս էլ կարժանանանք նման ճակատագրի:

91-ի հոկտեմբերի վերջն էր: Արևոտ, հրաշալի աշնան օրեր: Անցյալում են արդեն կասկածները, երկշտությունն ու անհարկի գզուշավորությունը՝ բա հետո ի՞նչ կլինի: Այո, հնչեցին «փմաստուն» ձայներ առ այն, թե դեռևս շուտ է, պետք է իրատեսորեն գնահատել ուժերի հարաբերակցությունը, չարժի «ցցերի վրա նետվել» և այլն: Նույնիսկ «հեղինակավոր» մի կարծիք հնչեց, թե, եթե մենք այստեղ ինչ-որ մի բան սկսենք, Իրանը պատերազմով մեզ վրա կգա: Էլ չեմ ասում, թե խորհրդային զինվորներն իրենց ոնց կպահեն: Բայց այդ ամենն արդեն անցել է: Բոլորը պատրաստ են ամենավճռական գործողությունների:

Մենք չենք ցանկանում անդրադառնալ այդ գործողության ռազմական նրբություններին: Դա զինվորականների գործն է և առանձին խոսակցության առարկա: Հակառակորդի համար լրիվ անսպասելի սկսված գործողությունը ժամերի ընթացքում հասցվեց իր փայլուն ավարտին: Հաջորդ օրը առավոտյան, երբ Վիգենին հեռախոսով վախվորած հարցրել էին, թե՞ իսկ ի՞նչ են անում հատկապես խորհրդային զինվորները, հնչել էր նրա պատմական դարձած պատասխանը.- «Մովորական: «Ուտրեննի գարյադկա» են անում»:

Այդ մեր հաջողությունը՝ եթե ոչ ամենաառաջինը, ապա առաջիններից մեկը, Տոդի պարագայում համարել ու ընդունել որպես մի գյուղի, բնակա-

վայրի սովորական ազատագրում, որպես գնահատական, կլիներ, թերևս, ոչ լրիվ ու կիսատ: Տողի պարագայում դա ոչ թե զուտ ազատագրում էր, այլ ավելի շուտ և ավելի շատ՝ ազատափրկում: Փրկում մահացու ճիրաններից: Դա այն հաղթանակն էր, այն հաջողությունն էր, որը սպասելի և կանխատեսելի էր այդ պահին և որը կանխորոշված էր նախորդ տարիների դիմակայման տրամաբանությամբ: Իսկ այդ հաջողության ունեցած նշանակությունն ու ազդեցությունը դեպքերի հետագա ընթացքի վրա լիովին համահունչ են ու համապատասխան այն բացառիկ նշանակությանն ու դերին, որ ուներ Տողը Դարաբաղում: Տողում սկսվեց, և այլ կերպ չէր էլ կարող լինել, - այն ամենն, ինչն ավարտվեց 94-ի մայիսով:

Իսկ մենք, այդժամ մխիթարում էինք Վիգենին.- Ի՞նչ արած, Վիգեն ջան, երկու երեկո մի տեղ չի լինում: Հիմա դուն դարձար տնօրեն, բայց հավերժ գրկվեցիր «մուսլիմի» կոչումից:

Կյանքը շարունակվում է

Պատերազմը Վիգենն անցկացրեց, եթե կարելի է ասել, մի տեսակ խաղաղով: Երբ այդ օրերին նայում էիր նրան, թվում էր, թե այդ մարդը անցել ու հաղթահարել է այս ամենին նախորդող չափազանց ծանր նախնական մի փուլ և հիմա էլ արդեն բեռն ուտերից զցած, թեթևացած իր համար պատերազմում է: Նրա զուտ ֆիզիկական ներկայությունը, զուտ գոյությունը այս երկրագնդի վրա բերել էր իր համագյուղացիներին այն համոզման, որ իրավիճակը ռազմաճակատում կարող է փոխվել ցանկացած ուղղությամբ, սակայն Տողին որևէ վտանգ սպառնալ երբևէ չի կարող: Այստեղ տեղին է նշել, որ արհեստական հերոսացումը, կամ էլ «տեղական նշանակության» կավե կուռքի կերպարի ստեղծումը այս պարագայում հիմնովին բացակայում էին: Փոլիստփայությունն ավելի պարզ էր ու հասկանալի. եթե ինքը՝ Վիգենը կա, ապրում է, ուրեմն ինքն այդ ամենը կհաղթահարի, կապահովի: Քանի որ դա է նրա կոչումն ու պարտականությունը: Եվ Վիգենը պաշտպանում ու պահպանում էր Տողը՝ առանց որևէ սեթևեթանքի ու պաթետիկ կեցվածք ընդունելու: Նույնիսկ 92-ի հուլիսյան օրվա հիշարժան այն մարտի ամենաթեժ ու իրոք դրամատիկ պահերին, երբ Կարմիր Շուկայի կողմից Տողի վրա էր շարժվում թշնամու յոթը տանկ՝ մեզ մի քանի անգամ գերազանցող հետևակի ուղեկցությամբ, և գյուղի բնակչությունը՝ տները թողել և քաշվել էր դեպի Տողասար, Վիգենը հանգիստ էր և վստահ: Ոչ իրարանցում ու նյարդայնացում, ոչ վազվզոց ու խուճապ և ոչ էլ, նույնիսկ, ինչպես այդ պահերի համար ընդունված է ասել՝ «մեռնելու, բայց թշնամուն առաջ չթողնելու վճռականություն»: Ոչ: Պարզապես, կարծես թե ավելի կենտրոնացած էր և հավաք: Եվ նույնիսկ այն պահին, երբ ազերիները՝ մարտի դաշտում թողնելով մեր «ֆագոտահար» շեկլիկ Կառլենի թեթև ձեռքով լուսանկարի ընթացքում իրար ետևից խփված երեք միավոր զրահատեխնիկա,

ետ դարձան, և կրակոցների դադարին հաջորդած լռության մեջ լավեց նույն Կառլենի հանրահայտ «կյանքը շարունակվում է» որոտը, Վիգենը գերադասեց գսպել թե՛ իր, թե՛ մարտիկների զգացմունքները և շատ առօրեականորեն հրահանգեց առաջին հերթին մուտքագրել թշնամուց առգրաված ռազմավարը. զի՛ Կառլենն աշխատել էր իրոք որ ոսկերչական ճշգրտությամբ: Տ - 72-ից մեկին, օրինակ, պետք եղավ ընդամենը շարժիչը նորից գործի դնել և մեքենան բերել հասցնել գումարտակի շտաբ: Վիգենի «տնտեսությունը»՝ Տոդի գումարտակը, Ղարաբաղի Պաշտպանության Բանակի ամենաապահովված և ամենամարտունակ միավորներից մեկն էր: Եվ ինչը նույնպես հասկանալի էր՝ ռազմաճակատի հենց Տոդի հատվածում ընթանում էին բավականին ինտենսիվ և արդյունավետ՝ երկկողմանի շփումներ փոխանակման գործընթացների շուրջ: Գումարտակը դեկավարում էին «կիսովի»՝ Վիգենը շտաբի պետն էր՝ գերադասելով, որ գումարտակի հրամանատարը լինի իր նախկին սան և աշակերտ Արմեն Գասպարյանը՝ Արմենչոն: Արմենը, չնայած իր համեմատաբար երիտասարդ տարիքին, շնորհիվ մարտական գործողությունների ժամանակ ցուցաբերած ունակությունների և խենթության աստիճանի հասնող խիզախության, շատ շուտ Ղարաբաղի զինվորականության մեջ դարձավ առանցքային անձերից մեկը: Բայց իր շտաբի պետին առաջվա նման, ինչպես և դպրոցական տարիներին իր ուսուցչին, նա դիմում էր միայն ու միայն «ընկեր Գրիգորյան»: Կասկածից վեր է, որ ամենի հետ մեկտեղ, նաև հրամանատարական այդ «տանդեմի» գործողությունների շնորհիվ ապահովվեցին Հաղթության Պաշտպանական Շրջանի կողմից իրականացված մի շարք օպերացիաների հաջողությունները: Պատերազմի Աստվածը բարեհաճ էր նրանց նկատմամբ և մարտի դաշտում խնայում ու պահպանում էր նրանց:

Բայց քմահաճ ու անողոր ճակատագիր-Ֆորտունան նույնչափ բարեհաճ չգտնվեց: Վիգենը զոհվեց ճամփեգրին տեղադրած ականի պայթյունից: Ականը պայթեց այն տեղում, որտեղով նա մի քանի անգամ արդեն անցել էր, երբ 93-ի գարնանային մեր հերթական առաջխաղացումից հետո նոր պահակակետերն էր տեղաբաշխում: Իսկ ամիս-ամիսուկես անց՝ կրկին անհետք էր ողբերգական պատահականությամբ, և կրկին ոչ մարտի դաշտում, զոհվեց Արմենչոն: Հաջող սկսված և հաջող ընթացող մարտի ավարտին մոտ՝ նա, ով այդ օրը նշում էր իր հոր մահվան տարին, չկարողացավ տանը նստել և, չանալով հրամանատարության և մարտիկների հորդորներին, բարձրացել էր դիտակետ՝ իրավիճակն անձամբ տեսնելու և համոզվելու համար, որ «գործն իրոք արված է»: Պատահական մի գնդակ «ռիկոշետով» անդրադարձել էր ժայռից և բազալտե տաշեղի հետ խրվել քունքը:

Հայրենի Տոդում նրանք հանգչում են կողք կողքի: Վիգենն ու Արմենչոն՝ Ուսուցիչն ու Սանը:

Մարտ, 2008թ.

ԳՐՈՇԸ ՉԻՆԱՐԻ ԿԱՏԱՐԻՆ

Հաղործում, ոստիկանության շենքից ոչ հեռու, մի հսկա սոսի է աճում, կամ ինչպես ժողովրդի մեջ է ընդունված այդ ծառն անվանել՝ չինար: Հաստաբուն ու բարձրաբերձ այս ծառը երևում է ավանի ցանկացած անկյունից և նրա նշանավոր ու ընդունված, անհերքելի խորհրդանիշներից մեկն է: Այս չինարը բնակավայրի համար յուրատեսակ մի հաշվարկման կետ է, հավաքատեղի և տեղորոշիչ: Հաղործիների խոսակցության մեջ այն հիշատակվում է որպես հատուկ անուն՝ այսինչ հաստատությունը գտնվում է Չինարից ոչ հեռու, կիսանդիպենք Չինարի մոտ, այնինչի տունը Չինարի դիմաց է և այլն: Չինարը այս, ինչպես և ցանկացած խորհրդանիշ, որքան որ մատչելի է և հասանելի, նույնքան էլ անհաս է և խորհրդավոր: Նրա հովի տակ շատ են սիրում խաղալ երեխաները, հավաքվում-գրուցում են մեծերը, ժամադրվում են սիրահարները... Չինարը «հերիքում ու հասնում էր» Հաղործում ամենքին ու բոլորին: Սակայն բացարձակ ողորկ՝ առանց մի ոստ ու չեչի, երեսուն մետրի չափ ուղիղ վեր ձգվող մի քանի գրկաչափ հաստությամբ նրա բունը տեսնողը, մտքի մեջ նույնիսկ չէր հանդգնում երազել այս ծառը երբևէ նվաճելու մասին: Ինքնին հասկանալի է, որ, երբ սկսվեց Ղարաբաղյան Շարժումը, Հաղործում Չինարին պարզապես չէր կարող չհատկացվել առանձնակի և հատուկ մի տեղ: Իսկ ավելի ճիշտ՝ կարևոր և էական մի դեր:

...Եվ ահա առավոտն է այն օրերից մեկի, երբ ամբողջ Ղարաբաղով մեկ «հոտհոտելով» վխտում են ամեն տեսակի ՕՍՈՆ-ներն ու ՆԳ-ները, ՎԳՎ-ներն ու ՎՎ-ները, կարմիր, կապույտ, սև ու ճերմակ և ով գիտի, էլ ինչ գույնի բերետները, և երբ աղբբեջանական բանտախույց ես նետվում՝ ոչ առանց խորհրդային զինվորականության օգնության, զուտ նրա համար, որ քո գանգատուփը, պարզվում է, բավականաչափ «եմիշաձև» չէ, երբ մեկ-մեկ թվում է, թե դեմը պատ է և ամեն ինչ կորցված է անվերադարձ: Առավոտն է այդ օրերից մեկի և Հաղործում իրարանցում է. ժողովուրդը ալիք-ալիք խուռերամ շտապում է դեպի Չինարը: Նույնիսկ մանկապարտեզի դաստիարակչուհին այստեղ է բերել փոքրիկների «ջոկատը»: Իսկ Չինարի կատարին, ամենավերևում, ծածանվում, փողփողում է Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Պետական Գրոշը. «ՄԻ-Ա-ՑՈՒՄ, ՄԻ-Ա-ՑՈՒՄ»:

Կասկածից վեր է, որ եթե այդ ժամանակաշրջանում, հայկականության խորհրդանիշը հանդիսացող այդ դրոշը, այդ օրերին «կոթողվեր», ասենք, ԽՍԿԿ շրջկոմի շենքի, կամ, նույնիսկ, պարետատան շենքի վրա, դժվար թե ունենար այն ներագրումն ու արձագանքը, ինչը որ ունեցավ նրա հայտնվելը հենց Չինարի գլխավերևում:

Այդ օրերին Հաղործում ընդամենը երկուսը գիտեին, թե ով է այդ չափազանց հանդուգն և չափազանց վտանգավոր ակցիայի նախաձեռնողն ու իրականացնողը: Մի ակցիայի, որը չափազանց էական էր և կարևոր քաղաքական առումով, սակայն խիստ վտանգավոր և անհավանական՝ մարդ-անձի ֆիզիկական և հոգևոր կարողությունների և հնարավորությունների շրջանակների մեջ տեղավորվելու առումով: Եվ նույնիսկ այսօր, թերևս, տարիներ անց, այդ նույն Հաղործում, բոլորը չէ, որ տեղյակ են այն մասին, որ այդ օրը, բառացիորեն միլիցիայի և խորհրդային զինվորների «ժքների տակ», հայկական դրոշը Չինարի ամենաբարձր ճյուղին կարողացավ հասցնել-բարձրացնել Հաղործի բնակիչ Ռոբերտ Բաբայանը:

Ռոբերտը մարդկանց այն տեսակից էր, որոնց կյանքն, ինչպես ասում են, անցնում-ընթանում է «առանց ծափահարությունների», քանզի նրանց իսկական, «մասնագիտական» գործունեության մասին տեղեկացված է լինում մարդկանց բացառիկ նեղ շրջանակ:

Մինչ Ղարաբաղյան Շարժումը Ռոբերտը ծառայում էր Հաղործում տեղակայված խորհրդային սահմանապահ ջոկատում: Նա կապավոր հետախույզ էր, ով իրականացնում էր «սուրհանդակային» կապը սահմանակից երկրում տեղակայված՝ խորհրդային հետախույզության ռեզիդենտուրայի հետ: Խորհրդային տարիների սերնդին հարկ չկա բացատրել, որ մարդը «հենց այնպես», պատահաբար, չէր կարող հայտնվել խորհրդային հետախույզության շարքերում և տարիներ շարունակ ծառայել այնտեղ: Մի շարք գուտ մասնագիտական յուրահատկությամբ թելադրված պահանջները բավարարելուց գատ, թեկնածուն նաև առաջին հերթին, որևէ կասկած չպետք է թողներ համակարգի հանդեպ ունեցած գաղափարական կայունության և իր նվիրվածության առումով: Տվյալ պարագայում՝ հենց առաջին հերթին վերացնելով իր մեջ իր ազգային «ես»-ը: Բայց, միաժամանակ, որքան ամուր և որքան խորն էր նստած Ռոբերտի մեջ հենց այդ ազգային «ես»-ը, ազգային ինքնագիտակցությունը, որ Շարժման առաջին օրերին իսկ նա մոտեցավ Շարժման ղեկավարներից մեկին՝ Աբրահամյան Էմիլին, և շատ պարզորոշ ու սովորական հայտարարեց. «Ես ամեն ինչի պատրաստ եմ»: Եվ շատ շուտ դարձավ այն անձանցից մեկը, ում վրա Հաղործում հենվում, խարսխվում էր Շարժումն ու հետագա պայքարը:

Ճառերի, բողոքների, կոլեկտիվ դիմումների և հանրահավաքների ժամանակները անվերադարձ գնում էին՝ իրենց հետ տանելով մեր միամտությունն ու դյուրահավատությունը: Շարժումը մտնում էր նոր՝ վճռական և միակ արդյունավետ փուլ՝ զինված պայքարի փուլ: Դրա առաջին շրջանում, երբ պատրաստակամություն ու վճռականություն կար բոլորի մոտ, իսկ ձիքը ու հմտություն՝ շատ քչերի, Ռոբերտը ամեն ինչ էր և ամեն տեղ էր. և՛ հրահանգիչ, և՛ զինագործ, և՛ ուղեկցող, և՛ դիվերսանտ, և՛ սակրավոր, և՛ ժայռագնաց, և՛ փրկարար: Եվ դա այն ժամանակահատվածում, երբ

տեղում, նպատակադրված, բացահայտ հակահայկական տեռոր էր սան-
ձահարել տեղի զինվորական պարետատունը՝ Հաղորթի դահիճ Կրավ-
չենկոյի ղեկավարությամբ: Ի դեպ, ասում են, մի քանի տարի հետո Կրաս-
նոյարսկում գնդակահարված:

Երբ սկսվեցին լայնածավալ ռազմական գործողությունները՝ բուն պա-
տերազմը, Ռոբերտը կրկին ամբողջությամբ գործի անցավ: Ահա դնելով
հնաճակն ու սկսեց նորոգել գնդացիքը, հետո կարաբինի վրա տեղադ-
րեց օպտիկական նշանառության դիտակը, կարգի գցեց գիշերային դիտ-
ման գործիքն ու շտաբի ալեհավաքը: Նստեց, ձեռքերը սրբեց ու ծխելով
դուրս եկավ՝ ասես ջուր խմելու: Երեքով հետախուզման գնացին: Գիշերը
տագնապ հնչեց՝ Քոչքեկի մոտ հարձակվել էին մեր պոստի վրա: Շտա-
պում ենք այնտեղ: Չղիմանալով մեր ճմշմանը՝ հակառակորդը նահանջեց:
Մեկ էլ թմբապատնեշի է՛ն կողմից, գրեթե թուրքերի շարքերի միջից,
անաղմուկ «բուսնում է» Ռոբերտը՝ իր ողջ հասակով մեկ, ձեռքին՝ ավարա-
րած զենքերի մի կապոց: Հավաքվում-վերադառնում ենք: Ռոբերտը գնաց,
լուծվեց գիշերվա խավարի մեջ: «Ներքևում մի երկու հարյուր մետրի չափ
ականապատել է պետք, որ «սրանք» էս կողմ էլ չկարողանան գալ»՝ մթի
միջից լսում ենք նրա ձայնը:

Քնել-չքնել, օրերը, կամ էլ օրվա ժամանակները տարանջատել, հաշվի
առնել գիշեր է, թե ցերեկ՝ նման խղիղներ այս մարդու համար գոյություն
չունեին: Նա ապրում և գործում էր մեկ այլ՝ սովորական մահկանացուներ
իս համար անհասու և անընկալելի ժամանակային չափի ու համակարգի
մեջ: Միասնական Պատերազմական Ժամանակի մեջ, որն, իրոք, ունի իր
սկիզբն ու վերջը և, իրոք, հաշվի չի առնում՝ ցերեկ է այժմ, թե՛ գիշեր: Ռո-
բերտը կարծես օրգանական մակարդակով իր մեջ ներառել էր այդ ժամա-
նակը, կրում էր այն, հանդիսանալով պատերազմի յուրատեսակ գործող
«կենդանի» մի խրոնոմետր: Եվ խորհրդանշական է, իսկ գուցե և օրինա-
չափ, որ, երբ գոհվեց Ռոբերտը, ընդհատվեց-խզվեց նաև այդ առանձնակի
«պատերազմական ժամանակը»: Ղարաբաղյան ռազմաճակատում դա-
դարեցին պատերազմական գործողությունները, տիրեց զինադադար: Այդ
պատերազմը, որի ժամանակային հաշվարկը ընթանում էր Ռոբերտ Բա-
բայանի անձի ֆենոմենի միջով, առանց նրան այլևս ընթանալ չէր կարող...

...Ղարաբաղյան պայքարին Ռոբերտը ամբողջապես նվիրաբերեց ոչ
միայն իրեն, իր անձն ու իր կյանքը, այլ նաև նրան, ում սիրում էր կյանքից
էլ առավել: Իր քսան տարեկան Մերյոժկային, ինչպես ինքն էր անվանում
իր որդի Մերգեյին՝ երկու քրոջ միակ եղբորը:

Սերգեյը Ռոբերտի համար գուտ որդի չէր: Նա զինակից էր ամբողջ
պայքարի ընթացքում, հոր գուգընկերն էր մարտում ու հետախուզության
ժամանակ: Նրանք միասին էլ եղել էին գրոհով Թոփախաչ բարձունքի
գրավման ժամանակ, որտեղից վերադառնալիս էլ Մերյոժկային «ծածկել»

էր թշնամու «Գրադ»-ից արձակած համազարկը: Որդու կորուստը Ռոբերտը տարավ, ինչպես ասում են, «քար դարձած»՝ անխոս, անարցունք: Պարզապես յուրաքանչյուր առիթ օգտագործում էր՝ գնում ու լուռ նստում էր որդու հողաթմբի մոտ:

...92-ի աշնունն էր: Որդու գոհվելուց անցել էր մոտ քսան-քսանհինգ օր, և Ռոբերտի հետ բարձրացանք Վանք գյուղի գերեզմանոցը, ուր հանգչում էր Սերյոժկան:

Հաղորդի դրությունը այդ ժամանակ այնքան էլ նախանձելի չէր: Առաջավոր դիրքերը անցնում էին գրեթե ավանի արվարձաններով: Մշտապես խփում է թշնամու հրետանին: Ամեն օր՝ ավերածություններ, գոհեր, բնակչությունը պատասպարվում է նկուղներում, և նույնիսկ մի քանի բլրախորշերում: Իրավիճակն իրոք որ սովորական չէր, բնակիչները ընկճված էին, ճնշված, վախեցած: Մեկ այստեղ, մեկ այնտեղ՝ մեկը, մյուսը էլ չէր դիմանում, բռնկվում էր. «Այստեղից գնալ է պետք: Հակառակ դեպքում հրետակոծելով բոլորիս կկոտորեն: Արդեն քանի անգամ էլ ինքնաթիռ է երևացել»:

Նստած Սերյոժկայի հողաթմբի մոտ մենք խոսում էինք իրավիճակից, հիշում որոշ մարդկանց մտադրությունը՝ ամեն գնով դուրս գալ, հեռանալ ավանից: Եվ Ռոբերտը, իրեն հատուկ պարզ, առօրեական տոնով, արձագանքեց.

- Թող գնան, ովքեր ուզում են: Ես երբեք գնալու մտադրություն չեմ ունեցել: Գնացող ըլնեյի, ռուսների հետ կգնայի՝ «պոզրանօտրյադի» հրամանատարությունը հա համոզում էր: Հիմա, առավել ևս, ես գնալու տեղ չունեմ: Եթե հանկարծ թուրքերը գան Հաղորդի վրա, ես իմ անելիքը որոշել եմ. իմ «հանգիստը» կփորեն իմ տղայիս կողքին և կկռվեմ ինչքան որ կարողացա: Տղիս կողքին էլ աստծուն կտամ հոգիս:

... Ռոբերտը գոհվեց 94-ին՝ Հորադիզի մոտ և հանգչում է Սերյոժկայի կողքին: Իսկ տանը, որ սարի տակին է, միայնակ ապրում են երկու այրի՝ նրա մայրն ու կինը:

Սեպտեմբեր, 1997թ.

ՄԵՐ ՀԱՐՄՆԱՅՈՒՆ

Բանակի ռոճիկը

Խոջալուն վերցնելուց հետո, մինչ մեր ՅԱԿ-40-ի «ՍՏԲԼԱ»-ով խփվելը, վերականգնվեց և որոշ ժամանակ դեռ գործեց, ճիշտ է, պատերազմի ժամանակին բնորոշ խիստ անկանոն ձևով, Երևան-Ստեփանակերտ օդային կապը: Եվ ահա 92-ի փետրվարին, Մանվել Սարգսյանի հետ, որն այդ ժամանակ ԼԳՀ ներկայացուցիչն էր Հայաստանի Հանրապետությունում, թռնում ենք Ստեփանակերտ: Տանում ենք մի տասը-տասներկու արկղ փող: Այդ արկղերում Ղարաբաղի նոր-նոր կազմավորվող բանակի առաջին աշխատավարձն էր, որ պաշտոնապես պետք է իր զինվորներին վճարվեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կոչվող պետության կողմից: Ինքնաթիռի օդ բարձրանալուց ընդամենը մի քանի թուպե անց, քիչ էր մնում, հայտնվեինք ուղիղ դրախտի դռների մոտ: Հարցն այն էր, որ մեր այդ ՅԱԿ-40-ում բոլոր նստարանները հասնված էին, այն դարձրել էին բեռնատար և այդ պահին ինքնաթիռն ինը հատ երկուհարյուրիսրանոց տակառներով վառելանյութ էր տանում Ղարաբաղ: Թե ի՞նչ օձի լեզու թափելով, ի՞նչ փաստարկներ բերելով, երկու դարաբաղցի կարողացել էին այդ առավոտյան «կեռ բերել» Վազգեն Սարգսյանին, գութ գցել նրա սիրտը, երևի թե գիտեն միայն իրենք և վերև՝ Աստված: Բայց փաստն այն է, որ ի վերջո նրանք հայտնվեցին ինքնաթիռում: Եվ, մի թեթև «շունչ առնելուց հետո», հավանաբար ուրախությունից... որոշեցին ծխել: Մենք միանգամից կարծես լավ չհասկացանք, թե ինչ է իրականում նշանակում նրանց ծխախոտ կայցնելը: Երևի թե բոլորիս բախտից էր, որ այդ պահին խցիկից դուրս եկավ օդաչուներից մեկը, որպեսզի ստուգի տակառների դիրքը: Տեսնելով «հավետով դուլաբ զարկողին»՝ խեղճ օդաչուն բաց արեց բերանը... և կորցրեց խոսելու ունակությունը. պարզապես ծխողի ճակատին ուղղեց ատրճանակը: Վերջինս էլ, չգիտես արթնացած բանականությունից, թե, պարզապես, վախից՝ ծխախոտն ամբողջովին... կուլ տվեց: Թռիչքն անցավ բարեհաջող, բայց վայրէջքի ժամանակ տակառներից մեկը տեղից պոկվեց, շրջվեց կողքի և, թույլ խցանված լինելու պատճառով, սոլյարկայով առատորեն ոռոգեց փողերով լի արկղերից մեկը: Օդանավակայանից փողը դեպի քաղաք բերեցինք՝ հավանաբար կոլխոզում ծերացած մի ինքնաթափով: Վարորդը շատ էր շտապում և մեր թանկարժեք բեռը նա պարզապես աղբակույտի նման շուռ տվեց Գերագույն Խորհրդի շենքի դիմացն ու գնաց: Բարեբախտաբար, դրսում էր ԳԽ նախագահ Արթուր Սկրտչյանի վարորդը՝ Վաղոն: Նրա հսկողությանը հանձնեցինք մեր միլիոնները, իսկ մենք բարձրացանք նախագահի մոտ: Սկրտչյանը սկզբից կարծես թե որոշեց բանակային կապիտալը պահեստավորել հենց ԳԽ իր

առանձնասենյակում, բայց հետո, հիշելով, որ հրետակոծության ժամանակ արդեն մի քանի անգամ արկերը ուղիղ նշանառությամբ դիպել էին խորհրդարանի շենքին, որոշեց փողերը տանել իրենց տուն՝ ուր ավերածության ռիսկը, ոնց որ թե ավելի քիչ էր: Վաղոյի «ՆԻՎԱ»-ով տարանք, սկսեցինք բեռնաթափել: Սույարկայով լավ, «տնական» թրջված չարաբաստիկ այն արկըր ճիշտ ու ճիշտ բաժին հասավ Ա.Սկրտչյանի այդ ժամանակվա տեղակալ, խորհրդարանի փոխխոսնակ Գեորգի Պետրոսյանին: Խեղճ մարդն արկըր թափ տվեց, որ ավելի հարմար կարողանա բռնել: Բայց արկղի թրջված-լրկած տակը բացվեց և շենքի դիմաց հավաքված բնակիչների աչքի առաջ արկղից՝ փետրվարյան ցեխի մեջ սկսեցին սահել տարբեր արժողությամբ դրամակապոցներ: Ավելի անհեթեթ ու հիմար իրավիճակ, որ ստեղծվեց մեզ համար, դժվար է պատկերացնել: Ամենօրյա հրետակոծումներ, ավերածություն, մահ, մարդիկ մի կերպ պատսպարվում են նկուղներում, իսկ էստեղ՝ արկղերով փող են տանում նախագահի տուն:

- Պա՛հ, էս ինչքան փող ա, էս ու՞ր են տանում էսքանը,- բացականչեց հավաքվածներից մեկը: Գեորգի Պետրոսյանը՝ սփրթնած, իրեն կորցրած ու մի տեսակ մեղավոր կեցվածքով, չգիտես, փողը թափելու համար, թե այդ փողերի հետ առհասարակ առնչություն ունենալու համար, կանգնած այդ անիծյալ փողակույտի գլխին, կարկամելով ու կցկտուր փորձում էր բացատրել հավաքվածներին, որ սա մեր հարազատ բանակի համար է, նրա առաջին աշխատավարձն է: Դե դարաբաղցիներին էլ, գիտեք, մնան մի առիթ է պետք:

- Հա՛, հա՛: Բանակի ռոճի՛կն ա: Դե վոր բանակի ռոճիկն ա, բանակին էլ տարեք տվեցեք, էլ ստի խի՞՞ եք բերում:

- Իհարկե, ի՛նչ բանակ, ի՛նչ ռոճիկ,- միջամտեցի ես, որպես ավելի ազատ անձ,- էս փողերը՝ մի ամբողջ «սամալյոտ» փող, ձեր նախագահին ենք բերել: Այ սրանք էլ, որ վրաները սույարկա է լցված, հատուկ վառարանում կրակ վառելու համար են:

Իրավիճակը ոնց որ թե դարձավ անորոշ-չեզոք, և ես շտապեցի վերջնականապես «սանձել» այն:

- Տնաշեններ,- մտերմիկ տնավարի դիմեցի հավաքվածներին,- փոխանակ օգնեք հավաքել, կանգնել եսին ինչե՛ր եք խոսում:

Թե կատակը ճիշտ ժամանակին էր ու ճիշտ էլ ընկալվեց, թե «հայաստանցիների» ներկայությունն ու անհոգ պահվածքը դեր խաղացին, բայց մթնոլորտը իրոք որ լիքաթափվեց, խաղաղվեց: Ոմանք սկսեցին մեզ օգնել ցեխի միջից փողերը հանել՝ նոր մոտեցողներին, արդեն գոհունակությամբ և ոչ առանց հպարտության բացատրելով, որ ահա, տեսեք, Հայաստանից արդեն առաջին ռոճիկն են բերել մեր բանակի համար:

Վերջապես փողերը տեղավորեցինք: Գեորգի Պետրոսյանը՝ քրտնած, բայց ակնհայտորեն ոչ ծանրություն բարձրացնելու պատճառով, «ոտաց վրա» մի մեծ թեյի բաժակ օղի «քցեց» և, մի քիչ թուլանալուց հետո, շատ

լուրջ ու մի քանի անգամ իր գոհունակությունը սկսեց հայտնել՝ իմ կողմից «ժամանակին ու ճիշտ կողմնորոշվելու կապակցությամբ»:

Բայց չարաբաստիկ այդ փողերը համառորեն չէին ուզում բաց թողնել խորհրդարանի փոխխոսնակին և դարձան նրա գլխին Աբու-Հասանի մաշ-իկների մնան մի պատուհաս: Մի երկու օր հետո Ա.Սկրտչյանը տեսնում է նրան ու «Ֆշշացնում», թե՛ էդ ախմախ փողերը ինչու՞ բերեցիք ու թողեցիք մեր տանը: Ով մտնում, նայում է ու սկսում հիմար-հիմար հարցեր տալ: Տեղակալը, թե՛ դու ասացիր, բա ու՞ր տանեմ: Սա էլ թե՛ ուր ուզում ես, բայց մեր տնից տար: Դե ի՞նչ արած: Շատ զգույշ, ծածուկ, այս անգամ առանց գետնին թափելու, Գ.Պետրոսյանը այդ փողերը տանում է իրենց տուն և գերապահովության համար վրաները պահակ կարգում սեփական աներջը՝ ձեռքին հնադարյան որսորդական մի հրացան: Մի քանի օր անց փողերը վերջապես բաժանվում են: Փոխխոսնակը ազատագրվում է դրանց հետապնդող կապանքներից, իսկ աներն էլ՝ սեփական փեսայի բռնակալությունից...

Դու տանկով կգաս

Անձամբ իմ ուղևորության վերջնական նպատակը Տոդ հասնելն էր: Ով այդ օրերին եղել է Վարաբաղում, կհասկանա, թե ինչքան տեղին էր, որ ես ինձ հետ շրջահայացորեն վերցրել էի երեք «կանխատր» բեմզին: Իսկ տեղում պարզվեց, որ ոչ թե «երեք կանխատր», այլ մի «ամբողջ երեք կանխատր»: Բայց իմ ուրախությունն ու ներքին գոհունակությունը, պայմանավորված սեփական հեռատեսությամբ ու հաշվեկանատությամբ, տևեցին շատ կարճ: «Իմ» բեմզինը դասական ձևով էքսպրոպրիացիայի ենթարկվեց շատ արագ՝ փողերի հանձնան-ընդունման արարողությունից անմիջապես հետո: Միամտաբար, երևի ավելի ճիշտ կլինի ասել՝ «հարիֆ-հարիֆ», ես հայտարարեցի, որ եկել եմ իմ սեփական բեմզինով և նույնիսկ ավելացրի, թե՛ տեսնում եք, պարոն նախագահ, մենք ոչ մի ավելորդ ծախս չենք ուզում փաթաթել մեր երիտասարդ պետության վզին:

- Ի՞նչ տանձի կոթ նախագահ,- դառնորեն հակադարձեց Սկրտչյանը: - Մեքենայիս մեջ վերջին երեք լիտրն է մնացել: Դու քո էդ երեք կանխատրներով ոչ թե նախագահ, այլ սուլթանի էլ էատեղ էս օրերին կարող ես «ձգել»:

Եվ իսկույն հրահանգեց Վաղոյին, որպեսզի էդ վաթսուն լիտրը տրամադրի այդ օրերին Ստեփանակերտում գործող միակ փոխադրամիջոցին՝ տեղացիների լեզվով «լետուչկա բուդկա Մոսկվիչին», որը հերթական հրետակոծումից հետո շտապում էր արկերի խփած տեղերը՝ սպանվածներին ու վիրավորներին տեղափոխելու: Եվ, կանխելով իմ հարցը, թե՛ բա այդ դեպքում ե՞ս ո՞նց եմ գնալու, Սկրտչյանը, նայելով իմ քարացած դեմքին, հանգիստ ավելացրեց.

- Իսկ դու տանկով կգնաս: Էդ կողմերը հենց վաղը մյուս օրը տեխնիկա է տեղափոխվելու:

Հարս ենք տանում

Այդ օրերին՝ 92-ի փետրվարին, որևէ տեղ գնալու, ուղևորվելու մասին խոսել կարելի էր միայն խիստ պայմանականորեն: Ոչ միայն ամբողջ շարժվող մեխանիզացիան, այլ նաև տեղի ավանդական-պապենական՝ երկարականջ փոխադրամիջոցը նույնպես տրամադրված էին բանակի կարիքների համար: Տեղից տեղ գնալը հնարավոր էր միայն զինվորական փոխադրամիջոցներով, այն էլ, ինքնին հասկանալի է, ոչ բոլորին: Մի խոսքով՝ պատերազմող երկիր, պատերազմական իրավիճակ: Ինչ վերաբերում էր «իմ» երթուղուն, ապա դեպի Հաղորթի ենթաշրջան տանող Ստեփանակերտ-Շոշ-Կարմիր Շուկա խճուղին, ինչպես և Ստեփանակերտից դուրս եկող բոլոր հայտնի ճանապարհները, գտնվում էր ուղղակի նշանառության տակ Շուշիի կողմից և, ըստ էության, ամուր «կողպած» էր: Հարցը միայն, և այնքան, զնդակոծվելու վտանգը չէր: Այդ առումով բախտը կարող էր և բերել: Առավել վտանգավորն այն էր, որ շատ հեշտ կարող էիր գերի ընկնել: Եվ այս իրավիճակում, հաջորդ օրվա կեսերին, նախկին մարզխորհրդի ամուր շենքի մոտ, ուր օրվա լույս ժամերին Շուշիից տեղացող ականներից պատասպարվում էր տնից դուրս եկած բնակչության հատվածը, ինձ հայտնաբերեց Վաղոն և հայտնեց, որ երեկոյան հինգի կողմ, քաղաքի «ներքևից» դեպի Հաղորթ է գնալու մի «Ուրալ»: «Դե տանկիցը հոմ լյավ ա, էլի», - մխիթարեց նա ինձ՝ հրաժեշտ տալով: Կար նաև մեկ այլ մխիթարանք. Մալիբեյլին ու Խոջալուն վերցնելուց հետո, Դաշուշենից մի շրջանցող, անվտանգ համարվող ճանապարհամասն հատված էին բուլդոզերով հարթել-բացել, որը մի տեղ գնում և միանում էր Կարմիր Շուկա տանող հիմնական ճանապարհին:

... Ասում են, կենդանիները յուրովի և չափազանց սուր են գզում գալիք վտանգը, այդ սպառնալի պահերին դառնում են սովորականից ավելի բանական և, բացի իրենցից, որքան որ կարող են օգնում են նաև մարդկանց՝ հեռու մնալ վերահաս վտանգից: Կարող են պնդել, որ ամենավճռական ու բախտորոշ պահերին տեխնիկան նույնպես դստորում է նման հատկություններ: Այն գիշերվա մեջ ես հավատացի և համոզվեցի, որ անանցանելի փետրվարյան ցեխի միջով լողացող-սողացող մեր այն «Ուրալ»-ը, որ ստիպված ու դատապարտված էր սոլյարկայի փոխարեն վառել սալիրտով ու օդիով բացած արդեն մեկ անգամ օգտագործած յուղ, իրոք որ օժտված էր որոշակի բանականությամբ և նույնիսկ՝ խղճով ու պարտքի զգացողությամբ: Նա գիտեր, զգում և հասկանում էր, որ այդ վտանգավոր, անվերահսկելի ճանապարհահատվածը, որը խիստ դժվարանցանելի է նույնիսկ թրթուրավոր տեխնիկայի համար, ինքը պարտավոր է անցնել առանց կանգ առնելու, հնարավորինս արագ: Ինքը՝ ասես մտաստեղության եզրին կանգնած, բայց բոլորիս համար անբացատրելի մտերիմ ու հարազատ դարձած եռասունի այդ մեքենան, կարծես գիտակցում էր, որ այս պահին իրենից ու միայն իրենից է կախված բոլոր այն մարդկանց կյանքն ու ճակատագիրը, ովքեր ամբողջովին վստահվել են իրեն: Իսկ

ամենակարևորը՝ իրենից է կախված այն հարսնացուի բախտն ու հետագան, որին ինքը պարտավորվել էր տանել հասցնել իր փեսացուին...

Արդեն մթնել էր, երբ տարբեր ու երկար ետուառաջներից ու ձգձգումներից հետո վերջապես կարծես թե շարժվեցինք: Մութ, ցուրտ: Հագիվ էինք կողք կողքի հարմարվել-տեղավորվել, երբ վարորդն հայտարարեց, թե՛ մի տեղ էլ կա մտնելու՝ հարս պետք է վերցնենք իր օժիտով: Պարզվեց, որ հրամանատարներից մեկը պսակվել է, բայց տվյալ պահին նա դիրքերում է և անձամբ հարսի ետևից գալ չի կարող: Այնպես որ, հարսին ողջ և առողջ պետք է հասցնել իր փեսացուին:

«Ռ-ոճիկն էլ ճիշտ ժամանակին բերեցինք», - մտովի այդ հանդիսությամբ նաև ինձ մասնակից դարձրեցի ես, - «փեսացուին, երևի, այս առիթով կրկնապատիկ վճարեն»:

Մտեցանք հարսի տանը: Մեքենայի լուսարձակները մթության միջից առանձնացնում են «ղավաթվորներին»՝ մեզ դիմավորում են տասնյակի չափ կանայք և երկու ծերունի: Դուրս բերին աչքալույսը մի շիշ թթի օղի և մի սեժ ափսե զանազան չրեղեն՝ բերաններս քաղցրացնելու համար: Մինչ մենք «բարի բախտ» ու «մի բարձի ծերանալ» էինք մաղթում զահելներին, հարսի հարազատները սկսեցին բարձել օժիտը: Ինչ-որ խալիներ, խուրջիներ ու կապոցներ, պարաններով կապկպած հնատճ պայուսակներ ու ճամպրուկներ և նույնիսկ՝ մեկ հատ 50-կանների ռճով սև ռեդիկյուլ՝ հարսի թևատակին: Իսկ օժիտ կոչվող այդ ինչք ու բարիքի վերևում էլ նստացրին հարսին՝ նրբագեղ, սպիտակ «դոդոկա տուֆիներով» ու պսակագետտով՝ վրան գցած մի հնամաշ վերարկու: Դե հասկանալի է, որ նոր կոշիկ ու զգեստ մի կերպ ճարել էին, բայց այդ ժամանակ որտեղի՞ց ճարեին նոր վերարկու: Հարսին ուղեկցում էին մի քանի բարեկամ-ընկերուհիներ՝ հարսնաքույրեր, հարսի նման՝ դրսի ցեխի և, առհասարակ, «դրսի» ամբողջ իրադրության հետ բացարձակապես «չբռնող» սպիտակ կոշիկներով:

Անցանք մեր ամրացված դիրքերից մի քանիսը և դուրս եկանք թփուտապատ մի տավարակ, ուր նոր-նոր սկսել էր դիրքավորվել հարյուրմիլիմետրանոցների մեր մարտկոցը: Հրետանավորները գզուշացնում և խորհուրդ էին տալիս առաջ չգնալ, սպասել գոնե, մինչև լուսանա: «Մա մեր վերջին դիրքն է», - բացատրեցին նրանք: Առջևում, մի տասը-տասներկու կիլոմետր, ոչ ոքի կողմից իրական վերահսկողություն չկա և ամեն բան կարող է պատահել: Նախ՝ գիշերը լուսնկա է, տեսանելիությունը գերազանց, իսկ այդ հատվածը հասանելի է թշնամու հրետանու համար: Իսկ հենց երեկ այդ մասում թուրքերը դարանամուտ էին եղել և մի քանի հոգու գերի վերցրել:

Երևի պատահական չէ, որ իրենց բնավորության մի խիստ որոշակի գծի համար դարաբաղցիների բնավորությունը հաճախակի արժանանում է ոչ այնքան հաճելի, բայց նույնպես խիստ որոշակի համեմատության՝ ակնարկելով հայտնի անշառ, բայց համառ մի էակ: Այս դեպքում էլ լսեցին զինվորների ասածը, գլուխները թափ տվին, ափսոսացին, բայց երբ հարցը եկավ արդեն գնալ, թե սպասել մինչև առավոտ, բոլորը միաբերան սկսեցին գռալ, թե ի՞նչ

սպասել, ի՞նչ մնալ, գնում ենք և վերջ: Իսկ զենք՝ գոնե մի քոսոտ «օրոնգ», ոչ մեկի մոտ չկար: Գե ինչ, գնում ենք, ուրեմն՝ գնում ենք: Ասել, որ սկսում է պատել վախը, ասին ու սարսափը՝ նշանակում է ոչինչ չասել: Աստված չբերի, բա որ հանկարծ թուրքերի վրա՞ դուրս գանք: Սովորական վախից, եթե այդպիսինն իհարկե կա, բազմապատիկ ահավորը դա մարմնովդ մեկ տարածվող ու մինչև վերջին բջիջը թափանցող՝ այս իրավիճակում հստակ գիտակցված սեփական անգործության կայուն ու ծանրաթանձր այն սոսկալի զգացողությունն է: Նայում են հարսին: Անհանգստության կամ հուզմունքի գեթ՝ նշո՞յլ անգամ չկա: Վատահ, ապահով նստած է աղջիկը՝ իր հարս-անձի անձեռնմխելիության ու անվտանգության բացարձակ համոզվածությամբ. ոչ մի վտանգ իր կողքով անցնել նույնիսկ չի կարող: Նրա այդ հանգստությունը հետզհետե կարծես փոխանցվեց նաև մեզ: Համենայնդեպս, ինձ որ՝ հաստատ: Համ էլ հրետանավորները ի վերջո որոշեցին հետներս մի «ավտոմատչիկ» ուղարկել: Արդեն հույս է:

Մի երկար ու ուղղաբերձ վերելքից առաջ վարորդի կարգադրությամբ բոլորս իջանք՝ վերելքը ոտքով անցնելու համար: Մի կողմից մեքենայի բեռը կբեթևանար, մյուս կողմից, եթե հանկարծ ծուղակ էլ սարքած լինեին, մի բան է լավ խիտ լցունած մի ամբողջ մեքենա նվեր, այլ բան է՝ մեկ-մեկ, ցաքուցրիվ: Իջավ նաև հարսը՝ ասես դժխուռիկն ոսկեգօծ կառքից: Լիալուսին այդ գիշերվա մեջ նրա հարսանեկան զգեստն ասես ավելի շքեղ ու տպավորիչ է դարձել: Բոլորը գնում են կռացած, մի տեսակ վախվորած ու լարված: Իսկ մեր հարսը, ցա՛վդ տանեմ, զեղահասակ, վեհ ու հպարտ կեցվածքով, գնում է համաչափ ու հանդարտ՝ իր քույրերով օղակված: Նույնիսկ փեշերն էր պահել և զգուշորեն շրջանցում էր փուշ ու մացառները, որ զգեստը հանկարծ չվնասվի: «Ավտոմատչիկը» պարբերաբար հիշեցնում է, որ մնանք իր ձախ կողմում, աջ չանցնենք: Մոտեցա նրան, ասացի՝ «գնանք հարսացուին ավելի մոտ, եթե ինչ-որ բան պատահի, առաջին հերթին կարողանանք նրան պաշտպանել»: Ձիվորը ժպտաց, գլխով արեց, և ամբողջ այդ վերելքի ընթացքում մենք չհեռացանք հարսի կողքից՝ ուղեկցելով նրան որպես «հաստիքային» թիկնապահներ: Ինքն, իհարկե, նույնիսկ չնկատեց էլ այդ «շքախումբը», ինչպես և իրականում վայել է իսկական հարս-դիցուհուն:

Իսկ ներքևում... Ներքևում ոռնում, տնքում, հռնդում ու հոգետանջ էր լինում անհավանական մեր այն «Ուրալը», բայց համառորեն, ուժերի գերլարումով սողեսող հաղթահարում էր տանջահար այն վերելքը: Նա՛ այդ «Ուրալը», շտապում էր, շատ էր շտապում: Որպեսզի հասցնի, անպայման տանի հասցնի հարսին ճակատագրի իր հանգրվանը:

...Այն գյուղում, ուր լուսադեմին դիմավորեցին «մեր հարսին», հետագայում ես եղա բազմիցս: Բայց ոչ մի անգամ չկարողացա ինձ ստիպել, որ հարցնեմ, թե ի՞նչ եղավ «մեր հարսի» հետագան: Վախենում էի: Շատ էի վախենում: Բա որ հանկա՞րձ...

Չէ որ, պատերազմում, ցավոք, վատ լուրերն ավելի շատ են...

Ապրիլ, 1997թ.

ԴՈՎՏՈՐ ԼԻԱՆ

Գորիսից արդեն դուրս էինք գալիս, երբ ճամփեզրին մեր «ՈւԱՉ»-ին ընդառաջ եկան երկու զինվորական՝ երիտասարդ մի մարտիկ՝ ինքնաձիգն ուսին, և սպայական համազգեստով մի կին: Կինը, որպես ավագ, ինքը սկսեց բանակցել և բացատրեց, որ իրենց և իրենց արկղերը հնարավորինս շտապ պետք է հասցնել Ստեփանակերտ:

«Եթե նույնիսկ մի քիչ շեղվեք, կամ ուշանաք, մենք կկապվենք ձեր հրամանատարության հետ», - հանգստացրեց նա մեզ՝ նկատելով մեր որոշ չափով տատանվելը:

Կինարմատը պատերազմում, այն էլ գործող բանակում, այնքան էլ հաճախակի երևույթ չէ և ցանկացած իրավիճակում ուշադրություն է գրավում: Եվ երբ նրանք նստեցին-տեղավորվեցին, ես, ի՞նչ մեղքս թաքցնեմ, սկսեցի ընդհատումներով, որքան թույլ էր տալիս ճանապարհը, զննել-տնտղել կին սպային՝ իմ գլխավերևի վարորդական հայելու միջից: Իսկ ուշադրություն չդարձնել նրան, տեսնելու առաջին իսկ պահից, պարզապես անհնար էր: Իր կազմվածքին համապատասխան վերածնունդ ու հարմարեցված զինվորական համազգեստը՝ «կամուֆլյաժը», ասես ավելի էր ընդգծում նրա բարեգեղ իրանը, իսկ բանակային գխարկին վայել հմտորեն ու ճաշակով ընտրված պարզ, ուղիղ սանրվածքը նրա ամբողջ կերպարին հաղորդում էր լրացուցիչ հմայք ու գրավչություն: Այդ ամենի հետ մեկտեղ նրա ողջ էության մեջ կար նաև մեկ այլ ձգող ու գրավիչ՝ թերևս ավելի կարևոր մի բան: Նրա աչքերի հանդարտ հայացքից, զուսպ, բարեհամբույր ժպտից և, առհասարակ, ամբողջ նրա պահվածք-կեցվածքից ճառագում էր յուրատեսակ ազնվաբարո մի դաշտ: Ջգացվում էր, որ այդ ազնվականությունը ոչ շինծու է, ոչ էլ ձեռքբերովի, այլ բնածին ու ցեղական: Եվ այդ ամենը քեզ ստիպում էր չկենտրոնանալ նրա տարիների, կամ էլ արտաքինի այս կամ այն գծերի վրա, այլ պարզապես նայել ու ընկալել նրան որպես գեղեցիկ և շատ հաճելի մի կին՝ նույնիսկ զինվորական համազգեստով: Նա այն անձանցից էր, որոնց նկատմամբ, անկախ իրավիճակից և տիրող մթնոլորտից, միշտ էլ հարգալից վերաբերմունք դրսևորելու մի թելադրանք ես գգում: Իմ հետի հինգ մարտիկները, որ մինչ այդ անընդմեջ հռչառում, հրմշտվում ու գզուզ էին անում, լրջացան, լռեցին և ամեն ինչ արեցին, որպեսզի մեր հյուրերը հնարավորինս հարմարավետ տեղավորվեն մեքենայում: Իսկ ես, որ մինչ այդ փորձում էի տղաներին զսպել կամ գոնե հանդարտեցնել՝ ավելի բարձր գոռալով կամ էլ ոչ տպագիր բառապաշարը գործա-

ծության մեջ դնելով, հանկարծ զգացի, որ այդ կնոջ ներկայությունը ստիպեց ինձ հիշել իմ հեռավոր համալսարանական կրթության մասին, մանկավարժ լինելու մասին և շտապել-գնալ դեպի այլ բառաշտեմարան: Եվ մարդու վրա ասես իջներ ամաչելու և տխրելու խառը մի զգացողություն: Մի կողմից, ամաչում ես ինքդ քեզնից, որ ներքուստ պատրաստվում էիր ճանապարհային մի ֆիրտի, բայց հասկացար դրա ամբողջ անհեթեթությունն ու տափակությունը տվյալ պարագայում, մյուս կողմից, տխրում ես, որ քանդվել ու փշրվել է հազար ու մի բան և կիրթ ու ազնվաբարո, բարետես մի կին այսօր հայտնվել է ահա պատերազմի այս ճամփեքին:

Այդ մտքերից մի տեսակ նվաղած՝ ես դադարեցի նայել հայելուն: Հետո ինձ թվաց հենց առաջին պահին այդ կին սպայի դեմքն ինձ հիշեցրեց մեր ծանոթներից մեկին: Բայց ես մտածեցի, որ հաստատ սխալվել եմ և լավագույն դեպքում այստեղ աշխատել է, հավանաբար, «երկվորյակների ֆեմոմենը», որ իբր ամեն մարդ այս աշխարհում պարտադիր ունի իր մմանակը: Քանզի բացարձակապես բացառում էի նույնիսկ չնչին, նույնիսկ ամենաաննշան հավանականությունը, որ դա կարող է լինել հենց այն անձնավորությունը, ում ես նրան նմանեցրի: Ինչպես միշտ լինում է նման դեպքերում, մի որոշ ժամանակ տիրեց լռություն, մինչև որ նստածներն ընտելացան միմյանց: Հետո նա առաջինը խոսեց զինվորների հետ: Եվ նրանք՝ պատերազմի երեք տարիների ընթացքում կոպտացած ու կոշտացած այդ երիտասարդ և ոչ այնքան երիտասարդ տղամարդիկ, կարծես թե շփոթվեցին ու մի տեսակ թուլացան նրա բարյացկամ ու բարեհոգի՝ զինվորական համազգեստին ու կոպիտ կոշիկներին խիստ անհամապատասխան բարեմիտ ու տնական խոսակցությունից, մտերմիկ հարց ու փորձից: Այդ հաճելի կրծքային ձայնը, ռուսական առոգանությամբ, բայց խիստ գրագետ նրա հայերենը նորից ինձ ծանոթ թվաց ու կրկին հիշեցրեց մեկին: Ես մի քանի անգամ էլ նայեցի հայելու մեջ և արդեն ճանաչեցի նրան: Եվ... բառացիորեն ապշահար եղա: Նույնիսկ մեքենան կտրուկ ու անհարմար արգելակեցի, որպեսզի մեկ անգամ ևս համոզվեմ, արդեն վերջնականապես, որ իրոք չեմ սխալվել: Քանզի այստեղ, այդ համազգեստով ես կարող էի պատկերացնել ում ասես, բայց ոչ հենց այդ տիկնոջը: Իսկ սխալ, իրոք որ չկար: Բժշկական ծառայության մայրի ուսադիրներով այդ կինը հենց ինքն էր՝ մեր գործընկերոջ, երկրաբան Իշխանի կինը՝ բժիշկ-համաճարակաբան Լիա Բագրատի Ստեփանյանը: Լիա Բագրատովնան, կամ դոկտոր Լիան, ինչպես դիմում էին նրան բոլորը:

... Ղարաբաղյան Շարժումը Լիա Բագրատովնան մերժեց հենց սկզբից և կտրականապես՝ նրա բոլոր դրսևորումներով: Մերժեց ամբողջովին և սկզբունքորեն՝ չընդունելով այն ո՛չ սրտով, ո՛չ բանականությամբ: Լինելով ՀԽՍՀ խոշոր մոմենկլատուրային աշխատողի դուստր, նա, ընտանիքից զատ, արդեն իսկ ուսանողական տարիներից սկսած ձևավորվել և կոպիվել

Էր որպես գաղափարապես կայուն կոմունիստ, ով ազգայինի որևէ դրսևորում համարում էր եթե ոչ հանցանք, ապա, առնվազն՝ հետամնացության ու գռեհկության հետևանք: Մենք նույնիսկ կատակում էինք, թե Յարուսլավ Հաշեկի կերտած պորուչիկ Լուկաշի նման, որի պատկերացմամբ չեխ ժողովուրդը դա հակակայսերական մի գաղտնի կազմակերպություն էր, այդպես էլ Լիա Բագրատովնայի պատկերացմամբ՝ հայ ժողովուրդը կոչվածը դա հակասովետական ուղղվածությամբ մի գաղտնի կազմակերպություն էր: Համոզված ինտերնացիոնալիստ. նա մտքի մի թելով, ուղեղի մի բջիջով անգամ հնարավոր չէր համարում, որ բոլշևիկյան կուսակցությունը, պատմության ինչ-որ մի հատվածում, կարող է հանկարծ մի ինչ-որ անարդարություն իրականացրած լինի որևէ մի ազգի նկատմամբ: Առավել ևս՝ հայ ազգի: Նրա խորին համոզմամբ՝ հենց բոլշևիկներն են, որ փրկել են այս ազգին լրիվ և վերջնական բնաջնջումից, և այսօր ինչ-որ բանից դժգոհելը, մեղմ ասած, «անշնորհակալ խոզություն է»: Չրույցների, բանավեճերի ժամանակ ուրիշների կողմից բերված ամենահավաստի և անհերքելի փաստարկներին նույնիսկ նա ուներ միշտ երկաթյա տրամաբանությամբ հիմնավորված իր հակափաստարկը. «Ուրեմն դա են հենց այդ պահին պահանջել Խորհրդային պետության շահերը: Իսկ դրանք անհամեմատ ավելի կարևոր են և գերակա, քան ցանկացած առանձին վերցրած մեկ ազգի շահը»: Խորհրդային մտավորականների ընտանիքում մեծացած միակ երեխան, խիստ նրբախնամ դաստիարակված, ռուսաստանյան հյուսիսային մայրաքաղաքի ազնվակիր իր շարժումով, և դեռևս շատ երիտասարդ տարիներից՝ արդեն Լիա Բագրատովնան, 88-ի Շարժման մասնակիցներին դիտում էր որպես անմիտ խառնակիչներից ու խռովարարներից բաղկացած մի խառնամբոխ: Որոնք, լավագույն դեպքում, պարզապես՝ «չեն իմանում, թե ի՞նչ են անում»: Իսկ Սումգաիթի ջարդերից հետո նա ուղղակիորեն հայտարարեց, որ այդ ամենի մեղավորները հենց Շարժման մասնակիցներն են, որոնք, հենց իրենց սաղորիչ գործողություններով, աղբբեջանցիներին հրահրեցին ու դրդեցին հակահայկական կոտորածների և դրանց բոլորին պետք է դատել՝ որպես սեփական ժողովրդի թշնամիներ:

- Մի ցեղասպանությունը ձեզ համար, երևում է, քիչ էր,- չնայած իր աշխարհակիրթ դաստիարակությանը, պոռթկում էր նա: Հիմա՞ ինչ նոր արհավիրք եք պատրաստվում բերել էս խեղճ ժողովրդի գլխին:

Ըստ էության, այդ ժամանակվանից էլ մեր շփումները նրա հետ դադարեցին:

Լիա Բագրատովնայի ամուսինը՝ մեր գործընկեր Իշխանը, ընթացող իրադարձությունների նկատմամբ ուներ տրամագծորեն հակառակ կարծիք ու գնահատական: Իշխանն այն խորհրդային մտավորականներից չէր, որ աշխատանքային ժամանակի մեծ մասն անցկացնում էին տարբեր հանրագիտարաններ քրքրելով, որպեսզի «Օգոնյոկի» խաչքառում պարտադիր

լրացնեն լարագզի ձկանը, կամ էլ թունագզի սնկանը վերաբերող բոլոր տողերն ու սյուները, իսկ «կվարտալի» վերջում էլ լացակումած բողոքեն, թե՛ «տեսաք չէ՞, շեֆն էս անգամ ինձ պրեմիա չի գրել»։ Իշխանն ապրում էր լիարժեք կյանքով՝ ասես հոգով ու մարմնով ընկղմված-սուզված լիներ հրաշք այն ավազանի մեջ, որի անունն է կյանք, և բառացիորեն լողում էր այն ամենի մեջ, ինչը կարող է մարդուն պարզել այդ կյանք կոչվածը, երբ գիտակցում ես նրա իրական արժեքը։ Հիմա էլ, ահա, Համագգային այս վերելքը. ազգի չփակված վերքի, բաց նյարդի կայծակնային արձագանքը պատմության կողմից ընձեռած հնարավորության հանդեպ։ Իշխանի մոտեցումը չափազանց և խիստ պրագմատիկ էր. անհրաժեշտ է անել ամեն ինչ, չխնայել ոչ մի բան, որպեսզի Ղարաբաղյան Շարժումը պսակվի հաջողությամբ, որպեսզի ունենանք շոշոփելի ու տեսանելի իրական արդյունք։ Սակայն որևէ կոնֆլիկտային իրավիճակ նման բազմակարծության պատճառով այդ ընտանիքում չէր գոյանում։ Երկուսն էլ, լինելով չափազանց բարեկիրթ, հարգում էին դիմացիների իրավունքը՝ դեպքերի նկատմամբ ունենալ այլ, սեփականից տարբերվող տեսակետ։ Պետք է ասել, որ այդ ընտանիքը բավականին յուրահատուկ մի միություն էր այն օրերի համար։ Երկուսի համար էլ դա երկրորդ և համեմատաբար ուշացած ամուսնությունն էր։ Լիան սովորել էր Լենինգրադում, պաշտպանել թեկնածուական թեզը և հետո ամուսնացել իր համակուրսեցի՝ պրոֆեսորի զավակ, ազգությամբ հրեա մի բժշկի հետ։

Գեռ սովետների օրոք, ինչ-որ ճանապարհով, Լիայի առաջին ամուսինը կարողացել էր Իսրայել գնալու թույլտվություն ձեռք բերել և մեկնել իր ավետյաց երկիր։ Լիան, որպես գաղափարի մարդ, բնականաբար, չէր կիսել ամուսնու նման վերաբերմունքը իրեն պահած և դաստիարակած Խորհրդային հայրենիքի հանդեպ և խզել էր նրա հետ հարաբերությունները դեռևս նրա Իսրայել մեկնելուց առաջ։ Ի դեպ, Իշխանը ավելի քան համոզված էր, որ Մոսկեսի սույն հետևորդը՝ «գաղափարական» այդ անհամատեղելիությունը մտածված և նպատակային է սաղրել, որպեսզի ազատվի կնոջ տեսքով իր վզից կախված ավելորդ բեռից և դյուրին դարձնի իր նախահայրերի երկիր գնալը։ Լիան էլ, բավական ծանր հոգեվիճակում, տեղափոխվում-վերադառնում է Հայաստան։

Իշխանը, Մոսկվայում երկու տարով վերապատրաստման գործուղման մեջ եղած ժամանակ, ամուսնացել էր այնտեղ հենց մոսկվաբնակ սիրունիկ մի ռուսի հետ՝ Երկրի Ֆիզիկայի Ինստիտուտից, ուր ընթանում էր իր գիտական կատարելագործումը։ Ապրում էին սիրով, ունեցել են մեկ դուստր։ Գործուղումը հաջողվել էր երկարացնել ևս երկու տարով, բայց երբ ժամկետը լրացել էր, «ժաքսնացուն Հյուսիսից» կտրականապես հրաժարվել էր գալ Հայաստան, իսկ Իշխանն էլ չէր ցանկացել իր կյանքը հավերժ կապել Ռուսաստանի մայրաքաղաքի հետ։ Եվ ահա, Երևանում, այդ երկու՝ ոչ այնքան երիտասարդ, արդեն լիովին կայացած ու կյանքի դառ-

նությունն էլ ճաշակած մարդիկ, հանդիպել էին միմյանց և ստեղծել մի նոր ընտանիք: Եվ եթե նման ընտանիքներում յուրաքանչյուրի ինքնուրույնությունն ու հաստատակամությունը, պատահում է, որ բերում են ընտանեկան անախորժությունների և, տեղ-տեղ նույնիսկ բախումների՝ կողմերի անզիջում դիրքորոշման պատճառով, ապա Լիալի և Իշխանի փոխհարաբերություններում դրսևորվում էին լրիվ այլ երանգներ: Իրենց հասունությունը երկուսի կողմից էլ առաջին հերթին դրսևորվում էր այն բանով, թե նրանցից ո՞վ առաջինը և հնարավորինս առավել չափով կզիջի մյուսին: Նրանք այդպես էլ ապրում էին, ասես մեկը մյուսի հանդեպ պարտավորություն վերցրած և նույնիսկ ուխտ արած՝ իր կեսին ոչ մի պարագայում չպատճառել որևէ տհաճություն: Հնարավոր չէր հասկանալ, թե արդյո՞ք այս երկու՝ իրարից լրիվ անկախ և իրարից շատ հեռու ձևավորված ու կայացած անձինք շատ ուժեղ սիրում են միմյանց, թե՞, որպես դաստիարակված և նրբահոգի կերպարներ, որոնք արդեն մի անգամ ապրել են անձնական դրամա, այժմ գնահատում ու փայփայում են միմյանց՝ հանուն իրենց ներկայիս երջանկության, ի դեմս նոր ընտանիքի, որտեղ մեծանում էր իրենց որդին՝ Բագրատը: Իսկ միգուցե, դա հենց ընտանեկան հարաբերություններում անհասանելի այն կատարելության դրսևորումն էր, որին մարդիկ անվանում են՝ փոխադարձ ամուսնական սեր...

Մենք բարևեցինք միմյանց՝ այս անգամ արդեն «իսկական» ողջույնով: Լիան, իրեն հավատարիմ, քաղաքավարությամբ առաջինը ներողություն հայցեց ինձ չճանաչելու համար և նրբանկատորեն ավելացրեց, թե՛ իր աչքին համագգեստով մարդիկ, չինացիների պես, բոլորը միմյանց նման են: Մենք երկուսս էլ զգում էինք, որ քաղաքավարության պահանջներով թելադրված ձևական «նախաբանը» բացարձակապես անտեղի է, որ իրականում երկուսս էլ անհամբեր սպասում ենք լսել միմյանց, և նույնիսկ օդն, ասես, հագեցված-լցված էր միմյանց ուղղվելիք հազարավոր հարցերով: Եվ Լիան հանդարտորեն սկսեց պատմել.

- Իշխանը Ղարաբաղ եկավ դեռ 91-ի աշնանը: Այստեղ ինքը սակրավորպայթեցնող էր, ականահատ, նաև տեղանքագիր՝ դե դու պետք է հիշես, թե տեղանքը զգալու ու կարդալու ինչ յուրահատուկ ունակություն ուներ նա:

Անցյալին վերագրված այդ «ունեք»-ը մի տեսակ ականջ ծակեց, իսկ Լիան շարունակեց.

- Հաճախակի նաև հետախուզության է գնացած եղել:
- Ո՞նց թե «գնացած եղել», - ընդհատելով նրան՝ չհամբերեցի արդեն ես: Նա լռեց մեկ-երկու րոպե, հետո հավաքեց իրեն.

- Հա, Իշխանը զոհվեց: Այստեղ՝ Ղարաբաղում: Մարտակերտի մոտ: Եռաբլուրում է թաղված: Մի օր երեկոյան եկավ և շատ սովորական՝ ասես Արտաշատ ընկերոջ մոտ հյուր էր գնում, հայտարարեց, որ առավոտյան ուղղաթիռով մեկնում են Ղարաբաղ:

Լիան պատմում էր, իսկ ես, ասես այդ ամենին ներկա գտնված, պատկերացնում էի, թե ինչպես, ներքուստ հակառակվելով ու դիմադրելով, իր ամուսնուն, իր երեխայի հորը և, վերջապես, աստծո կողմից իրենց պարզևած այն ուշացած երջանկությունը կորցնելու սոսկումն ու սարսափը սրտում, նա ճանապարհ է գցել Իշխանին: Եվ աչքի առաջ եկավ մի դրվագ Տարկովսկու «Ստալկեր»-ից, որտեղ Ալիսա Ֆրեյնդլիխը, ոռնալով, գլորվելով ու գալարվելով հատակին, չի ցանկանում իր ամուսնուն թողնել, որ նա կրկին մեկնի այն անիծյալ «զոնան»:

- Ահա այս կինն էլ լիովին իրավունք ուներ չթողնելու իր ամուսնուն Ղարաբաղ մեկնելու,- մտածեցի ես: Առավել ևս, որ ոչ գորակոչ էր, ոչ էլ գորահավաք: Համ էլ հիսունն անց գիտությունների թեկնածուին ի՞նչ գորակոչ, ի՞նչ գորահավաք: Ինքը զուտ իր կամքով, իր ներքին մղումով է որոշել մեկնել:

- Ես նույնիսկ փորձ էլ չարեցի նրան ետ պահել, կամ էլ ինչ-որ կերպ ընդդիմանալ,- իրականությանը վերադարձրեց ինձ Լիայի ձայնը:

- Որովհետև քաջ գիտակցում էի, որ այդ ամենն անօգուտ է: Նա միևնույն է գնալու էր, եթե գնալու որոշումն իր համար նա արդեն կայացրել էր: Եվ որքանով է իրատեսական և որքանով ճիշտ, առհասարակ, փորձել տարհանոգել մի մարդու, որն իր համար, ներքուստ, արդեն կայացրել է անձնական բնույթի նման մի որոշում: Չե՞ որ կայացնելուց առաջ նա ամեն ինչ կշռադատել է, հաշվարկել իր քայլի բոլոր հնարավոր հետևանքները, պարզորոշ գիտակցելով, թե ինչի է գնում և հանուն ինչի է գնում: Հետո մի քանի անգամ նա տուն եկավ: Իր մասին կտրականապես ոչինչ չէր պատմում, միայն փնթփնթում էր, թե երբևէ չէր կարող պատկերացնել, որ պատերազմում հնարավոր են նման խառնաշփոթ ու անկանոնություն:

Իսկ 92-ի փետրվարին Կարմիր Խաչի կողմից ինձ գործուղեցին Ղարաբաղ՝ այստեղի համաճարակային իրավիճակի վերաբերյալ հաշվետվություն պատրաստելու համար: Ես կարող էի նաև հրաժարվել, բայց որոշեցի անպայման գալ: Նախ չափազանց գայթակղիչ էր Իշխանին անակնկալ մատուցելը և հետո, ճիշտն ասած, ուզում էի անձամբ տեսնել և հասկանալ այս ամբողջի իմաստն ու էությունը: Ուղղաթիռով մեզ բերեցին Քոլատակ, այնտեղից էլ՝ Ստեփանակերտ:

Այստեղ տեղավորեցին մի մասնավոր տան մեջ, որն անվտանգ գոտում էր՝ Շուշիից հրետակոծման ժամանակ արկերը այդտեղ չէին ընկնում: Մի երկու օր հետո ինձ այցելեց Իշխանը և, ոնց որ Ղարաբաղ մեկնելու ժամանակ, չափազանց «տոնական» տոնով, ասես ինձ ուշ ժամի հանկարծ տեսել էր տնից հեռու մի խանութում, հրահանգեց գործերն ավարտել և շտապ տուն գնալ:

Կարմիր Խաչի առաջադրանքը ես կատարեցի շատ արագ՝ ընդամենը մի քանի օրվա ընթացքում: Հանձնեցի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, տվեցի վերջին «արժեքավոր» խորհուրդները և պատրաստվեցի առավոտ-

յան մեկնել Քոլատակ: Այնտեղից էլ՝ արդեն Երևան: Հետաքրքիր բան: Քանի դեռ զբաղված էի առաջադրանքով, Երևան վերադառնալը թվում էր ինքնըստինքյան որոշված և ոչ մի կասկածի տեղիք չտվող, ակնհայտ մի բան: Բայց Իշխանի դիրքեր վերադառնալուց հետո, որքան մոտենում էր մեկնելու իմ օրը, այնքան ավելի ու ավելի էի գալիս այն եզրակացության, որ հետ չեմ գնալու, որ այստեղից ինձ հետ վերադառնալ այլևս չի կարող ստիպել ոչ ոք. նույնիսկ Իշխանը, նույնիսկ որդիս: Եվ հարցն այն չէր, որ չէի ցանկանում Իշխանին թողնել ու գնալ, որ ուզում էի հնարավորինս մոտ ու հաղորդակից լինել նրան: Այդ ամենը, ինչ խոսք, կար: Բայց դրա հետ մեկտեղ կար նաև մեկ այլ, երևի թե անբացատրելի արգելակող մի գործոն: Ինչպես զուտ բնագոյով չէի կարող ամուսնուս թողնել ու գնալ, այնպես էլ՝ զուտ բնագոյով, կարծես թե չկարողանայի այս ամենը թողնել ու գնալ: Ես նույնիսկ ոչ թե հասկացա, այլ պարզապես ավելի շատ երևի զգացի, որ հիմա, այս օրերին, այստեղից գնալ չի կարելի, անթուլատրելի է: Հաջորդ առավուտ ես Քոլատակ չգնացի, այլ գնացի բանակի շտաբ և ծառայության անցա զինվորական հոսպիտալում: Արդեն երկու տարի է: Հիմա էլ, ահա, մեր Արմենի հետ դեղորայք ու վիրակապման պիտույքներ ենք տանում: Մեր մեքենան ուշանում էր, լավ է դուք պատահեցիք: Էլ չեմ ասում, թե որքան ուրախ եմ քեզ ողջ տեսնել:

- Ձեր տղան ո՞նց է, ինչո՞վ է զբաղվում, դպրոցն արդեն ավարտել է, չէ՞:

- Համալսարանում է, արևելագիտության բաժնում: Պարսկերեն է սովորում:

Իշխանի քրոջ մոտ է: Եկող տարի արդեն կավարտի: Մի քանի անգամ էստեղ եկել է: Նույնիսկ մի անգամ հոսպիտալում օրապահ կանգնեց: Ասում է ավարտելուց հետո անապայման գալու եմ այդտեղ ծառայեմ: Ես էլ չգիտեմ, թե ինչ ասեմ,- միտքն անավարտ ու կախյալ թողնելով և, ասես դրա ավարտը մեկ ուրիշից ակնկալելով, հոգնած ու անորոշ ժպտաց նա:

Իշխանի և Լիայի որդուն այդ պատերազմում մարտի դաշտ իջնել էլ բաժին չընկավ: 94-ի ապրիլն էր՝ պատերազմի վերջին տարվա վերջին ամիսը:

Ապրիլ-սեպտեմբեր, 2008թ.

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ-ՇԱՀՈՒՄՅԱՆ, ԿԱՄ ՉԻՆԱՎՈՐ-ԴԱՅՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գիշերվան խորհուրդը

94-ի ապրիլյան անձրևոտ գիշեր է: Վերադառնում ենք Ղարաբաղից: Վերադառնում էինք Հաղթոթի գնդի առաջին հրամանատար, հետո՝ գնդի հետախուզական ծառայության սպա՝ Էրիկ Աբրահամյանի թաղումից: Սերնդեսերունդ, ինչպես ասում են՝ «պորտից պորտ» մտավորական, խոստումնալից շնորհաշատ փոկալիստ, նա կիսատ թողեց իր ուսումը Կոմսերվատորիայում և, այդպես էլ չհասցնելով դուրս գալ մեծ բեմ, ճակատագրով վիճակված ու նախատեսված իր գլխավոր բեմերգը կատարեց լրիվ այլ թատերաբեմում, ուր ծավալված ողբերգության մեջ այն չկա սահմանազատում դերակատարների և հանդիսատեսի միջև և, որի մեջ ներգրավվածների մահն իրական է և ոչ բեմական: Դաժան այդ ներկայացման մեջ, որի բոլոր գործողություններն ու արարները՝ նախերգանքից մինչև վերջնամաս, գրվում են երկաթով, հասանելիք իր դերերգն Էրիկը կատարեց ամբողջովին և մինչև վերջ: Ինչպես և իր ամբողջ ընտանիքն ու գերդաստանը՝ բոլոր մտերիմներով ու հարազատներով:

Ինչպես հաճախ է լինում նման դեպքերում՝ շվարած ու շշմած, միանգամից դեռևս ընդունակ էլ չես լինում գիտակցել, ըմբռնել ու իր ողջ խորությամբ ընկալել կատարվածը: Ոնց որ ցուրտը՝ սկզբից ընդամենը միայն մաշկովդ ես զգում, իսկ ցրտահարման իրական հետևանքները «դուրս են տալիս» հետո: Ու կցկտուր խոսակցություններով, կարծես բնագրով ձգտես հնարավորինս արգելակել, քեզից հեռու պահել ներսումդ աստիճանաբար աճող-ծավալվող տագնապալի ու ճնշող անդուր մի դատարկություն: Իսկ խոսակցությունը՝ ներկաներիս և, առհասարակ, հայերիս համար, ավելի քան ծանոթ է, ծանծմված ու պարզունակ: Կկարողանա՞նք արդյոք զոնե այս անգամ հաղթանակը պահել մեր ձեռքում և վերջապես օգտագործել պատմության կողմից մեզ ընձեռած հնարավորությունը: Կհաջողվի՞ մեզ վերջապես կոտրել, խախտել դարերի ընթացքում ձևավորված տխուր ավանդույթը և այս անգամ, իրոք, պահպանել՝ Էրիկի նման պայծառ տղաների կորստյան գնով ձեռք բերած մեր Անկախությունն ու Պետականու-

թյունը: Եվ, առհասարակ, այն գենը, որը «պատասխանատու» է մարդ արարածի մոտ «պետականության զգացողության» համար, մեր՝ հայերիս ներսում, «հայկական գենոմ» հավաքածուի մեջ ներկա^o է, կա^o արդյոք, թե^o ոչ: Թե^o դարերի ընթացքում հիմնովին արմատախիլ է եղել՝ մեր իսկ ձեռքով, և իր տեղը վերջնականապես զիջել՝ չգիտես էլ, թե պատմության հատկապես որ պահին մեր մեջ թափանցած զգվելի ու ողորմելի «պրագմատիկ» ներկայացվող մի կեցության փիլիսոփայության դրսևորմանը առ այն, թե՛ «որտեղ՝ հաց, էնտեղ՝ կա՛ց» կամ էլ՝ արդեն բացահայտ պաթոլոգիկ, թե՛ «ուտելը ծնողից թանկ է»: Չէ՞ որ ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ Հայրենիք, Բնօրրան հասկացությունները մեզանում դա մի բան է, իսկ Երկիր (ճշտենք՝ հենց իրական Երկիր և ո՛չ թե փսևքոտ-կենացային ու ցուցադրական «Էրզիր») ու Պետություն հասկացությունները՝ լրիվ այլ: Ի^oնչն է պատճառը, որ իրականում նույնական հանդիսացող այդ հասկացությունները, մեզանում՝ հայերիս մոտ և հայերիս կողմից, ոչ միայն չեն համընկնում ու նույնանում, այլ իրականում իրարից բավականին հեռու են: Եվ չեն էլ նկատվում քայլեր՝ ուղղված այդ նույնացմանն ու համընկեցմանը: Ինչպե՞ս եղավ, որ ժամանակին լինելով բավականին հզոր ու ազդեցիկ տարածաշրջանային տերություն, ընդամենը մեկ հարյուրամյակի ընթացքում մենք բերեցինք հասցրինք մեր պետականությունը փառահեղ վախճանի և այլևս երբևէ չկարողացանք վերականգնել այն իր նախկին պատմական սահմաններում: Այստեղ-այնտեղ գոյացող ռախիտիկ հայկական քվազիպետություններն էլ ունենում էին ռախիտիկին էլ բնորոշ կյանքի տևողություն ու վախճան: Այդ ո՞նց պատահեց, որ ունենալով թիկունքում մի շարք մայիսյան հաղթանակներ, նույն օրերին մեր օրվան երևելիները Բաթումում ստորագրում էին խայտառակ մի թուղթ առ այն, որ լույս աշխարհ է գալիս մի նոր անկախ Հայաստան պետություն, իմա՝ Երևան քաղաքն իր արվարձաններով: Իսկ երբ տերությունները ողորմացին և մեզ վերադարձրին որոշ տարածքներ, մենք շատ արագ հայտարարեցինք **«ազատ, անկախ և միացեալ»** Հայաստանի հռչակման մասին, իսկ ընդամենը ամիսներ անց, նույն արագությամբ էլ զիջեցինք այն: Գործնականորեն՝ առանց նույնիսկ որևէ բարոյական դիմադրության: Եվ այսօր, պապենական հողերը ճոխ-ճոխ բաժանած, ստիպված արյուն ենք թափում նրա մի կտորի համար ու հետն էլ տքնում ենք սրան-նրան, իսկ առաջին հերթին և առավելապես՝ նախ ինքներս մեզ ապացուցել, որ մեր հողերը՝ դա մեր հողերն են: Եվ ներկայիս՝ հերթական անգամ ձեռք բերված պետականությանը շատեսս վերաբերվում ենք պայմանականորեն ու վերապահումով, իսկ անգուսպ կարոտն ու սերը՝ առ պատմական հայրենիք, դրսևորում ենք քյաբաբնոցներն ու խորովածանոցները նվիրական այն անուններով անվանակոչելով: Բացակայում է, թերևս, միայն «ՄԾԾ ԵՂԵՆ» անվամբ համապատասխան «օբյեկտը»՝ համապատասխան բաժակաճառերով:

Իսկ միգուցե այդ նույն հողից, որն ի վերջո, հենց ինքն է հանդիսանում թե՛ պետության, թե՛ հայրենիքի նյութական, տեսանելի մարմնավորումն ու արտահայտումը, մենք, տարածքների դարեդար կորուստների անվերջանալի այդ շարանում, ստեղծել ենք պարզապես մի ֆետիշ²: Ստեղծել ենք միրաժատիպ մի ֆետիշ հողի հասկացությունից՝ անվերադարձ կորցնելով և թաղելով այդ նույն հողի՝ իմա՝ Պետականության և իրական Հայրենիքի զգացողությունը: Եվ ի՞նչ հակափաստարկ, օրինակ, կարելի էր բերել աղբբեջանցի մի պաշտոնյայի կողմից վերջերս հայերին ուղղած այն հարցին, թե՛ «Չեր, հայերիդ, ինչներին է պետք հողը: Դուք մոլախոտի նման տարածվել եք աշխարհով մեկ և մյուս ազգերի ու պետությունների մարմնին կյամբ գոյատևում եք: Դրսում ավելի շատ եք, քան Հայաստանում: Էսքանդ էլ ելեք գնացեք, թողեք էստեղի ժողովուրդները հանգիստ՝ իրար հասկանալով ապրեն»: Ուրիշի կարծիքը քո մասին լսելը միշտ էլ հետաքրքիր է և օգտակար՝ անկախ այն բանից, հաճելի է այն մեր լսողության համար, թե՛ ոչ: Առավել ևս նման դեպքերում, երբ ասվածը ոչ թե կարծիք է, այլ՝ ձևավորված համոզմունք:

Իսկ ո՞ր օրը, ո՞ր պահին հայ հավաքական մտքի ո՞ր սլացիկ թռիչքով ծնվեց «խելացի գառը երկու մոր ծիծ է ծծում» գերիմաստուն հիմնադրույթը, որն առաջարկվում է որպես դեղատոմս՝ մարդկանց և պետությունների հետ մեր հարաբերությունները կառուցելու համար: Նախ, գառի հանդեպ «խելացի» անական օգտագործելը ավելի քան պայմանական է, քանզի հանրահայտ փաստ է, որ ոչխարը իր տեսակում նույնիսկ չորքոտանիների մեջ ամենահիմար էակն է: Էլ ինչ մնաց մանկահասակ տարիքում: Երկրորդը, իսկ ինչու՞ է բացառվում, որ այդ երկու կերակրող մայրերը մի լավ օր կբացահայտեն խարդախությունը և այդ «խելացի» գառը պարզապես կընկնի քացու տակ: Սովորաբար հենց այդպես էլ լինում է: Եվ երրորդն ու ամենակարեւորը, դեպքերի նույնիսկ ամենաբարենպաստ ընթացքի դեպքում, այդ շատ խելացի գառը, լավագույն դեպքում վերաճելու է ամենաշատը մի ոչխարի, որը բացի մորթվելուց, կամ գայլի երախում հայտնվելուց, այս աշխարհում ուրիշ ոչ մի ֆունկցիա այլես չունի: Դա էլ մեր դիվանագիտական իմաստությունը:

Եվ ինչքան էլ մենք չուզենանք և խուսափենք, ոչ միայն օտարին, այլ նաև ինքներս մեզ խոստովանել, բայց, միևնույն է, փաստը մնում է փաստ: Մեր ազգային հոգեկերտվածքի ձևավորման ու կայացման գործընթացը մեր պատմության մի ինչ-որ հատվածում եկել ու կանգ է առել այն հանգրվանում, որ պետությունն ու պետականությունը մեզ համար ավելորդ բեռ են և անիմաստ է ջանքեր թափել դրանք ստեղծելու, կայացնելու և, հատկապես, պաշտպանելու համար: Մարդուն, ազգին հատուկ՝ սեփական պետություն ունենալու, նրա մեջ ապրելու և զարգանալու միանգամայն բնական մղումն ու անհրաժեշտությունը մեզանում փոխարինվել է գոյատևման միջոցով այս աշխարհի երեսին մի ինչ-որ կերպ մնալու ձգտու-

մով: Եվ կարծես թե այսօր ավելի քան բարենպաստ է պահը այդ ամենը փշրելու, այդ ամենից վերջապես ձերբազատվելու համար...

Իգոր Մուրադյանը, ով լուռ լուռ էր, նույնպես «խոսք վերցրեց» և մեզ պատմեց իրական մի պատմություն, որն ավելի շատ կարող էր ընկալվել որպես ժողովրդական մի գրույց:

Ճեր հրեայի հայտնությունները

Բաքվի իր բազմաթիվ-բազմաբանակ հորաքույր-մորաքույրներից մեկը քաղաքում շատ հայտնի ձևարար էր: Աշխատում էր Բաքվի այն ժամանակվա «Լիտար-նոմենկլատուրային», կարելի է ասելի՛ գրեթե փակ համարվող կարի սրահում: Եվ ահա մի օր, «վերկից»՝ ոչ ավել, ոչ պակաս, Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմից իջեցվում է հրատապ հատուկ մի պատվեր: Ադրբեջանի խոշոր մի համույթ՝ երգի, թե պարի, թե նույնիսկ՝ երգի-պարի անսամբլը, պետք է մեկնե՛ր արտասահմանյան հյուրախաղերի և անհրաժեշտ էր նրանց համար ձևել-կարել ազգային կոչվող տարազներ: Ինչպես և ընդունված էր Խորհրդային երկրում նման դեպքերի համար՝ ժամանակը չափազանց քիչ, որոշումն էլ՝ թեկման ոչ ենթակա: Սրահի տնօրենը դիմում է մեր մորաքույրին՝ «փրկեա՛ զմեզ»: Մեր մորաքույրը՝ նման գործի համար անհավատալի անհավանական ժամկետներում ավարտում է պատվերը, ինչի շնորհիվ սրահի տնօրենը ոչ միայն «փրկվում է», այլ նույնիսկ արժանանում է Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարության շնորհակալանքին: Եվ ուրախությունից, ինչպես նաև իր գոհունակությունն ու շնորհակալանքն արտահայտելու համար, սրահի տնօրենը՝ տարիքն առած բազմափորձ մի հրեա, մեր մորաքույրի պատվին կազմակերպում է մի ճոխ բանկետ: Մորաքույրը իր հետ է տանում նաև իր զարմիկին:

- Նվաստիս,- ավելի ճշգրտեց Իգորը:

Եվ զարմիկի հիշողության մեջ շատ ամուր կերպով տպավորվել-դրոշմվել էր այն կենացը, որն արտասանել էր սրահի հրեա տնօրենը՝ վարպետ մորաքույրի պատվին: Անձամբ մորաքույրի հասցեին անկեղծ ու ի սրտե գովասանքներ շռայլելուց ու նրան անհատապես մեծարելուց հետո, բազմափորձ հրեան իրեն չի զսպում և անդրադառնում է նաև հայերին ու հայկական թեմային «առհասարակ», ավելի լայն ու ընդհանուր գծերով:

- Դուք, հայերդ, ամեն ինչ ունեք: Ամեն ինչ: Ե՛վ գիտնական, և՛ երաժիշտ, և՛ գորավար, և՛ արհեստավոր, և՛ հերոս և նույնիսկ ակամավոր հանցագործներ: Բայց չունեք ամենակարևորը: Դուք, հայերդ, չունեք Ձեր Թագավորությունը: Ձեր՝ Հայկական Թագավորությունը:

- Եվ գիտե՞ք,- եզրափակեց Իգորը:- Այդ օրվանից էլ ես փնտրում եմ այն՝ այդ Թագավորությունը: Իսկ եղե՞լ է այն երբևիցե:

Իսկ անձրևը անընդմեջ ու անդադար գալիս ու գալիս է: Եվ թվում է, թե արդեն անձրև էլ չէ, այլ պարզապես հալոցքի ջրերի սառն ու պղտոր շիթեր, որ հորդում են մեզ վրա: Ու մեր մեքենան էլ՝ չզիտես գնու՞մ է, թե՛ լողում, ճեղքելով-երկատելով այդ թանձր արճիճն խավարը: Հետո տիրեց անորոշ մի լռություն՝ ամեն մեկն ասես տարված էր իր մտքերով: Եվ այդ անվերջանալի ականակույր գիշերվա մեջ ինձ հանկարծ միանգամայն պարզորոշ թվաց, որ Հայկական Թագավորությունում ես մի անգամ եղել եմ, պարզ, ակներևաբար տեսել այն:

Շահունյանի մեկիությունը

Դա 1985-ի ամռանն էր, մեր ոչ մեծ «կամավորական» արշավախմբի երրորդ անգամ Ղարաբաղ գալու օրերին: Հատուկ նշում եմ՝ երրորդ անգամ, որպեսզի շեշտեմ, որ արդեն խամ ու անփորձ չէինք, երկրամասի ու այնտեղի հայության մասին որոշակի պատկերացում արդեն ունեինք: Սարտակերտում անցկացրած նախորդ երկու ամառվա ընթացքում ոնց որ թե մենք պարզել էինք մեզ համար, թե ո՞րն է նմանությունը և ո՞րը տարբերությունը մեր ու դարաբաղցիների միջև: Ամենի հետ մեկտեղ, ի տարբերություն մեզ, հայաստանցիներիս, դարաբաղցիների մոտ առկա էր և հստակորեն առանձնանում ու ընդգծվում էր նրանց պահվածքի, կերպի ու էություն մեջ նստած մի գիծ, որը մեզ մոտ, ասենք այսպես՝ այդքան էլ մակերեսի վրա չէր: Եվ նրանց հետ շփվելիս առանձնակի այդ գիծը ներսումդ անբացատրելի մի հուզում-խռովում էր առաջացնում, տակնուվրա անում, արթնացնում ինչ-որ հեռու-հեռավոր մոռացված մի բան: Մի բան, որ առնչվում է անհատի բնագրային, ենթագիտակցական-իռացիոնալ ծալքերին: Եվ շատ շուտ պարզ դարձավ, թե հատկապես ո՞րն է այդ հիմնական տարբերությունը: Չնայած կրկնակի՝ երկշերտ ճնշմանը (իսկ միգուցե հենց դրա՞ հետևանքով), դարաբաղցիների մոտ, դարաբաղցիների մեջ պետականության զգացողությունը ավելի ամուր էր նստած և ավելի արտահայտված, քան մեր՝ հայաստանցիներիս մոտ: Մի կողմից, և գուցե, դրա պատճառն այն էր, որ մենք, բնակվելով ՀԽՍՀ-ում, հանդիսանալով ԽՍՀՄ այդ հանրապետության տիտղոսակիր ազգը, հողի կորստյան իրական վտանգի տեսլական ՀԽՍՀ առումով չունեինք, ուստիս չունեինք մասնաման բանին ընդդիմանալու կարիքն ու անհրաժեշտությունը: Իսկ Ղարաբաղի և, առհասարակ, մեր արևելյան կողմերի գլխին եկածը այնտեղի հայությունը իրենց կաշվի վրա էր զգացել և, չնայած զանազան վարչատարածքային վերաձևումների և հայ տարրի արտահոսքի շարունակական ընթացքին, հնարավորինս ընդդիմանում էր այդ ամենին: Բայց կար մակ մեկ այլ, ոչ պակաս կարևոր մի հանգամանք. դարաբաղցիները հանդիսանում էին հայության այն հատվածը, որն ամենից երկար էր պահպանել իր

պետականությունը, վերջինն էր կորցրել այն: Եվ իրենց վաղնջական իրավունքների զգացողությունը՝ նախնիներից իրենց հասած Հողի հանդեպ, ամենևին էլ մեռած չէր: Եվ արթուն այդ զգացողությունը նրանց բնագրաբար մղում էր հակառակվել, ընդդիմանալ այդ Հողը իրենցից խլելու, այդ Հողից իրենց քշելու մշտական ձեռնարկումներին:

Շահումյանում այդ ամենն ավելի ակնհայտ էր նկատվում, դուրս էր եկած մակերես և նշմարվում էր ամեն քայլափոխին: Ամեն ինչից հասկացվում էր ու զգացվում, որ աղբբեջանցիները Շահումյանի հայության համար հեղինակություն չեն, որ աղբբեջանցիների իշխանությունը նրանց գլխին արհեստական ձևով է ներմուծած ու կարգած և կա ու գոյատևում է՝ զուտ խորհրդային հզոր պետական-պատժիչ մեքենայի առկայության շնորհիվ: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Աղբբեջանցիները այն ազգը չէին, որ կարողանային գենքի ուժով նվաճել ու հպատակեցնել և, առավել ևս, ոգու ուժով գերազանցել և ընկճել տեղի հայությանը: Ամեն ինչ միանգամայն այլ է: Եթե նույնիսկ չանդրադառնանք XVIII-XIX դարերի իրադարձություններին, այլ վերհիշենք ոչ հեռու անցյալի՝ 20-րդ դարի 18-20-ականների դեպքերը, ապա կարելի է արձանագրել, որ այդ ժամանակ Հյուսիսային Արցախը ի վիճակի եղավ սեփական ուժերով կազմակերպել իր պաշտպանությունը, ինչի շնորհիվ էլ կարողացավ գերծ մնալ մեծաքանակ կորուստներից: Իսկ Խորհրդային Միության կազմավորման ժամանակ էլ զուտ թղթի վրա գրված տարբեր կամային որոշումների հիման վրա իրականացվեցին տարածքային վերաբաշխումները՝ տարածաշրջանը բնակեցնող ազգերի միջև: Այնպես որ, հենց նման որոշումներից մեկի շնորհիվ էր, որ Շահումյանի՝ Գյուլիստանի հայությունը, իր տարածքներով հայտնվել էր Աղբբեջանական ԽՍՀ կազմում, իմա՝ աղբբեջանցիների լծի տակ, այլ ոչ թե նվաճվել ու հպատակեցվել էր աղբբեջանցիների կողմից: Եվ պատահական չէր, որ Աղբբեջանի ղեկավարության բոլոր փորձերն ու ջանքերը՝ ամեն գնով տարրալուծել, ձուլել-անհետացնել Հյուսիսային Արցախի այդ հատվածը աղբբեջանացված հարևան այլ շրջանների մեջ, այդպես էլ որևէ շոշափելի արդյունք չէին տալիս: Չուտ ձևական-պաշտոնական փոխհարաբերություններից, զուտ արտաքին-մակերեսային «ֆակտորայից» ենթադրվում ու զգացվում էր, որ իրոք՝ կա, գործում և հաշվի է առնվում խորհրդային պաշտոնական իշխանությունը: Բայց միաժամանակ զգացվում էր նաև, որ այդ ամենի հետ մեկտեղ, իրենց խորքային՝ ազգային ու մարդկային էությանը, կենցաղի կացութաձևով և, առհասարակ, «առօրյա կյանք» ասվածի ամբողջ կեցությանը, այս մարդիկ իրականում իրենց համարում են մեկ այլ՝ գուցե և մեզ համար անտեսանելի, բայց իրենց համար ավելի ընդունելի, ավելի հարազատ մի իշխանության հպատակ: Թեև ոչ պաշտոնական, բայց՝ «սեփական» իշխանության հպատակ: Դա դեռևս չնուռացված, պահպանված ու մարդկանց մեջ դեռևս նստած՝ մեյիքության ոգու իշխանությունն էր: Իսկ ուլքե՞ր էին այստեղ այդ ոգու կրողները, նրա կենդա-

նի մարմնավորումը: Գյուլիստանի՝ Մելիք-Բեգլարյանների ուղղակի հետնորդներ, ոչ մեծ թվով, բայց շրջանում բնակվողների մեջ դեռ մնացել էին: Սակայն խորհրդային վարչակարգը իր ճզմիչ մեքենայով, հավանաբար, այնպես էր արածավերել, նրանց միջից անհետ ջնջել իշխանական գիծը, որ շահումյանցիները նրանց վերաբերվում էին ոչ ավելի, քան անձանց, որոնք ընդամենը կրում են Մելիք- Բեգլարյանների ազգանունը: Համեմայնդեպս, նրանց մեջ՝ մելիքության ավանդույթների կրող ու շարունակող, շահումյանցիները չէին տեսնում: Ապա ու՞մ մեջ:

Խորհրդային Մելիքը

Գյուլիստանում մենք իջևանել էինք անտառապահ Ղուլյան Կոլյայի տանը, ով մեզ համար հյուրընկալ տանտեր լինելուց զատ, նաև ուղեկցող էր, պատմաբան-հնագետ և էքսկուրսավար: Երկրորդ թե երրորդ օրն էր: Մենք նոր էինք վերադարձել դեպի Շենթան-Ղալա կոչվող տեղամրը կատարած երկարատև հոգնեցնող արշավից և պատրաստվում էինք ընթրելու: Կոլյան, մի երկու բաժակ հոնի օղի գցելուց հետո, խաղուն խորամանկությամբ մեզ նայելով, խորհրդավոր տեսքով հայտնեց. «Գիտե՞ք, ձեր մասին Ջինավոր-դային էր հետաքրքրվում»: Ու շարունակեց՝ մի տեսակ ներքին գոհունակությամբ ու որոշ հպարտությամբ. «Ինձ մտա մարդ էր ուղարկել, հարց ու փորձ էր անում, թե դուք ի՞նչ նպատակով եք եկել, ինչո՞վ եք այստեղ գրաղվում: Դե ես էլ բացատրեցի, որ Ղարաբաղի պատմական հուշարձաններն եք ուսումնասիրում»:

Իսկ մեր հարցուփորձից հետո, թե ո՞վ է այդ անձնավորությունը՝ Ջինավոր-դային և ինչու՞ է հետաքրքրվում մեզանով և մեր գործունեությամբ, Կոլյան գրեթե մինչև լույս պատմում էր Գյուլիստանի մելիքներից սերվող Մեղրյանների մեծ գերդաստանի և նրա առաջնորդի՝ Ջինավորի մասին:

Չնայած այն հանգամանքին, որ հենց իր՝ Կոլյայի խոստովանությամբ, ինքն այնքան էլ ջերմ հարաբերությունների մեջ չէր այդ ընտանիքի հետ, բայց, որպես լայնախոհ, ողջամիտ ու պարկեշտ անձնավորություն, նա մի կողմ դրեց այդ ամենը և անաչառ ու համակողմանիորեն մեզ ներկայացրեց ավագ Մեղրյանի և նրա գլխավորած գերդաստանի տեղն ու դերը այս շրջանում: Պարզվեց, որ Մեղրյաններին շահումյանցիները դիմում են թե՛ որպես առաջին, թե՛ որպես ամենավերջին աստիճանի ատյանի: Դիմում են բոլոր հարցերով՝ հարևանական ու ընտանեկան վեճերից սկսած և բռնավորին օգնելու խնդրանքով՝ վերջացրած: Մեղրյանները լայն կապեր ունեն ոչ միայն հարևան շրջաններում, այլ նաև Կիրովաբադում, Բաքվում: Իր իսկ կողմից շրջագծված բավականին լայնածավալ տիրություն պրակտիկորեն չկա, գոյություն չունի այնպիսի մի հարց, որ չկարողանա լուծել Ջինավոր-դային: Եվ տեղական իշխանությունները լրջորեն հաշվի են նս-

տում այդ ընտանիքի հետ: Բնականաբար՝ ի դեմս այն գլխավորողի: Շահումյանի շրջկոմի ցանկացած նորանշանակ ղեկավար իր գործունեությունը նոր աշխատավայրում սկսում է Մեղրյանների տուն կատարած՝ ըստ «ավանդույթի» պարտադիր դարձած այցից, այն է՝ Մեղրյանների տանը հաց կիսելու միջոցով, Ջինավոր-դայուն «հավատարմագրերի» հանձման յուրատեսակ արարողությունից: Եղել էր մեկը՝ Ռուդոլֆ Սիրգոնը, Բաքվից ուղարկված, որ որոշել էր կոտրել ավանդույթը, ցուցաբերել ինքնուրույնություն և հարաբերակցվել ժողովրդի հետ, շրջանցելով Մեղրյանների ապարանքը: Այդպիսով իսկ փորձելով ցույց տալ, թե ով է շրջանում իրական տեր-տիրակալը: Բայց, ինչպես նման դեպքերում ասում են, ինչ-որ մի բան «թարս բուսնեց»: Շահումյանցիները ոչ միայն հասկացրին այդ ընկերոջը, որ առանց Ջինավոր-դայուն ներկայանալու իր «լեգիտիմությունը» որպես առաջին քարտուղարի, խիստ կասկածի տակ է, այլև հենց մոտակա ձմռանը շրջանում կազմակերպեցին անասունի զանգվածային անկում՝ դրանով իսկ արդեն գործնականորեն հասկացնելով Սիրգոնին, որ որպես ղեկավար ինքն՝ «ինքնակոչ» է: Դե ի՞նչ պետք է աներ: Եկավ ու չոքեց Ջինավորի առջև՝ հայցելով նրա ներողամտությունն ու աջակցությունը: Նա էլ դարձի եկածի հետ վարվեց իշխանավայել մեծահոգությամբ: Բանակցեց Մուղանի դաշտում ձմեռն անցկացնող թուրքերի հետ, և զարմանը Շահումյանի «կոլխոզ-սովխոզներում» անհրաժեշտ գլխաքանակը վերականգնված էր: Դեռ մի բան էլ ավելի:

- Այսինքն, պաշտոնական իշխանությունն իր հերթին, բայց Շահումյանում իրական իշխանությունը Մեղրյաններն են՝ խորհրդային մեխիքները, - ծիծաղելով հարցրեցինք մենք Կոլյային:

- Հենց այդպես էլ կա, - լրջորեն պատասխանեց անտառապահը: Իր պատասխանի լրջությամբ հասկացնելով մեզ, որ եթե մեր հարցի մեջ հանկարծ հայտնվել էլ էին հեզմանքի կամ կատակի տարրեր, ապա տվյալ դեպքում դրանք ամենևին տեղին չեն:

- Եթե հարցրել է, նա հենց այնպես ձեզ բաց չի թողնի, - եզրափակեց իր ասելիքը Կոլյան:

Կոլյանի գիշերային այդ գրույցից հետո մենք բացատրություն գտանք մահ մեկ այլ, գուտ տեղական՝ «շահումյանական» յուրահատկության մի դրսևորման: Միանգամայն պարզ դարձավ, թե ի՞նչն է իրական պատճառը, որ, թեև շրջանի վարչական կենտրոնը դա Շահումյանովսկ ավանն է, սակայն տեղի բնակչությունը իր համար իրական իշխանանիստ կենտրոն, ինչպես և մեխիքների ժամանակ, այժմ էլ համարում էր հենց և միայն՝ Գյուլիստան գյուղը:

Իսկ առավոտյան, եկավ այն նույն մարդը, մի տասը թույն գրույցեց Կոլյայի հետ և գնաց: Իսկ Կոլյան մեզ հայտնեց, որ այսօր ոչ մի տեղ չգնանք և չճաշենք: Քանի որ ժամը 2-ին Ջինավոր - դային «փր մոտ սպասում է Հա-

յաստանից եկած գիտնականներին»։ Եվ նորից, ինչ-որ անսովոր բան կար այս ամենի մեջ։ Նախ այն, որ ակնհայտ էր, հրավերը քննարկելը, կամ էլ «էթիկայից» ելնելով գոնե ձևական, գոնե մեկ անգամ մերժելը, տվյալ դեպքում բացարձակ անիմաստ էր և անհեթեթ։ Այդ մարդուն ուղարկելուց, նրա գալուց, պահվածքից, խոսք ու գրույցից մի ինչ-որ՝ ոչ թե հնաճճ, արխայիկ, առավել ևս՝ հետամնաց-գավառական, այլ կասեի՝ հնամենի, պատմական մի հոտ էր փչում։ Եվ հենց միջնադարի։ Չգացողությունը նման էր այն բանին, որն ունենում է քաղաքաբնակը, երբ քաղաքային խնամված-խուզած պուրակներից հետո հայտնվում է հանկարծ կուսական թավախիտ անտառում։ Մենք մի տեսակ սովորել, ընտելացել և հաշտվել էինք, որ նման՝ «հարմարադերաց» անձինք սովորական մի ստորաքարշ, հացկատակ պնակալեզներ են։ Ոչ։ Այս եկած մարդը ամենևին այդ որակի չէր։ Նա սովորական մի ինչ-որ ճորտ-ստորուկ չէր։ Նա պարզապես իշխանական տանը ենթակա, հպատակ անձ էր, որ ճշտապահորեն ու ջանադրաբար կատարում էր ճանաչված ու ընդունված տիրակալի հանձնարարականները։

Գեմիթրճյանը ո՞նց ա

...Եվ ահա հուլիսյան շոգ կեսօրին Գյուլիստանում մենք ուղևորվեցինք դեպի Մեղրյանների առանձնատունը։ Գարպասների մոտ մեզ դիմավորեց այն նույն մարդը և ընդարձակ, ծառաշատ ստվերոտ բակով ուղեկցեց մերս։ Տանտերը դիմավորեց ու ընդունեց մեզ շատ սովորական ու պարզ. «Բարով եք եկել։ Նստե՛ցեք»։ Ինչ-որ առանձնակի մի շքեղություն, աչքի զարնող շպար մի ճոխություն՝ նման բաներ չկային։ Ուշագրավ էր թերևս տարբեր չափերի բարձերի քանակը լայն թախտի վրա, որտեղ էլ բազմել է տանտերը։ Բայց գուտ այն բանից, թե ինչպես են կանայք վազվզելով սեղան զգում, ով ինչով է զբաղված, ով որտեղ է նստում, տան բազմամարդությունից, խնամված այգուց, և նույնիսկ հաճելի այս հովությունից՝ ակնհայտ երևում է, որ սա սովորական մի մեծ ընտանիքի պատկանող սովորական մի մեծ առանձնատուն չէ։ Սա տիրական տուն է, դաստակերտ՝ իր հին, կայացած ու կայուն, ավանդական հոգեկերտվածքով ու կենսակարգով։

Տանտերը՝ առանց սևեռվելու և պարտադրանքի, հյուրասիրում է մեզ և սահուն ու թեթև, մտերմիկ ու տնավարի վարում իր գրույցը։ Ինչի՞ շուրջն էր ընթանում գրույցը։ Առաջին հերթին նրան հետաքրքրում է, թե. «Հայաստանում ի՞նչ կա, Գեմիթրճյանը ո՞նց ա, գործերը լա՞վ են»։ Ե՛վ այդ, և՛ մյուս՝ նմանատիպ հարցադրումներում իսպառ բացակայում են հայրենիքից բռնի կտրված, խոցված ու նվաստացրած ազգային գիտակցությամբ անձին բնորոշ երանգները։ Ոչ։ Պարզապես տեղի ավատատեր իշխանը հետաքրքրվում է, թե ո՞նց է այնտեղ իր հարևանը։ Նա, բնական է, խրախուսում է Գարաբաղի հուշարձանների ուսումնասիրության ուղղությամբ

տարվող մեր աշխատանքները: Բայց, կրկին, հետաքրքիր ու նոր մի երանգ: Եթե, օրինակ, Մարտակերտում համարում էին, որ նման նախաձեռնությունները շատ կարևոր են ու օգտակար տեղի բնակչության համար՝ սեփական պատմությունն ու անցյալը ավելի լավ իմանալու առումով, ապա ավագ Մեդրյանից մենք լսեցինք այլ կարծիք:

- Մենք այստեղ ապրում ենք մեր հողի վրա և շատ լավ գիտենք այն: Դուք կարևոր բան եք անում: Որովհետև հայաստանցիներին է անհրաժեշտ առաջին հերթին ավելի շատ բան իմանալ հայկական հողի այս կտորի մասին: Շատ վաղուց մեր էս հողի անունը Վարդուտ է եղել: Հետո պարսիկները էդ բառը վերցրել ու ինքն իրենով թարգմանել, դարձրել են Գյուլիստան: Մենք էլ դրան՝ Գյուլիստանին ենք սովորել...

Նա պատմում է, թե ինչպես աղբբեջանցիները բերել իրենց վրաններն էին խփել Գյուլիստանից ոչ հեռու և ինչպես իր հրահանգով նրանց բավականին խիստ ձևով վռնդել են այնտեղից: Արդեն քանի՞ տարի, էլ չեն երևում: Ափսոսանքով նշում է, որ շրջանի «ներքևի մասում» աղբբեջանցիներին, համենայնդեպս, հաջողվել է որոշ տեղերում հիմնավորվել: Ու որքան ծավալվում է մեր գրույցը, այնքան ավելի ու ավելի է ցայտուն ձևով դրսևորվում ուշագրավ մեկ այլ բան. ի տարբերություն մեզ՝ Վանի, Կարսի, Էրզրումի և կորցրած մեր այլ վայրերից գաղթածների հետնորդներին, այս մարդու մոտ չկա, չի նշանակում Հայրենիքի ու Հողի կորստյան բարդույթը: Ոչ, նա պահել-պահպանել է նախնիների կողմից իրեն ժառանգած Հողը, իսկ այժմ էլ դրա տերն է: Տեր, ով զգում ու գիտակցում է իր պատասխանատվությունն ու պարտականությունները այդ հողի, նրա հետագա ճակատագրի հանդեպ: Անկախ այն բանից, թե ի՞նչ և ու՞մ իշխանությունն է դրսում: Իրենց մոտից քոչվոր-վրանավորներին արտաքսելուց նա անդրադարձ է կատարում դեպի 18-20 թվականները և պատմում, թե ինչի շնորհիվ այդ օրերի թուրքական արշավանքի ժամանակ կանխվել է գանձակահայության կոտորածը: Պարզվում է, տեղի բեկերը հասկացրել են եկածներին, որ «...այսօր դուք այստեղ եք, իսկ վաղը՝ ո՞վ գիտի: Եթե դուք հիմա իրականացնեք հայերի ջարդեր, ապա ձեզանից հետո Գետաշենի, Ոսկանապատի, Վերիշենի հայերը նույնը մեզ հետ կանեն»: Եվ ափսոսանքով ավելացրեց.

- Իսկ 15 թվին, այնտեղ չկարողացան կարգին դիմադրություն կազմակերպել: Դրա համար էլ այդքան կորուստ ունեցանք:

Մենք շփվում ու հարաբերվում էինք մեզ համար մինչ այդ լրիվ անհայտ և անծանոթ հայի տեսակի հետ: Առաջին անգամն էր, որ մենք շփվում էինք ոչ թե Հողը կորցրած և կարոտախտով այն գովերգող «դասական» մի հայի հետ, այլ իր Հողի հնատոհմ՝ ի բնե տիրոջ հետ: Մենք գտնվում էինք, մենք կենում էինք, թեկուզ և փոքրիկ, բայց...Թագավորությունում: Հայկական Թագավորությունում:

Անսառում գիշերները սառն են

...Երբ վրա հասավ 88-ը, ոչ մեկի մոտ էլ կասկած չկար, որ Շահումյանը նույնպես ոտքի է կանգնելու: 88-ի ամռանը շրջանը արդեն չէր ենթարկվում Ադրբեջանական ԽՍՀ կենտրոնական իշխանություններին: Կասկածից վեր էր մաս, թե ո՞վ է կազմակերպելու և գլխավորելու շահումյանցիների պայքարը: Բնականաբար՝ Մեդրյանները: Իսկ նրանց մեջ ճակատագրի ընտրությունը կանգ առավ Շահենի վրա: Նրա դերն ու մասնակցությունը այդ ազատագրական պայքարում՝ առանձին և շատ ծավալուն քննարկման կարիք ունի: Նշենք միայն, որ նա, երբ դեմ առ դեմ էր թուրքերի հետ, ջարդում էր նրանց ու կորզում հաղթանակներ՝ Գյուլիստանի մեյիքների լավագույն ավանդույթներին հավատարիմ: Բայց այս անգամ էլ, Հյուսիսային Արցախի օրինակով, ռուսները մեզ դաս տվեցին, որպեսզի համկարծ չմոռանանք երկրարյա դառը ճշմարտությունը առ այն, որ հայաթափված, հային բնավեր դարձրած տարածքը ունի մի բանաձևում. «Այստեղով ռուսն է անցել»: Սկզբից եղավ Գետաշենը՝ «Կուլցո» օպերացիայով: Ոչ շատ երկար ժամանակ անց, երբ ռուսները կողքի քաշվեցին, Շահումյանի մեր գինվորական միավորումները կրկին սկսեցին հաջողություններ արձանագրել: Ճանապարհը դեպի Գետաշեն բաց էր: Հիշում եմ, նույնիսկ առաջարկվում էր, որ համուն արդարության, ճիշտ կլինի, որ Գետաշենը ետ վերցնի հենց «Արաբո» ջոկատը: Բայց, շատ շտառով, 92-ի ամռանը կրկին խաղի մեջ մտան ռուսական տանկերն ու հրետանին և կանխվեց ոչ միայն Գետաշենի ետ վերցնելը, այլ գերեզմարկվեց ու ճզմվեց մաս Գյուլիստան-Շահումյանը: Տարածաշրջանից վերջնական հեռանալուց առաջ խորհրդային բանակի Կիրովաբադյան դիվիզիան կատարեց իր վերջին առաքելությունը: Այս անգամ էլ «Գոռի» օպերացիայի իրականացման միջոցով հայերից խլեց և թուրքերին նվիրեց Շահումյանը: Տեղի հայության նկատմամբ գոնե մի մարտում հաղթանակ չտարած, մշտապես գլխովին ջախջախված ու խայտառակ փախուստի դիմած ադրբեջանցիները՝ բառացիորեն ռուսների ուսերին նստած մտան Գյուլիստան: Եվ, ինչպես ավանդաբար ընդունված է իրենց մոտ, առաջին հերթին պայթեցրին ու ոչնչացրին տեղի եկեղեցին և Գյուլիստանի մեյիքների գերեզմանները:

Այդ աղետի իրական արմատներն ու պատճառների բացահայտումը մեր հնարավորություններից վեր է: Նման բանի մենք չենք էլ հավակնում: Դրա համար կա պետություն՝ իր քաղաքական ղեկավարությամբ: Բայց այդ իրողության հետ առնչվող ամոթալի և անվայել մի փաստի առնչությամբ խոսելն անհրաժեշտ է՝ արժանավոր մարդկանց հանդեպ հերյուրանքներ ու ստահող լուրեր տարածելու փորձերը կանխելու համար: Բանն այն է, որ երբ հանձնվեց Շահումյանը՝ 92-ի ամառվա մեր կորուստներից ամենամեծը և ցոր անվերադարձը, Հայաստանի իշխանությունները, չկարողանալով կատարվածի համար բացատրություն տալ սեփական ժողովրդին, մի կեղտոտ ու զզվե-

լի քարոզչական կոմպանիա հրահրեց Մեղրյանների դեմ. իբր թե, ամենի մեղավորը... նրանք են: Բայց Մեղրյանները դիմագրավեցին նաև այդ հարվածին և շարունակեցին «իրենց» պատերազմը՝ իրենց հողի համար: Հիշում եմ, այդ օրերին հանդիպեցի Շահենին և մի ինչ-որ ակնարկ արեցի, որպեսզի այդ բանբասանքները հանկարծ լուրջ չընդունի:

- Թքաա՛ձ,- ծիծաղելով ասած նա: Գործներիս նայենք: Եկել եմ համալրում եմ տանում: Թե կարող ես, տաք համազգեստ ճարի տղաներիս համար: Անտառում գիշերները սառն են:

Վերջին անգամ Մեղրյաններին հանդիպել եմ Երևանում, Շահենի թաղման ժամանակ: Չինավոր-դային՝ ինչպես և վայել է ազգին անվեհեր հայդուկապետ տված հորը, իրեն պահում էր ամուր և արժանապատիվ: Երբ արդեն Եռաբլուրից ետ էինք գալիս, չդիմացավ՝ թուլացավ:

- Շահենս զինվոր էր, ֆիդայի էր: Նրա տեղն ստեղ ա, իր ընկերների կողքին: Բայց ես հույսս չեմ կորցնում, որ ինձ թաղեն Գյուլիստանում:

Սակայն Շահենի զոհվելու հետ բոլորիս համար ավարտվեց նաև կռիվը Գյուլիստանի համար...

Հունիս, 1997թ. - հուլիս 2008թ.

ՀԵՏԳԻՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Բոլոր մեծ հումանիստները մարդկությանը ձգտում են համոզել, որ պատերազմը մարդկային խելքին ու բանականությանը բացարձակապես խորթ և օտար, մարդկային բուն էությունը հակառակ ու անընդունելի մի երևույթ է: Մարդկությունը և, որն ամենակարևորն է, այս աշխարհում նրա ճակատագիրը որոշողներն ու տնօրինողները՝ քաղաքական գործիչները, համաձայնվում են նրանց հետ: Բայց... միայն հեքթական դաժան պատերազմից հետո և ոչ շատ երկար ժամանակով: Նրանց ժամանակի հիմնական մասը ծախսվում է ոչ թե խաղաղությունը հաստատելու ու պահպանելու, այլ պատերազմ նախապատրաստելու վրա:

Պատերազմն է, ցավոք սրտի, և միայն պատերազմն է եղել և մինչ օրս էլ մնում քաղաքական վեճերի լուծման առավել և մեծ մասամբ միակ գործոն, իրական և իրագործելի միջոցը: Իսկ պատերազմի այլընտրանքը՝ բանակցությունները (բնականաբար՝ «խաղաղ»), սկսվում են միայն ու միայն այն բանից հետո, երբ պատերազմը շիկացած երկաթով կայրի ու կանցնի միլիոնավոր մարդկանց ու ամբողջ ժողովուրդների կյանքով ու ճակատագրով: Եվ որքան էլ դա տխուր է ու ցավալի, բայց հենց «նորին զարիուրանք» Պատերազմն է կանխորոշում հասարակական-քաղաքական գործընթացների ուղղվածությունը, որոշում այս կամ այն ազգի և ժողովրդի իրական տեղն ու դերը այդ գործընթացներում:

Աշխարհում չկա մի ժողովուրդ, ով պատերազմ սիրի: Այն աղետաբեր է, կործանարար: Բայց բազում անգամ աղետաբեր է և կործանարար, երբ տվյալ ազգը պատրաստ չի լինում դրան: Ավելին, ակնհայտորեն ցուցադրում է պատերազմից խուսափելու իր ձգտումը: Այդ պահից և վեր այդ ազգը դադարում է լինել տերը այն հողի, որի վրա ապրում է: Այդ հողին տեղ դառնալուն սկսում են հավակնել ուրիշները: Իսկ իր հողի վրա ապրող «խաղաղասեր» ժողովուրդը այդ պարագայում կար ըջվում-օտարվում է այդ հողից, կամ էլ պարզապես տրորվում-գնում, ոտնատակ լինում այդ հողի համար վեճի բռնված օտար բանակների ուռքի տակ:

Ղարաբաղյան պատերազմը մեզ պարտադրված էր մեր հարևանի կողմից: Մեզ համար, մեր կողմից մղվող այդ պատերազմն իր բոլոր «չափորոշիչներով» ու «ստանդարտներով», արդարացի էր, ազատագրական: Եվ այն բոլոր տարածքները, ուր այսօր կանգնած է հայ զինվորը, դրանք ո՛չ «խլված», ո՛չ «գրավյալ», ո՛չ «անվտանգության ապահովման նկատառումով» և ո՛չ էլ նույնիսկ «պատերազմի իրավունքով» նվաճած տարածքներ են: Դա, պարզապես, մեր Հայրենիքի ազատագրված մի մասն է: Եվ ցանկացած բանակցությունների ու քաղաքական բորսաներում ընթացող սակարկությունների ընթացքում մենք պարտավոր ենք հիշել ու հստակ գիտակցել, որ, երբ մեզ առաջարկում են հրաժարվել պատերազմում մեր ձեռք բերածի մի մասից, դրանով ակնհայտ փորձ է արվում հեքթական անգամ մեզանից օտարել-խլել մեր Հայրենիքի մի մասը: Գուցե ժամանակն է կանխել մեր հանդեպ ձևավորված նման մոտեցումները: Մեր կողմից զիջելու բոլոր չափ ու սահմաններն արդեն վաղուց են անցել:

Երբեմն ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ մեր ժողովուրդը չի սիրում ոչ միայն պատերազմը՝ որպես այդպիսին, այլ չի սիրում նաև պատերազմում նվաճած իր սեփական հարթամակը, ասես զլանում է տեղ կանգնել պայքարի միջոցով իր ձեռք բերածին: Դա անթույլատրելի է: Ճանապարհի կեսից հոգնողներն ու փոշմանողները շատ անողոր ձևով դուրս են շարսվում դեպի ճամփեզր:

Ո՞վ կարող է ընդդիմանալ ու հերքել, որ բոլոր հարևանների հետ պետք է ապրել խաղաղ ու համերաշխ: Դա բացահայտ ճշմարտություն է: Բայց միայն այն դեպքում, երբ հարևաններից ամեն մեկն ապրում է իր տանը...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարսը տեսնել ու ե՞տ դառնալ... -----	5
Հանրապետության օրհներգը -----	22
«Պոստը» -----	27
Երկու մոսկվացի՝ երկու բանակ -----	29
«Խորհրդային Ադրբեջան» լաստանավը -----	32
Մեկ այլ Ղարաբաղ... -----	34
Մեր Վիգեն-Մուսլիմը -----	45
Գրոշը Չինարի կատարին -----	57
Մեր հարսնացուն -----	61
Դոկտոր Լիան -----	67
Գյուլիստան-Շահումյան, կամ Ջինավոր-Դայու	
Հայկական Թագավորությունը -----	74
Հետգրության փոխարեն -----	86

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԿ ԱՅԼ ՂԱՐԱԲԱԴ...

Նկարիչ՝
Հրատ. խմբագիր՝
Տեխ. խմբագիր՝
Համակարգչային էջադրող՝

Վագգեն Պահլավունի-Թադևոսյան
Գայանե Կնյազյան
Արարատ Թովմասյան
Գևորգ Մահակյան



«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան- 0009, Մաշտոցի պող. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
Հեռ. / ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am